ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA 2018/28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2018

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ՊՆ «Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան» պետական հիմնարկի (այսուհետ՝ ՌՀ կամ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ուսումնական հաստատության նախաձեռնությամբ և նրա կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած է եղել 4 տեղացի և 1 միջազգային փորձագետից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանն, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, եվրոպական և հայաստանյան փորձագետների առջև դրված էր երկու խնդիր՝

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
2) իրականացնել փորձագիտական գնահատում՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու բուհի հավակնությունների տեսանկյունից:

Սույն զեկույցն անդրադառնում է ՌՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությանն՝ ըստ պետական հավատարմագրման չափանիշերի ու չափորոշիչների, և գործընկերային գնահատմանը՝ ըստ ԵԲԿՏ ինտեգրվելու բուհի հավակնությունների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍԱՆԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՌՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 17

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 17

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 19

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 22

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 22

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 24

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 26

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 29

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 33

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 37

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 43

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 48

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 52

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 55

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 58

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 62

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 65

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 67

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 70

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 71

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 72

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՌՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանը բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունը ժամանակակից միջազգային չափանիշների հետ համադրելի և գիտակրթական զարգացումներին համահունչ, կարողություններով և անհրաժեշտ գիտելիքներով օժտված ռազմական մասնագետների պատրաստումն է բակալավրի և մագիստրոսի որակավորումներով՝ մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման միջոցով: Փորձագիտական խումբը նաև հաշվի է առել, որ ՌՀ-ն ռազմավարական նշանակություն ունի ՀՀ ռազմական ոլորտի համար: Միևնույն ժամանակ, ՌՀ-ն ՀՀ պաշտպանության նախարարության անմիջական ենթակայության տակ գտնվող կառույց է և մի շարք հարցերում չունի որոշումների կայացման ազատություն[1]: Փորձաքննության իրականացման ընթացքում փորձագետների կողմից հաշվի առնված կարևորագույն գործոններից է եղել նաև այն, որ ՌՀ-ն զուգակցում է մասնագիտական ուսումնական հաստատության և զորամասի կարգավիճակները՝ դրանից բխող միջավայրային, ընթացակարգային և այլ առանձնահատկություններով:

ՌՀ արտաքին և ներքին շահակիցներն ունեն գրեթե միասնական պատկերացում ՌՀ առաքելության մասին, ինչը վկայում է, որ ՌՀ-ի դերը հասարակությունում փաստացի հստակ է և ձևավորված, սակայն առաքելության և տեսլականի միասնական հստակ ձևակերպումը ՌՈՒՀ-ում դեռևս չկա: ՌՈՒՀ-ի 2015-2020թթ. զարգացման հեռանկարային պլանը կազմված է ոչ թե ռազմավարական ծրագրի, այլ պլան-ժամանակացույցի ձևաչափով: [redacted]

ՌՀ կառավարման համակարգում զուգակցված են զորամասային և համալսարանական համակարգերի տարրեր. կառավարման օղակների միջև առկա է հստակ աստիճանակարգվածություն, սակայն առկա են նաև ուսումնական հաստատություններին բնորոշ կոլեգիալ մարմիններ, ինչպիսիք են՝ գիտական խորհուրդը և ուսումնամեթոդական խորհուրդները: ՌՀ-ում յուրաքանչյուր ստորաբաժանման և աշխատակցի պարտականությունները հստակ ամրագրված են համապատասխան փաստաթղթերում: Կառավարման կազմակերպական կառուցվածքում երբեմն իրականացվում են փոփոխություններ, սակայն դրանք ոչ միշտ են բխում կառավարման համակարգի արդյունավետության վերլուծությունից: [redacted]

ՌՀ-ում կարևորվում են պլանավորման գործընթացը և պլաններին հետևելը, որն ապահովվում է ներքևից վերև հաշվետվողականության հստակ սահմանված մեխանիզմների գործադրմամբ: [redacted] տեղեկությունների հրապարակման ներկայիս մոտեցումը չի նպաստում ՌՀ վերաբերյալ հասարակական կարծիքի բարելավմանն, ինչպես նաև սահմանափակում է ՌՀ կողմից ֆոնդահայթայթման միջոցառումների իրականացման հնարավորությունները:

[1] Նախադասությունը վերաշարադրվել է համալսարանի կողմից ներկայացված արձագանքից հետո:

ՌՀ-ում իրականացվող կրթական ծրագրերը լիովին համահունչ են ՌՀ-ի՝ ՀՀ ԶՈՒ համար հրամանատարական կադրեր պատրաստելու առաքելությանը: Ծրագրերն ունեն առավելապես կիրառական ուղղվածություն: Կրթական ծրագրերը մշակելիս՝ ՌՀ-ն սահմանել է դրանց նպատակներն ու խնդիրներն, ակնկալվող վերջնարդյունքները, որոնք համահունչ են ՀՀ որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչներին: Ծրագրերում նաև ներառված են ընդունելության պահանջները, ուրվագծված են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները: Ինչ վերաբերում է ծրագրերի շրջանավարտների կարիերային, ապա որպես այդպիսին դիտարկվում է միայն ծառայությունը ՀՀ ԶՈՒ-ում:

ՌՀ-ում մշակվել է «ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և սովորողների գիտելիքների գնահատման կարգը», սակայն կրթական ծրագրերի շրջանակներում կուրսանտների և դասավանդողների միջազգային շարժունությունը սահմանափակ է օբյեկտիվ պատճառներով՝ զինված ուժերում ռազմական տեխնիկայի և սպառազինության տարբերություններ, ռազմական ոլորտում փորձի փոխանակման վտանգներ, առաջադրված խնդիրների տարբերություններ, և սուբյեկտիվ պատճառներով՝ ծրագրերի բենչմարքինգի իրականացման, փոխանակման ծրագրերի առկայության [redacted]

ՌՀ-ում նկատելի է կուրսանտների գնահատման գործընթացները հնարավորինս հստակ հիմքերով իրականացնելու ձգտում: Դա վերաբերում է թե քննությունների և ամփոփիչ ատեստավորման կազմակերպմանը, թե ընթացիկ գնահատմանը: ՌՀ-ում առկա են գնահատման քանակապես չափելի նորմացույցներ և մեթոդական ցուցումներ առանձին դասընթացների մակարդակում: Գնահատականների բողոքարկման հիմքը ՀՀ ԶՈՒ կանոնակարգերն են, սակայն բողոքարկման դեպքեր ՌՀ-ում չեն եղել, ինչի պատճառները ՌՈՒՀ-ը դեռևս չի վերլուծել:

Ամբիոններում առկա է կրթական ծրագրերը շարունակաբար կատարելագործելու միտում. կրթական ծրագրերը ՌՀ-ն պարբերաբար վերանայում է՝ հաշվի առնելով ՀՀ ԶՈՒ արձագանքները և փոփոխություններն, ինչպես նաև կուրսանտների և ունկնդիրների շրջանում անցկացվող հարցումների արդյունքները:

ՌՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման և ընտրության հստակ մեխանիզմներ: Այնուամենայնիվ, դրանց արդյունավետության ուսումնասիրություն ՌՈՒՀ-ը չի կատարել: ՌՀ-ում իրականացվում է կուրսանտների կարիքների պարբերական ուսումնասիրություն՝ հարցումներ անցկացնելու միջոցով, գործում են նաև կուրսանտներին լրացուցիչ կրթական խորհրդատվություն տրամադրող մեխանիզմներ, վարչական աշխատակազմին դիմելու կանոնակարգը և այլն:

[redacted]

Կրթական ծրագրերում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ձևակերպված են ընդհանուր կերպով. պրոֆեսորադասախոսական կազմի 50%-ից ոչ պակասը պետք է ունենա գիտական աստիճան կամ կոչում և/կամ համապատասխան ոլորտում երկարամյա զինվորական ծառայության ստաժ: Ոլորտում գիտական աստիճան և կոչում ունեցող մասնագետների պակասի պայմաններում, թերևս, պահանջների ձևակերպման նման մոտեցումը պայմանավորված է օբյեկտիվ հանգամանքներով, [redacted]:

Պրոֆեսորադասախոսական կազմի բեռնվածությունը ՌՀ-ում չի վերլուծվում, ինչն առաջացնում է խիստ ծանրաբեռնված լինելու վտանգ, քանի որ բացի դասախոսական գործունեությունից, համաձայն անհատական պլանների, նախատեսված են ինքնակատարելագործմանն ուղղված աշխատանքներ, ինչպես նաև լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություն կուրսանտների համար: ՌՀ-ում առկա են պրոֆեսորադասախոսական կազմի պարբերական գնահատման և դասավանդման բարելավման համար սահմանված մեխանիզմներ, ինչպիսիք են դասալսումները, հարցումներն, ուսումնամեթոդական խորհուրդների գործունեությունը: Սկսնակ դասավանդողներին ևս տրամադրվում է մեթոդական խորհրդատվություն:

Հետազոտությունների ոլորտում ՌՀ-ի հավակնությունների և հետաքրքրությունների շրջանակը դեռևս հստակ ձևավորված չէ: [redacted] ինչը նվազեցնում է հետազոտական գործունեություն ծավալելու ՊԴ կազմի և ուսումնառողների շահագրգռվածությունը, վտանգում է ուսումնառողների շրջանում հետազոտական հմտությունների և կարողությունների ձևավորումը: Հետազոտական գործունեության արդյունքների միջազգայնացումն ինստիտուցիոնալ մակարդակում ՌՈՒՀ-ի կողմից չի կարևորվում: [redacted]

Ուսումնական միջավայրը ՌՀ-ում զորամասային է, ինչը մի կողմից առաջացնում է սահմանափակումներ (արտաքին տեղեկատվական ռեսուրսների օգտագործման, ակադեմիական ազատությունների դրսևորման), մյուս կողմից՝ ի օգուտ կուրսանտի է, քանի որ միջավայրը հնարավորինս համապատասխանում է շրջանավարտների հետագա ծառայության անցկացման միջավայրին:

Ներկայում ՌՀ-ում առկա չէ ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիա, սակայն ֆինանսավորման կրճատման վտանգ դա չի առաջացնում: ՌՀ-ի ֆինանսավորման կայուն աղբյուրը պետական բյուջեն է. ՀՀ պաշտպանության նախարարությունը միջոցներ է հատկացնում ՌՀ-ին՝ ըստ ներկայացված նախահաշիվների, որոնք արտահայտում են ֆինանսական և նյութական ռեսուրսներին առնչվող ՌՀ կարիքները: ՌՀ-ի համար հասանելի են նաև ՀՀ ԶՈՒ և ՊՆ նյութական ռեսուրսները: ՌՀ-ի տարածքը հագեցած է կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով: Լսարանները կահավորված են՝ ըստ դասընթացների, այսինքն՝ սենյակները ոչ թե կցված են կուրսանտների խմբին, և այնտեղ անցկացվում են տարբեր դասընթացներ, այլ կցված են որոշակի դասընթացի, ինչը թույլ է տալիս բարձրացնել ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Նյութական ռեսուրսներով բավարարվածությունը ՌՀ-ում գնահատվում է շահակիցների շրջանում իրականացվող հարցումների և հետադարձ կապի այլ մեխանիզմների հիման վրա: [redacted]

ՌՈՒՀ-ն ունի հաշվետվողականության հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր համալսարանի ներսում և ՊՆ-ին: ՌՈՒՀ-ի կողմից հասարակությանը հաշվետվողականությունը հիմնականում միջնորդավորված է ՊՆ-ի միջոցով: Ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասարակությանը հասանելության սահմանափակումները հաճախ օբյեկտիվորեն պայմանավորված են տեղեկատվության գաղտնիությամբ: Սակայն թափանցիկ չեն նաև այն ընթացակարգերն ու գործընթացները, որոնք, թերևս, չեն պարունակում ռազմական գաղտնիք կամ երկրի անվտանգությանը սպառնացող դրույթներ և կարող են հրապարակվել: Հասարկության հետ կապի բազմազան և արդյունավետ գործիքների կիրառման ուղղությամբ ՌՀ-ի կողմից ոչ բավարար ջանքերի գործադրումը կարող է խոչնդոտել ՌՈՒՀ-ի վերաբերյալ առավել ընգրկուն և ամբողջական պատկերացման ձևավորմանը և հանրության շրջանում նրա դրական կերպարի ամրապնդմանը: ՌՀ-ն ունի կայուն հետադարձ կապի մեխանիզմներ ՊՆ-ի, ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումների և շրջանավարտների հետ՝ ստեղծելով ՌՈՒՀ-ի գործունեության բարելավման օբյեկտիվ հեռանկարներ: Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ հասարկության հետ կապի մեխանիզմները կայուն չեն, ինչը կարող է հանգեցնել ՌՈՒՀ-ի գործունեության կտրվածությանը հասարակական զարգացումներից: ՌՀ-ն դեռևս չունի սեփական կայքէջ:

ՌՀ զարգացման հեռանկարային պլանում առկա ձևակերպումները չեն արտացոլում ՌՈՒՀ-ի միջազգայնացման շրջանակն ու հավակնությունները: Ոլորտը կանոնակարգող քաղաքականությունների և ընթացակարգերի բացակայությունը ռիսկի տակ է դնում համակարգված աշխատանքների իրականացումը: ՌՀ-ն համագործակցում է տեղական և

միջազգային կազմակերպությունների սահմանափակ շրջանակի հետ, համագործակցության պլանավորված միջոցառումները ոչ միշտ են իրականացվում, չիրականացված միջոցառումների համար ընդունվում են համապատասխան որոշումներ[2]: Կուրսանտների շարժունության դեպքերը փոքրաթիվ են և չպլանավորված, դասախոսների շարժունություն ՌՈՒՀ-ում առկա չէ: [redacted] օտար լեզվի իմացության բավարար մակարդակ իր ներքին շահակիցների շրջանում: Թեև միջազգայնացմանն ուղղված որոշ քայլեր ձեռնարկվում են, սակայն ՌՈՒՀ-ը դեռևս չունի փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր:

ՌՀ-ն ունի որակի ապահովման՝ ռազմական ոլորտի առանձնահատկություններից բխող ավանդույթներ: ՈԱ քաղաքականությունը և ընթացակարգերն ամրագրված են հիմնարար փաստաթղթերում, մասնավորապես՝ ՈԱ ձեռնարկում: ՌՀ-ի բոլոր աշխատակիցները քաջատեղյակ են ՈԱ ձեռնարկի դրույթներին՝ գիտակցելով համալսարանի արժեքներն ու ՈԱ գործընթացների կարևորությունը: ՈԱ ներքին գործընթացների կառավարման համար ՌՀ-ն հատկացնում է բավարար մարդկային ռեսուրսներ: Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում: ՈԱ գործիքակազմի արդյունավետության վերլուծությունների բացակայությունը հնարավորություն չի տալիս օբյեկտիվորեն գնահատելու ՈԱ գործընթացների ազդեցությունը կրթական ծրագրերի և համալսարանի գործունեության բարելավման վրա: Որակի ապահովման համակարգի գնահատման և վերանայման համակարգված գործընթացի բացակայությունը պայմանավորված է նրանով, որ ՌՀ-ում որակի ներքին ապահովման համակարգը դեռևս կայացման փուլում է:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1) լիազորությունների, պարտականությունների և պատասխանատվությունների հստակ սահմանվածություն ՌՈՒՀ-ի բոլոր օղակների համար:
2) Ներքին հաշվետվողականության ընդգրկուն համակարգ:
3) Կրթական գործընթացների բարելավման համար ՀՀ ԶՈՒ և ՊՆ կողմից տրամադրվող տեղեկությունների կայուն հոսքի առկայություն:
4) Կուրսանտների կարիքների վերհանման մեխանիզմների առկայություն:
5) ՀՀ ԶՈՒ-ում շրջանավարտների զբաղվածության կայուն երաշխիքներ:
6) Լրացուցիչ խորհրդատվություն ստանալու համար դասավանդողների հասանելիություն:
7) Անվճար կրթությամբ պայմանավորված ՌՀ գրավչություն:
8) Գնահատման հստակ չափանիշների առկայություն:
9) Դասախոսական կազմի համալրվածություն փորձառու սպա-դասախոսներով:
10) Կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնանյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների առկայություն, ՀՀ ԶՈՒ և ՊՆ ռեսուրսների հասանելիություն:
11) Ուսումնական և ապագա զինվորական ծառայության միջավայրերի համապատասխանություն:
12) Ֆինանսական միջոցներով կայուն ապահովվածություն:
13) Գրեթե բոլոր գործընթացների կազմակերպման համար համապատասխան ընթացակարգերի առկայություն:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1) զինվորական և համալսարանական բաղադրիչների հստակ տարանջատման բացակայություն կառավարման գործընթացներում:

---

[2] Նախադասությունը վերաշարադրվել է համալսարանի կողմից ներկայացված արձագանքից հետո:

2) ՌՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ հավաքագրված տեղեկությունների որակական վերլուծությունների պակաս:
3) Շրջանավարտների կարիերայի զարգացման այլընտրանքների սահմանափակություն,
4) Կուրսանտական կառույցների ինքնավարության պակաս:
5) Գիտական կոչումներով և աստիճաններով դասախոսական կազմի ցածր տեսակարար կշիռ:
6) Աշխատանքի վարձատրության՝ ըստ գիտական աստիճանների և կոչումների տարբերակվածության բացակայություն:
7) Հետազոտական ոլորտում ՌՈՒՀ-ի հետաքրքրությունների և հավակնությունների չձևավորվածություն, հետազոտական գործունեությունը խթանող մոտիվացիոն հստակ մեխանիզմների բացակայություն:
8) Ռեսուրսների կառավարման ինքնուրույնության սահմանափակություն և կախվածություն ՀՀ ՊՆ հատկացումներից:
9) ՌՈՒՀ-ի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի մեծ թիվ և դրանց համակարգվածության պակաս:
10) Հանրությանը հասցեագրված տեղեկությունների սահմանափակվածություն և սեփական տեղեկատվական հարթակի բացակայություն:
11) Արտաքին կապերի հաստատման հարցում ինքնուրույնության պակաս, միջազգային փոխանակման և հետազոտական ծրագրերի բացակայություն:
12) Ներքին շահակիցների օտար լեզուների իմացության ցածր մակարդակ:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Առաքելությունը և նպատակները

1. Հստակեցնել և ամրագրել ՌՀ առաքելությունը և տեսլականը՝ տարբեր շահակիցների հետ քննարկումների հիման վրա: Աստիճանակարգելով տեսլականից բխեցնել ՌՀ հեռանկարային, միջնաժամկետ, կարճաժամկետ նպատակներն ու խնդիրները՝ դարձնելով դրանք ՌՀ յուրաքանչյուր աշխատակցի գործունեության ուղենիշ:
2. Ներդնել ռազմավարական նպատակների իրականացման արդյունավետության գնահատման և բարելավման գործիքներ (ցուցիչներ):

Կառավարումը և վարչարարությունը

3. Փորձելով հնարավորինս տարանջատել զինվորական և համալսարանական գործընթացներն, այդ գործընթացների վերաբերյալ որոշումներ կայացնողների դերերն՝ ապահովել համալսարանական կառավարման կոլեգիալ մարմինների ներկայացուցչականություն (կուրսանտներ և այլ շահակիցներ) և լիարժեք, անկաշկանդ գործունեություն՝ բացառելով կոչումների և պաշտոնների տարբերությունների ազդեցությունը:
4. Ձևավորելով տեղեկատվության կառավարման քաղաքականություն՝ իրականացնել արտաքին և ներքին միջավայրերից ստացվող տեղեկությունների քանակական և որակական վերլուծություններ, ինչպես նաև նախատեսել տեղեկատվության կառավարման արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Մասնագիտության կրթական ծրագրերը

5. Դասավանդման և ուսումնառության մեթոդներին վերաբերող ապակենտրոնացված ընթացակարգերն ամբողջականացնել մեթոդների ընտրության միասնական քաղաքականությամբ:
6. Ուսումնասիրել գնահատականների բողոքարկման առկա մեխանիզմների արդյունավետությունը և դիտարկել այլընտրանքային մեխանիզմների ներդրման հնարավորություններ:
7. Լրամշակել կրթական ծրագրերը կուրսանտների և դասավանդողների շարժունությանը նպաստող տարրերով՝ դիտարկելով ուսումնական այլ

հաստատությունների կրթական ծրագրերի հաջողված փորձի ներդրման հնարավորությունները:

Ուսանողները

8. Ներդնել ընդունելության վրա ազդող գործոնների վերլուծության և կուրսանտների հավաքագրման գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ և փոխկապակցել դրանք:
9. Բարձրացնել Սերժանտական խորհրդի գործունեության արդյունավետությունը՝ վերջինիս շնորհելով առավել մեծ ինքնավարություն և խորհրդում ներգրավելով աղջիկ ներկայացուցիչներ:
10. Մշակել կուրսանտների կարիերային նպաստող առավել ունիվերսալ մեխանիզմներ, ինչը թույլ կտա կուրսանտների հետագա կարիերան չսահմանափակել միայն ԶՈՒ-ում ծառայությամբ՝ առաջարկներ ներկայացնելով ՊՆ-ին:
11. Ներդնել կուրսանտների շրջանում գիտահետազոտական աշխատանքի կատարումը մոտիվացնող մեխանիզմներ:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

12. Դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումները բխեցնել բացահայտված կարիքներից. դիտարկել հեռավար կամ առցանց կրթության հնարավորությունները՝ որպես դասավանդողների կատարելագործման միջոցառումների այլընտրանք:
13. Առաջարկներ ներկայացնել ՀՀ ՊՆ՝ գիտական աստիճանների կամ կոչումների դեպքում վարձատրության տարբերակված համակարգի ներդրման ուղղությամբ:
14. Վերլուծել դասավանդողների ծանրաբեռնվածության արդյունավետությունը:
15. Վարել այնպիսի կադրային քաղաքականություն, որ յուրաքանչյուր առարկայի դասավանդող ունենա անհրաժեշտության դեպքում իրեն փոխարինող դասախոս:

Հետազոտությունը և զարգացումը

16. Մշակել հետազոտական ոլորտում ՌՈՒՀ-ի հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն, ոլորտի զարգացմանը միտված քաղաքականություն և ընթացակարգեր՝ որպես տեսլական ունենալով ռազմական ոլորտի արդիականացումը: Հետազոտական առաջնահերթություններ և թեմաներ սահմանելիս ապահովել թեմաների առաջանցիկությունը:
17. Վերանայել ՌՀ կազմակերպական կառուցվածքում պարտականությունների բաշխումը՝ հնարավորինս բացառելով հետազոտական գործընթացների կազմակերպման համար պատասխանատու աշխատողների ծանրաբեռնվածությունն այլ բնույթի գործառույթներով:
18. Ներդնել ՊԴԿ-ի հետազոտական աշխատանքով զբաղվելուն նպաստող մոտիվացիոն մեխանիզմներ՝անհրաժեշտության դեպքում առաջարկներ ներկայացնելով ՊՆ-ին:
19. Ձեռնարկել միջոցառումներ՝ ակտիվացնելու դասախոսների և ուսանողների համատեղ հետազոտական ծրագրերը:
20. Իրականացնել հետազոտությունների ընթացքի և արդյուքների մշտադիտարկում և դրանց արդյունավետության գնահատման վերլուծություններ:
21. Մշակել հետազոտության ոլորտում գրագողության կանխարգելմանն ուղղված ընթացակարգեր և ներդնել համապատասխան մեխանիզմներ:
22. Ձեռնարկել միջոցառումներ հետազոտական գործընթացի միջազգայնացման ուղղությամբ, մշակել ազդեցության գործակցով ամսագրերում հրապարակումները խթանող մեխանիզմներ:
23. Կիրառել հետազոտական արդյունքներն ուսումնական գործընթացում ներդնելու կայուն մեխանիզմներ՝ գնահատելով այդ մեխանիզմների արդյունավետությունը:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

24. Մշակել կայուն ֆոնդահայթայթման մեխանիզմներ՝ անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության և ֆինանսական ինքնուրույնության մակարդակները բարձրացնելու նպատակով:
25. Պարզեցնել փաստաթղթերի համալիրը՝ տեղեկությունների մատչելիության բարձրացման նպատակով, օրինակ՝ մշակել կուրսանտի ուղեցույց և այդ ուղեցույցում մեկտեղել կուրսանտին տրվող բազմաթիվ փաստաթղթերը:
26. Ընդլայնել արտաքին տեղեկատվական ռեսուրսները և դրանց հասանելիությունը՝ ստեղծելով հնարավորություններ անդամակցելու հայաստանյան և միջազգային գիտահետազոտական ցանցերին:
27. Ուսումնասիրել և ըստ հնարավորության գործարկել հատուկ կարիքներ ունեցողների համար նախատեսված ենթակառուցվածքների ներդրման հնարավորությունները:
28. Ռեսուրսներից բավարարվածության քանակական գնահատմանը զուգահեռ վերլուծել դրանցից ոչ լիարժեք բավարարվածության պատճառները:

Հասարակական պատասխանատվությունը

29. Մշակել և ներդնել հասարկության առջև պարբերական հաշվետվողականության մեխանիզմներ և ընթացակարգեր՝ պարբերաբար գնահատելով դրանց արդյունավետությունը:
30. Ներդնել հասարակության լայն շերտերի հետ հետադարձ կապի ապահովման անմիջական և գործուն մեխանիզմներ՝ միաժամանակ իրականացնելով դրանց արդյունավետության գնահատում:
31. Հասարկությանը տրամադրել առավել թափանցիկ և համապարփակ տեղեկատվություն՝ չխախտելով գաղտնիության ռեժիմի պահանջները,
32. Նպատակաուղղել լրատվական, գովազդային միջոցները (այդ թվում՝ համացանցային) համալսարանի դրական կերպարի ամրապնդմանը, հասարակական վարկանիշի և տեսանելիության բարձրացմանը:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

33. ՊՆ-ի հետ համագործակցելով մշակել արտաքին կապերի քաղաքականություն՝ սահմանելով միջազգայնացման հավակնություններն ու շրջանակը և շեշտադրելով միջազգային համագործակցությունը կրթական գործընթացի և կրթական ծրագրերի մակարդակում, ինչպես նաև ընդլայնելով ՌՀ անկախությունն օտարերկրյա համալսարանների հետ ակադեմիական համագործակցության տեսնակյունից:
34. Դիտարկել արտաքին ֆինանսավորմամբ գիտահետազոտական ծրագրերի համար այլ հաստատությունների հետ համատեղ դիմումներ ներկայացնելու հնարավորությունները՝օտարերկրյա հաստատությունների հետ գիտական համագործակցության շրջանակն ամրապնդելու նպատակով:
35. Ստեղծել նախապայմաններ շարժունության և միջազգային համագործակցության համար, մասնավորապես՝ զարգացնելով անգլերեն լեզվի իմացությունը ՌՀ-ում և մշակելով օտար լեզուներով հասանելի պաշտոնական կայք:

Որակի ներքին ապահովումը

36. Վերանայել ՌՀ կազմակերպական կառուցվածքում պարտականությունների բաշխումը՝ հնարավորինս բացառելով ՈԱ գործընթացների համար պատասխանատու աշխատողների ծանրաբեռնվածությունն այլ բնույթի գործառույթներով:
37. Մշակել և ներդնել ՈԱ համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմներ՝ ՈԱ ներքին համակարգի արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով:
38. Բարձրացնել ՌՈՒՀ-ի գործընթացների որակի վերաբերյալ տեղեկությունների թափանցիկությունը՝ հասանելի դարձնելով ինքնավերլուծությունը և/կամ այլ վերլուծություններ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՌՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Միջազգային փորձագետը հույս է հայտնում, որ ընդհանուր զեկույցի այս հատվածը փորձագիտական զեկույցի ամբողջական տարբերակի հետ միասին կառուցողական կերպով կօգտագործվի ի նպաստ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի զարգացմանը:

Դիտարկումներ.

I. Առաքելությունը և նպատակները

Համալսարանի կարգախոսը՝ «Կրթությունը ծառայության միջոցով», իրականացվում է իր զարգացման պլանի միջոցով՝ գլոբալ կրթական բարեփոխումների, ներառյալ՝ ՀՀ երկարաժամկետ զարգացման նպատակների ու խնդիրների իրականացման համատեքստում ռազմական կրթության ոլորտում առկա մարտահրավերներին դիմակայելու համար:

Համալսարանն իր առաքելությունն իրականացնում է իր ռազմավարական նպատակների և խնդիրների համաձայն, որոնք ամրագրված են զարգացման հեռանկարային պլանում և ՀՀ ԶՈՒ 2016-2020թթ. զարգացման պլանում: Համալսարանն ուշադրություն է դարձնում ՈԱՇ-ի և որակավորումների եվրոպական շրջանակի հետ համալսարանի գործունեության համահունչության ապահովմանը (6-րդ և 7-րդ մակարդակներ):

Լինելով ռազմական ուղղվածություն ունեցող հաստատություն՝ ռազմական համալսարանը ներդրել է մեխանիզմներ և ընթացակարգեր՝ գնահատելու ռազմավարական նպատակների իրականացման արդյունավետությունն ու առաջընթացը, որտեղ հաշվի է առնվում նաև ներքին ու արտաքին շահակիցների կարծիքները: Ինչևէ, այս մեխանիզմները ավելի շատ կենտրոնանում են հաշվետվությունների, քան առաքելության իրականացման իրական և արդյունավետ գնահատման վրա: Հետագա զարգացման համար կարևոր է, որ համալսարանի ողջ կազմը (ակադեմիական և վարչական) կիսի առաքելությունում սահմանված արժեքները, ոչ թե ընդունի առաքելության ձևակերպումը որպես հրաման: Այս առումով հարկավոր է իրականացնել վերապատրաստումներ/ դասընթացներ ակադեմիական և վարչական կազմերի համար:

Համալսարանի առաքելության վերաբերյալ իրազեկության ցանկալի մակարդակին հասնելու համար կարևոր է, որ ՌՀ ներկայացուցիչները մասնակցեն ՀՀ ԶՈՒ զարգացման պլանի մշակմանը, որից էլ բխում է ՌՀ առաքելությունը: Մեկ այլ կանոր խնդիր է միջազգային կազմակերպությունների (ՀԿ-ներ և պետական կազմակերպություններ) ներգրավումը ՌՀ առաքելության կազմման գործընթացում: Այս անհրաժեշտությունը բխում է XXI դարի անվտանգ միջավայրի ապահովման վերլուծությունից, որը ապացուցում է, որ ոչ մի երկիր ժամանակակից աշխարհում չի կարող ապահովել իր անվտանգությունն ինքնուրույն, հետևապես՝ ոչ ռազմական դերակատարություն ունեցող անձանց և միջազգային կառույցների մասնակցությունը անվտանգության ապահովման գործընթացում պարտադիր է:

II. Կառավարումը և վարչարարությունը

Վարչարարության ոլորտում համալսարանի նպատակներից է զարգացնել և բարելավել կառավարման համակարգն անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների միջոցով: Թեև համալսարանի ղեկավար մարմիններն ապահովում են ղեկավարման նորմերի պահպանումը կառավարման բոլոր մակարդակներում, այդուհանդերձ թվում է, թե համալսարանը տուժում է իր խիստ ռազմական կանոններից, որոնք խոչընդոտում են կառավարման ժողովրդավարական մեխանիզմների զարգացումը:

Համալսարանի կառավարման համակարգի, թափանցիկության, հաշվետվողականության, հրապարակայնության և վերահսկման գործընթացների որակի բարելավումը պետք է բխի ժողովրդավարական կառավարումից, քանի որ այս գործոնը կարևոր դեր է խաղում համալսարանի զարգացման, մասնավորապես՝ հետազոտական և գիտական բնագավառների զարգացման գործում:

Որոշումների միանձնյա ընդունումն առաջ է բերում և՛ առավելություններ, և՛ թերություններ: Մի կողմից ռազմական կանոնակարգերով և օրենքներով սահմանված խիստ կանոնները հնարավորություն են տալիս ղեկավար մարմիններին գործել հստակ ձևակերպված գործունեության ընթացակարգերով և չափանիշներով, բայց մյուս կողմից հարցականի տակ է դրվում համալսարանի ժողովրդավարական մարմինների անկախությունը, որոնց դերակատարությունը համալսարանի կրթական, գիտական և գիտատեխնիկական գործունեության համակարգումն ու կարգավորումն է:

Ֆակուլտետների պետերին լավ կլիներ պատվիրակել կրթության և հետազոտության մասնագիտական ասպեկտների անմիջական կառավարման լիազորություններ, ինչը ինքնակառավարման և գիտական անկախության դրական կողմերից է: Այդ դեպքում համալսարանի ֆակուլտետը կազմում է վարչական և կրթական ստորաբաժանում, որն իրականացնում է բարձրագույն ռազմական և հետբուհական կրթություն: Քանի որ ամբիոնի պետի նշանակմանը նախորդում է բաց մրցույթ, սա ոգևորում է ակադեմիական անձնակազմին զբաղվելու ինքնազարգացմամբ և որակի ապահովմամբ:

Պատշաճ որակի ապահովումն ու կայուն զարգացումը ՊԻԳԲ կառավարման շրջափուլի համապատասխան՝ ենթադրում է ողջ անձնակազմի ակտիվ մասնակցությունն այդ գործընթացում, հետևաբար հետագա քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել համալսարանի ուսումնաօժանդակ անձնակազմին կառավարման գործընթացների վերաբերյալ վերապատրաստումներ իրականացնելու ուղղությամբ:

III.Մասնագիտության կրթական ծրագրերը

ՌՀ-ի կրթական ծրագրերը սահմանվում են ՀՀ Պաշտպանության նախարարի և ՀՀ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հրամաններով: Կրթական չափորոշիչները, ակնկալվող վերջնարդյունքները նույնպես հաստատվում են ՀՀ Պաշտպանության նախարարության համապատասխան վարչությունների և ՀՀ Զինված ուժերի կողմից: Եվրոպայի ռազմական համալսարաններում առկա այս մոդելը հիմնված է ռազմական հաստատության և Պաշտպանության նախարարության համապատասխան վարչությունների սերտ համագործակցության վրա՝ պատշաճորեն սահմանելու զինված ուժերի առկա և ապագա կարիքները, ռազմական հաստատության կողմից մշակելու կրթական ծրագրեր, որոնք այնուհետ հաստատում է ՊՆ-ն: Այսպիսով, կրթական ծրագրերի մշակումը պետք է իրականացվի ռազմական համալսարանում, այլ ոչ թե համալսարանը լինի պարզապես արտաքին հանձնարարություն կամ հրաման կատարող:

Կրթական ծրագրերը մշակվում են հաշվի առնելով կրթական բնութագրիչները՝ հիմնված գիտելիք, կարողություն և հմտություն չափելի վերջնարդյունքների վրա: Վերջիններս պետք է փոխկապակցված լինեն հետևյալ երեք մակարդակներում՝ ՈԱՇ - կրթական ծրագրեր - դասընթացի նկարագրեր (առարկայական նկարագրեր): Այս փոխկապակցվածությունը ՌՀ-ում հետագա բարելավման կարիք ունի:

Կրթական ծրագրերի և դասավանդման ու ուսումնառության մեթոդների մշակման ժամանակ առաջնահերթություն պետք է տրվի կուրսանտների հմտությունների արդյունավետ զարգացմանը: ՀՀ Զինված ուժերի կողմից կրթական ծրագրերին ներկայացվող խիստ պահանջները չեն նպաստում ճկուն և անկախ ուսումնական պլանի կազմմանը, այդ իսկ պատճառով կամընտրական առարկաների բացակայությունն ուսումնական պլանում զարմանալի չէ: Ինչևէ, կան ռազմական հաստատություններ, որոնք գոնե մշակում են մի քանի մոդուլներ՝ հնարավորություն տալով ուսանողներին կատարել ընտրություն (չնայած սրանք ավելի շատ ընդհանրական, քան մասնագիտական մոդուլներ են):

Կրթական ծրագրերի թույլ կողմը միջազգայնացման և ուսանողների շարժունության պակասն է, որը կարելի է պլանավորել համակարգված կերպով՝ ՊՆ-ից անկախ:

Ուսանողների գնահատման տեսանկյունից ՌՀ-ն ներդրել է գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման համակարգ, որը միտված է գնահատելու ուսանողների ձեռք բերած կրթական վերջնարդյունքները, որոնք սահմանված են դասընթացի

նկարագրերով: Սա ընդունված փորձ է շատ համալսարաններում և համապատասխանում է որակավորումների եվրոպական շրջանակին:

ՌՀ-ն ներդրել է կրթական ծրագրերի մշտադիտարկումը, արդյունավետության գնահատումն ու բարելավումը ապահովող քաղաքականություն, սակայն կրկին ՊՆ-ից կախվածության պատճառով մասնագիտություններն ավելացվում են ՀՀ ՊՆ ուղիղ հրամանի համաձայն:

ՀԱՊԿ և ՆԱՏՕ երկրների ռազմական հաստատությունների հետ համագործակցությունը նկատելի է միայն ՀԱՊԿ անդամ երկրների հետ (մասնավորապես՝ Ռուսաստանի, աննշան բացառությամբ նաև Գերմանիայի հետ): ՆԱՏՕ անդամ երկրների հետ համագործակցության հնարավորությունները մեծ են հատկապես ճգնաժամային կառավարման կամ մարդասիրական օգնության գործողությունների ոլորտում, որը ենթադրում է բազմակողմանի և միջպետական վերապատրաստումների իրականացում: Նշվածը ՌՀ-ի կրթական ծրագրերի հետագա զարգացման հնարավորություն է ստեղծում:

IV. Ուսանողները

Համալսարանում առկա են ուսանողների ընդունելության և ընտրության հստակ մեխանիզմներ: ՌՀ-ն ուսանողներին հավելյալ պարապմունքների և խորհրդատվության հնարավորություն է տալիս, ինչպես նաև ապահովում է ուսանողների շահերի պաշտպանությունը: Ինչևէ, խորհրդատվական ծառայությունների որակի գնահատման մեխանիզները բացակայում են, իսկ ուսանողներին հետազոտական ոլորտում աջակցելու մեխանիզմները թույլ են:

ՌՀ-ում ուսանողների մասնակցությունը գիտական հետազոտություններին արտահայտվում է հիմնականում մագիստրոսական թեզերի պատրաստմամբ և պաշտպանությամբ: Քանի որ, ընդհանուր առմամբ, ՌՀ-ի գիտական և հետազոտական գործունեությունը թերի է, ուսանողների ներգրավվածությունը ևս ցածր է ու պասիվ: Այս թերացումը պահանջում է խորքային փոփոխություններ ՌՀ խնդիրներում և համալսարանի ուղղվածության փոփոխություն խիստ կիրառականից դեպի ավելի ակադեմիական, օրինակ՝ երկակի (հիբրիդ) կրթական համակարգի ձևով:

Ընդհանուր առմամբ, ՌՀ-ն տրամադրում է ուսանողներին աջակցություն և ապահովում է կրթության արդյունավետությունը, սակայն ուսանողների քիչ մասնակցությամբ, որը պայմանավորված է ռազմական խիստ կանոնակարգերով, որոնք սահմանափակում են ստորին մակարդակի ռազմական անձնակազմի մասնակցությունը:

V. ՊԴ և ուսումնաօժանդակ կազմը

Առկա են ՊԴ կազմով համալրման կանոնակարգեր, որոնք հաստատվում են ՀՀ ՊՆ հրամանով՝ ստեղծելով անձնակազմի՝ մրցույթի վրա հիմնված համալրման որակի ապահովման շրջանակ:

Դասախոսներն, ամբիոնների ու ֆակուլտետների պետերը ռազմական ոլորտում փորձառու և զինված ուժերում երկարատև ծառայած սպաներ են, ինչը կանոր առավելություն է: Այնուամենայնիվ, դասախոսական կազմի որոշ մասի գերծանրաբեռնվածությունը հանգեցնում է հետազոտական ծրագրերում և նախաձեռնություններում նրանց ոչ բավարար մասնակցությանը:

Դրական փաստ է շահակիցների և արտաքին փորձագետների ներգրավվածությունը դասավանդման գործընթացին, սակայն արդյունավետության ապահովման համար այս գործընթացը պետք է լինի կանոնավոր: Դասընթացները, որոնք անց են կացվում հազվադեպ հրավիրված դասախոսների կողմից (ՊՆ և ԶՈՒ բարձրաստիճան կազմ), մեծ առավելություն չեն ապահովում: Դասախոսական կազմի կառավարման դրական գործոններից է նաև գնահատման մեխանիզմների առկայությունը, որն իրականացվում է տարին երկու անգամ:

Զարգացումն ու միջազգային համագործակցությունը խոչընդոտող կարևոր գործոն է համալսարանի անձնակազմի օտար լեզվի իմացության պակասը (բացի ռուսերենից):

VI. Հետազոտությունը և զարգացումը

Այս տիրույթում համալսարանի նպատակներից մեկը գիտական ներուժի միջոցով Զինված ուժերի մարտական պատրաստվածության բարձրացումն է, ինչպես նաև դասախոսների և կուրսանտների (ունկնդիրների) ակտիվ ներգրավումը հետազոտության մեջ: Այնուամենայնիվ, ՌՀ-ի գիտական ներուժը շատ սահմանափակ է: Գիտահետազոտական գործունեությունը նախաձեռնվում է միայն դասախոսների կողմից, որոնց աշխատանքին խոչընդոտում է համապատասխան լաբորատորիաների, փորձարարական աշխատաժողովների, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների պակասը:

ՌՀ-ն նշում է, որ խթանում է հետազոտական գործունեությունը՝ դասախոսների և ուսանողների համար ամենամյա գիտական և մեթոդական գիտաժողովների կազմակերպմամբ: Նման միջոցառումները չեն նպաստում հետազոտության իրականացմանը գիտական կենտրոնների և այլ գիտնականների հետ փորձի փոխանակման տեսանկյունից: Նման գիտաժողովներն ավելի շատ դրսևորվում են որպես հետազոտական գործունեության վերաբերյալ հանրային հաշվետվողականություն, մինչդեռ մասնակիցները չեն կարողանում ոչ դատել արդյունքների մասին, ոչ էլ ներկայացնել հետազոտական ոլորտում նոր փորձառություն:

Ուսուցանվողների մասնակցությունը հետազոտության և զարգացման գործընթացում սահմանափակվում է միայն մագիստրոսական թեզի պատրաստմամբ, որն ընթանում է կրթական գործընթացին զուգահեռ: Այսպիսով, շատ կարճ ժամանակ է հատկացվում խորապես հետազոտություն իրականացնելու համար:

Վերջին տարիների ընթացքում ՌՀ-ն չի ունեցել միջազգային կամ տեղական հետազոտական դրամաշնորհներ հետազոտությունների իրականացման համար: Քանի որ ՊՆ-ն հանդիսանում է գիտահետազոտական գործունեության իրականացման համար հիմնական ֆինանսավորող աղբյուրը, խորհուրդ է տրվում ավելացնել այդ ֆինանսավորումը, սակայն այս որոշումը ՌՀ-ի իրավասության սահմաններից դուրս է: Լինելով ՌՀ-ին ֆինանսավորող միակ աղբյուրը՝ ՊՆ-ն մեծ դեր է խաղում նաև հետազոտական արդյունքների կիրառման տեսանկյունից, հետևաբար՝ հետազոտական արդյունքի առևտրայնացումը խիստ սահմանափակ է: Հավանաբար կրկին ՌՀ-ի իրավասության շրջանակից դուրս է քաղաքացիական շուկայի հետ համագործակցության ակտիվացումը, որը կարող է դառնալ հետազոտական արդյունքի կարևոր սպառող: Հաշվի առնելով եվրոպական այլ երկրների ռազմական համալսարանների փորձը՝ նման համագործակցությունը շուկայի հետ ռազմական հաստատությունների համար ավելի լավ դիրք է ապահովում հետազոտության և զարգացման ոլորտում:

VII. Ենթակառուցվածքը և ռեսուրսները

Ռեսուրսները, մասնավորապես՝ ֆինանսական ռեսուրսներն ու ենթակառուցվածքը, կարևորագույն դեր են խաղում համալսարանի ռազմավարական նպատակների և առաքելության իրականացման գործում: Հետևաբար՝ ֆինանսական միջոցներ պահանջող մի շարք գործողություններ են անհրաժեշտ կրթական-նյութական բազայի բարելավման համար՝ ներառյալ մասնաշենքերի և լսարանների վերանորոգում, լողավազանի կառուցում, տեղեկատվական համակարգի զարգացում և գրադարանային պայմանների բարելավում:

ՌՀ-ի կարևոր առավելություններից և ուժեղ կողմերից է հրետանու, հրաձգության, հակաօդային պաշտպանության, հաղորդակցության (կապի), զրահապատ տեխնիկայի և ինժեներության մասնագիտացված լսարանների առկայությունն, ինչպես նաև մարտական պատրաստվածության, սպառազինության, հրաձգության և մարտական կանոնների մասին նյութերի (պաստառ) առկայությունը լսարաններում: Այնուամենայնիվ, ենթակառուցվածի հետագա բարելավման համար անհրաժեշտ են ներդրումներ:

Լինելով ՀՀ ՊՆ համակարգի պետական հաստատություն՝ համալսարանը չունի իր սեփական ֆինանսական ռեսուրսները, հետևաբար չի կարող իրականացնել անկախ ֆինանսական կամ տնտեսական գործունեություն: Սա շատ կարևոր գործոն է, որը խոչընդոտում է համալսարանի ինքնավարությանը: Մասնավորապես՝ երկարաժամկետ

ֆինանսական պլանավորումը, որն իրականացվում է նախարարության մակարդակում չի խրախուսում նախաձեռնողականություն/նորարարություն: Քանի որ տարեկան ֆինանսական պլանավորումը հիմնված է համալսարանի գործունեության բոլոր ուղղությունների համար գործող նորմերի վրա, այն թույլ չի տալիս համալսարանին ընդունել այնպիսի մարտահրավերներ, որոնք կարող են շահութաբեր լինել, սակայն նախապես պլանավորված չեն եղել:

VIII. Հասարակական պատասխանատվությունը

Համալսարանի հաշվետվողականության գործընթացն ու ժամանակացույցը կարգավորվում են ՀՀ պաշտպանության նախարարի հրամաններով, և ռազմական միջավայրում համապարփակ հաշվետվողականությունը տեսանելի է: Ինչևէ, հանրության և պետության համար ՌՀ-ի ներքին գործընթացները թափանցիկ չեն, սակայն ՌՀ-ն ցանկություն է հայտնում ստեղծելու հանրությանը իր գործունեության մասին տեղեկացնելու նոր ուղիներ: Ընդհանուր տպավորությունն այն է, որ հաշվետվողականությունը հանրությանը թաքնված է գաղտնիության ռեժիմի քողի ներքո: ՌՀ-ի թափանցիկությունը որոշակիորեն արտահայտվում է ՊՆ կայքում ՌՈՒՀ-ի վերաբերյալ նորությունների տեղադրմամբ:

Ակնառու է, որ բարելավման կարիք ունեցող հիմնական գործոնն այն է, թե ինչպես է արտաքին միջավայրն ընկալվում ՌՀ-ի ղեկավար մարմինների կողմից: Տարիներ շարունակ ՌՀ-ն սահմանափակված է եղել գաղտնիության ռեժիմով, որը թույլ չի տվել կապ պահպանել շրջապատի հետ և մասնակցել հանրային գործունեությանը: Թեև վերջին տարիներին մասնակցությունը հանրային և հասարակական կյանքում ավելի տեսանելի է, սակայն հետադարձ կապի մեխանիզմ առկա չէ:

IX. Արտաքին կապերը և միջազգայնացումը

Համալսարանը սկսել է զարգացնել իր արտաքին կապերն ու լավագույն փորձի փոխանակմանն ուղղված քայլերը, սակայն ՌՀ-ի գործունեության այս ոլորտը անմիջապես ՌՀ-ի կողմից չի ղեկավարվում:

Անհրաժեշտ է սահմանել միջազգայնացման շրջանակն ու «հավակնությունների մակարդակը», այսինքն՝ արդյոք համալսարանը ցանկանում է միջազգայնորեն հայտնի դառնալ, թե, ինչպես նշված է առաքելության մեջ, դառնալ հաստատություն, որն ունի տարածաշրջանում կարևոր դեր ու նշանակություն:

Դրական է այն, որ դասախոսներն ու ուսանողները մասնակցում են գիտական և կրթական միջոցառումներին արտասահմանում, որից հետո նրանք ներկայացնում են իրենց փորձն ու կարողությունները հաշվետվությունների միջոցով, սակայն արտաքին ղեկավարումից կախվածությունը կայուն հիմք չի ստեղծում նման գործունեության համար:

ՌՀ-ի միջազգայնացման գործընթացին խոչընդոտող կարևոր գործոններից մեկը պաշտոնական կայքի բացակայությունն է և ռուսերեն ու անգլերեն լեզուներով տեղեկատվության բացակայությունը: Համալսարանի միջազգային ծրագրերի և համագործակցության վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը կայքում խոչընդոտում է համալսարանի միջազգայնացմանն ու նվազեցնում է համալսարանի ճանաչումն ակադեմիական, գիտական և միջազգային կառույցների ու հաստատությունների կողմից, որոնք կարող են համալսարանի համար հավանական գործընկերներ դառնալ:

X. Որակի ներքին ապահովման համակարգը

ՌՀ-ն ունի ՈԱ ոլորտին առնչվող հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք ամրագրված են հիմնարար փաստաթղթերում, մասնավորապես՝ ՈԱ ձեռնարկում:

ՈԱ գործընթացների կառավարման համար ՌՀ-ն հատկացնում է բավարար մարդկային ռեսուրսներ: Ինչևէ, Գիտության և ԿՈԱ բաժնի ողջ անձնակազմը գերծանրաբեռնված է իր աշխատանքային պարտականություններով:

Որակի ապահովումը կենտրոնանում է լավագույն փորձի շարունակական զարգացման վրա ՌՀ բոլոր գործընթացների բարելավման համար: Վերջին տարիների ընթացքում ՌՀ-ն մեծ

քայլեր է իրականացրել իր բոլոր գործընթացների բարելավման ուղղությամբ: Թեև որոշակի վերապատրաստումների կարիք է նկատվում, սակայն ՌՀ-ն միանգամայն մասնագիտական մոտեցումներ է ցուցաբերում որակի ապահովման բնագառավում:

Խորհրդատվություններ.

1. Անհրաժեշտ է մշակել գործունեության արդյունավետության գնահատման ցուցիչներ, որոնք կօգնեն գնահատել՝ արդյոք ռազմավարական նպատակներն իրականացվել են, թե ոչ և բացատրել, թե ինչու են ընտրվել հենց այդ ցուցիչները:
2. Համալսարանի ողջ կազմը (ակադեմիական և վարչական) պետք է պարբերաբար վերապատրաստումներ անցնի՝ համալսարանի առաքելության վերաբերյալ համընդհանուր մոտեցում և ընկալում ձևավորելու նպատակով:
3. ՌՀ-ի ներկայացուցիչները պետք է մասնակցեն ՀՀ զինված ուժերի զարգացման պլանի մշակմանը, որից էլ բխում է ՌՀ առաքելությունը:
4. Կառավարման համակարգի ժողովրդավարացումը (դեմոկրատացումը) պետք է շեշտադրվի համալսարանի ոչ ռազմական՝ կրթական գործընթացներում:
5. Ավելի շատ ուշադրություն պետք է դարձվի ուսանողների և շրջանավարտների կարծիքներին:
6. ՌՀ-ին պետք է ավելի շատ անկախություն տրվի կրթական ծրագրերի իրականացման բնագավառում, ՊՆ-ի հետ հարաբերությունները պետք է աստիճանակարգությունից վերածվեն համագործակցության:
7. Պետք է կանոնավոր հիմքերով իրականացվեն փոխանակման միջազգային ծրագրեր՝ ապահովելու ուսանողների և դասավանդողների շարժունությունը:
8. Անհրաժեշտ է ՊՆ-ի հետ համագործակցելով մշակել արտաքին կապերի քաղաքականություն՝ շեշտադրելով միջազգային համագործակցությունը կրթական գործընթացի և կրթական ծրագրերի մակարդակում՝ ընդլայնելով ՌՀ անկախությունն օտարերկրյա համալսարանների հետ ակադեմիական համագործակցության տեսանկյունից:
9. Անգլերեն լեզվի իմացության մակարդակը պետք է շարունակաբար բարձրացվի:
10. ՌՀ-ն պետք է ներդնի ՈԱ գործընթացները ռազմավարական պլանավորման մակարդակում:
11. ՈԱ բաժնի արդյունավետության բարձրացման տեսանկյունից՝ այն պետք է առանձնացվի գիտության և միջազգային կապերով զբաղվող բաժիններից:
12. ՊՆ-ի հետ համագործակցությունը (ոչ միայն ՈԱ ոլորտում) աստիճանակարգված է, այն պետք է դարձնել ավելի համագործակցային:
13. Թափանցիկության գործընթացները պետք է հստակեցվեն, համալսարանի գործունեությանն առնչվող շատ տեղեկատվություն ներկայացված է որպես ծառայողական

Տիգրան Մնացականյան
31.08.2018

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ՌՀ-ի ինքնավերլուծության և որակի ապահովման գործընթացների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից.

1. **Տիգրան Մնացականյան**՝ տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի դասախոս, ՀՀ, խմբի ղեկավար,
2. **Բարտլոմեյ Պաուչեկ**՝ անվտանգության գիտությունների դոկտոր, Լեհաստանի ռազմածովային ակադեմիայի Հրամանատարության և ծովային գործողությունների ֆակուլտետի փոխդեկան, Լեհաստան, անդամ,
3. **Արամ Բաղիյան**՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, գիտական խորհրդատու «Իմպրովիզ» ՍՊԸ-ում ՀՀ, անդամ,
4. **Մարգարիտա Պողոսյան**՝ տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Երևանի Հյուսիսային համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս, ՀՀ, անդամ,

5. **Միքայել Խաչատուրյան՝** Ռուս-հայկական համալսարանի Մաթեմատիկայի և բարձր տեխնոլոգիաների ինստիտուտի Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի բակալավրատի 3-րդ կուրսի ուսանող, ՀՀ, ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ Լիլիթ Պիպոյանը:

Թարգմանությունը կատարել է Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան որակի ապահովման կենտրոնի մասնագետ Անի Մազմանյանը:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է համալսարանի հետ և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ թարգմանիչն ու համակարգողը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 14.07.2017թ.-ին ՈԱԱԿ-ին ներկայացվել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշումը կայացվել է 06.09.2017թ.-ին, որից հետո ՈԱԱԿ-ի և ՊՆ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

ՌՈՒՀ-ի ինքնավերլուծությունը

Հաստատված ժամանակացույցի համաձայն ինքնավերլուծության աշխատանքներին նախապատրաստելու նպատակով՝ 20.11.2017-02.02.2018թթ. ՈԱԱԿ աշխատակիցներն իրականացրել են ՌՈՒՀ-ի ինքնավերլուծություն իրականացնող աշխատանքային խմբի համար ՈԱԱԿ-ի ձևաչափերի և հավատարմագրման չափանիշների մեկնաբանությանը նվիրված աշխատաժողովներ:

Հաստատությունն, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, 06.03.2018թ.-ին ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Ինքնավերլուծության զեկույցի անգլերեն և հայերեն տարբերակները և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը ՈԱԱԿ-ի կողմից ընդունվել են 21.03.2018թ.-ին՝ հավատարմագրման գործընթացի համակարգողի դրական կարծիքը ստանալուց հետո:

Ինքնավերլուծության զեկույցը նախնական գնահատման համար տրամադրվել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով պատասխանատուների կողմից իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. հավատարմագրման գործընթաց, փորձագիտական աշխատանքի առանձնահատկություններ, փորձագետի էթիկայի և վարքագծի կանոններ:
2. ինստիտուցիոնալ ինքնավերլուծության նախնական գնահատում պրակտիկայից վերցված օրինակների միջոցով:
3. փորձագիտական այց դերային խաղերի միջոցով:
4. փորձագիտական զեկույցի պատրաստում:

Փորձագիտական խումբն, ուսումնասիրելով համալսարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթն, իրականացրել է նախնական գնահատում 23.04.2018թ.-08.06.2018թ. ընկած ժամանակահատվածում: Ըստ ձևաչափի՝ պատրաստելվել է լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև պարզաբանման ենթակա խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները և թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և գործընթացի համակարգողը փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել է փորձագիտական այցի ժամանակացույցը[3]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի

Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Նախապատրաստական այց

Վ. Սարգսյանի ռազմական համալսարան նախապատրաստական այցը տեղի է ունեցել 2018 թվականի մայիսի 25-ին: Նշյալ հանդիպմանը ՈԱԱԿ-ի կողմից մասնակցում էին գործընթացի համակարգողը, փորձագիտական խմբի ղեկավարը և ՈԱԱԿ տնօրենը, իսկ համալսարանի կողմից՝ՌՀ պետի առաջին տեղակալը, Գ և ԿՈԱ բաժնի աշխատակիցները: Նախապատրաստական այցի արդյունքում համաձայնեցվեց փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, մասնակիցների ցանկը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց փորձագիտական խմբին տրամադրվող սենյակի, հանդիպումների դահլիճի վերաբերյալ, հստակեցվեցին դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Քննարկվեցին և փոխհամաձայնեցված որոշումներ կայացվեցին փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, ինչպես նաև հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Ժամանակացույցով նախատեսված այցին նախորդող օրը (10.06.2018թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները (ներառյալ՝ միջազգային փորձագետը), համակարգողը, սղագրողը և թարգմանիչը ունեցել են փակ հանդիպում ՈԱԱԿ-ում: Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբը համաձայնեցրել է փորձագիտական գնահատման շրջանակը, չափանիշների գնահատման սանդղակը, որն ըստ ՈԱԱԿ-ի ընթացակարգերի՝ ներառում է երկու մակարդակ՝ 1) **բավարարում/համապատասխանում է** չափանիշի պահանջներին, 2) **չի բավարարում/համապատասխանում** չափանիշի պահանջներին: Վերջնականացվել են այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հանդիպումների վարման էթիկան, հստակեցվել են հետագա քայլերը:

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2018թ.-ի հունիսի 11-ից 14-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը մեկնարկել և ավարտվել է համալսարանի պետի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս, կուրսանտ, ունկնդիրներ, շրջանավարտ, ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբի մասնակիցներին ընտրել է փորձագիտական խումբը՝ համալսարանի կողմից նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[4], ռեսուրսների դիտարկում[5] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել համալսարանի տարբեր ստորաբաժանումներում: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում հանդիպման մասնակիցների հետ բաց քննարկումները:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռքբերված տեղեկատվությունն, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման առանձին չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների բավարարման

---

[4]ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[5]ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական այցից հետո փորձագիտական խումբը՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում պատրաստել է հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը, որը կազմելիս հիմնվել է ՌՀ-ի ինքնավերլուծության նախնական գնահատման և փորձագիտական այցի դիտարկումների վրա: Փորձագիտական խմբի յուրաքանչյուր անդամ իր ներդրումն է ունեցել զեկույցի պատրաստման աշխատանքներում, ինչպես նաև արձագանքել է ամբողջական տարբերակին: Միջազգային փորձագետը պատրաստել է իր եզրակացությունը և գործընկերային գնահատման առանձին կարծիքը: Հիշյալ փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Միջազգային փորձագետի մոտեցումներն ամփոփվել են զեկույցում, իսկ գործընկերային գնահատումն ամբողջությամբ է ներառվել զեկույցի տեքստում:

Զեկույցի վերաբերյալ իր արձագանքը ՌՀ-ն ուղարկել է ՈԱԱԿ 31.07.2018թ.-ին: 2018թ.-ի օգոստոսի 30-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է ՌՈՒՀ-ի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների միջև հանդիպում, որի ընթացքում ներկայացվել է փորձագիտական խմբի պատասխանը համալսարանի դիտարկումներին: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 31.08.2018թ.-ին: Զեկույցի նախնական տարբերակում փորձագիտական խմբի կողմից կատարված փոփոխությունների վերաբերյալ նշումներ կատարված են համապատասխան էջերի տողատակերում:

_____

Լիլիթ Պիպոյան

31.08.2018թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. 1994թ.-ի հունիսի 24-ին ՀՀ կառավարության որոշմամբ հիմնադրվել է Պաշտպանության նախարարության (ՊՆ) բարձրագույն զինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարանը (ԲԶԲՀՈՒ), որը զինվորական մասնագետներ էր պատրաստում 8 մասնագիտություններով: ՀՀ կառավարության 1998թ.-ի հունվարի 16-ի որոշմամբ ՀՀ ՊՆ ԲԶԲՀՈՒ-ն վերակազմավորվեց Ռազմական ինստիտուտի (ՌԻ): ՀՀ նախագահի հրամանագրով 2000թ.-ի փետրվարին ՌԻ-ն անվանվեց Հայաստանի ազգային հերոս, Արցախի հերոս Վազգեն Սարգսյանի անունով: 2001թ.-ից ՌԻ-ն անցավ երկու՝ մոտոհրաձգային և հրետանային մասնագիտություններով սպայական կադրերի պատրաստմանը: 2004թ.-ից ՌԻ-ում գործում է նաև սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոն, որտեղ իրենց մասնագիտական գիտելիքներն են կատարելագործում ԶՈՒ-ում ծառայություն անցնող սպաները: 2003թ.-ից ՌԻ-ին ինտեգրվեց պետական բուհերի համակարգ: 2013թ.-ից գործում է հրամանատարաշտաբային ֆակուլտետը (ՀՇՖ), որտեղ մեկնարկեցին «Միավորումների և զորամասերի կառավարում» մասնագիտությամբ միավորումների և զորամասերի կառավարում մագիստրոսի որակավորմամբ միամյա դասընթացները: 2016թ.-ի ապրիլի 28-ին ՌԻ-ն վերահայտարարվեց՝ դառնալով ՀՀ ՊՆ «Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան» պետական հիմնարկ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի գործունեության հիմնական ուղղություններն են՝

1. բարձրագույն ռազմամասնագիտական կրթությամբ (ստորաբաժանումների կառավարման բակալավրի աստիճանով) և ռազմական կրթությամբ (միավորումների և զորամասերի կառավարման մագիստրոսի աստիճանով) մասնագետների պատրաստում:
2. «Կապիտան», «մայոր», «փոխգնդապետ» հաստիքապաշտոնային կոչումներով կադրերի վերապատրաստում, որակավորման բարձրացում:
3. ՀՀ բուհերի ուսանողներից 2,5-ամյա լրացուցիչ կրթական ծրագրով շաբաթօրյա պարապմունքներ՝ ՀՀ ԶՈՒ համար դասակի հրամանատարների պատրաստում:
4. ՀՀ բուհերի շրջանավարտներից 1-ամյա պատրաստության ծրագրով ՀՀ ԶՈՒ համար դասակի հրամանատարների պատրաստում:
5. Քաղաքացիական բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող ՀՀ ԶՈՒ կրտսեր և ավագ ենթասպայական կազմից 5-ամսյա պատրաստության ծրագրով ՀՀ ԶՈՒ համար դասակի հրամանատարների պատրաստում:
6. ՀՀ պաշտպանունակության ամրապնդմանը, ռազմական կրթության կատարելագործմանն ուղղված հիմնարար, հետազոտական և կիրառական, գիտական աշխատանքների կազմակերպում ու իրականացում:
7. Ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու համար երիտասարդների ռազմամասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպում և անցկացում:
8. ՀՀ զինված ուժերի զորամիավորումներին, միավորումներին, զորամասերին և ստորաբաժանումներին անհրաժեշտ գիտամեթոդական օգնության ցուցաբերում:
9. Գիտական աշխատությունների, ուսումնական ձեռնարկների, թերթերի, պարբերականների, տեղեկատու նյութերի, ուսումնամեթոդական գրականության նախապատրաստում և ներկայացում հրատարակության:
10. Գիտաժողովների կազմակերպում և անցկացում:

ՌՀ-ն մինչ այժմ թողարկել է բակալավրի ծրագրով [redacted] սպա, մագիստրոսի ծրագրով՝ [redacted] սպա: ՌՀ-ում մասնագիտական վերապատրաստում և որակավորման բարձրացման դասընթացներ է անցել ավելի քան [redacted] զինծառայող:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ. ՌՀ-ն, նպատակ ունենալով ձևավորել մրցունակ գիտական և նորարարական ներուժ, նախատեսում է ապահովել հետազոտությունների ներդրման

գործընթացի արդյունավետությունը կրթական գործընթացում, ընդլայնել մասնակցությունը հանրապետական ու արտասահմանյան մրցույթներում և ծրագրերում, գիտական նախագծերի և մտավոր գործունեության արդյունքների մասնագիտական փորձագիտության ոլորտում, զարգացնել համագործակցության ձևերը կրթական, գիտահետազոտական հաստատությունների և արտասահմանյան կազմակերպությունների հետ, խթանել հրապարակման ակտիվությունը գրախոսվող ամսագրերում, ստեղծել պայմաններ աշխատակիցների մտավոր սեփականության և հեղինակային իրավունքի պաշտպանման, գիտական աշխատանքների իրավական պաշտպանվածության համար:

ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ. ՌՀ-ի միջազգայնացման հիմնական և կարևորագույն նպատակն է միջազգային համագործակցության արդյունքում բարելավել ռազմական կրթական ծառայությունների և հետազոտության որակը, բարձրացնել համալսարանի մրցունակությունն ազգային և միջազգային մակարդակներում, ստեղծել երկխոսության նպաստավոր միջավայր և ապահովել ՌՀ-ի շրջանավարտների մրցունակությունն ազգային և միջազգային մակարդակներում: ՌՀ-ի միջբուհական և միջազգայնացման հիմնական ուղղություններն են՝ միջբուհական և միջազգային կապերի կառավարման առկա համակարգի զարգացումը, ՊՆ համապատասխան կառույցների հետ փոխհամաձայնեցված միջազգային կապերի զարգացման ռազմավարության և համագործակցային նոր ծրագրերի մշակումը, միջբուհական և միջազգային ծրագրերում ադյունկտների, ասպիրանտների, մագիստրոսների մասնակցության խթանման մեխանիզմների զարգացումը, կուրսանտների, ունկնդիրների, դասախոսների, վարչական կազմի շարժունության ապահովումը, առաջատար բուհերի հետ համագործակցության ընդլայնումը:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ. ՌՀ-ի կրթության որակի բարձրացմանը նպատակաուղղված հիմնախնդիրներն են՝

– որակի ներքին ապահովման համակարգի շրջանակներում նախապատրաստել և իրականացնել ՄԿԾ-երի և դրանք իրականացնող ստորաբաժանումների գործունեության ինքնավերլուծությունը,
– ապահովել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ դասավանդման և ուսումնառության որակի ու արդյունավետության շարունակական բարձրացման համար,
– որակի ներքին գնահատման արդյունքների հիման վրա պլանավորել և իրականացնել ուսուցման որակի բարձրացման միջոցառումները,
– ՌՀ-ն նախապատրաստել հավատարմագրման գործընթացներին,
– ապահովել հավատարմագրման գործընթացների թափանցիկությունը և արդյունքների հրապարակայնությունը,
– ամրապնդել որակի ներքին ապահովման ենթակառուցվածքի վարչական անկախությունը,
– կանոնակարգել և բարելավել ՌՀ-ի որակի ներքին ապահովման ենթակառուցվածքի գործունեությունը,
– վերանայել, լրամշակել և հաստատել ՄԿԾ-երի մշակման, մշտադիտարկման և հաստատման գործընթացները կանոնակարգող փաստաթղթերը,
– բարելավել ուսուցանվողների գիտելիքների գնահատման գործող համակարգը:

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունը դիտարկել է որպես ՄՈՒՀ-ի հիմնական հավակնություններ և նպատակներ:

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ՓԱՍՏԵՐ

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ՌՀ առաքելության ձևակերպումներ ամրագրված են ՌՈՒՀ-ի կանոնադրությունում (հոդված 11՝ որպես նպատակ), ինքնավերլուծությունում, նոր մշակված ռազմավարական զարգացման ծրագրում (2018-2023թթ.): Սակայն վերոնշյալ փաստաթղթերում առաքելության ձևակերպումները տարբեր են: 2015-2020թթ. զարգացման հեռանկարային պլանում, որը ՌՀ կողմից ներկայացվել է որպես ռազմավարական զարգացման հիմնական ծրագիր, առաքելության ձևակերպումը բացակայում է. նշված են միայն միջոցառումներ՝ ըստ գերակա 5 ուղղությունների: [redacted]

ՌՀ նպատակները և խնդիրները արտացոլված են կանոնադրությունում և զարգացման հեռանկարային պլանում: Թեև նպատակներն ու խնդիրները հիմնականում բխում են ՀՀ ԶՈՒ զարգացման ծրագրերից, [redacted]

Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ ՌՀ ներքին և արտաքին շահակիցներն ունեն գրեթե միասնական պատկերացում ՌՀ դերի, առաքելության վերաբերյալ: Թերևս միակ էական տարբերությունը շահակիցների տարբեր խմբերի պատկերացումների միջև հետազոտական ոլորտում ՌՀ դերակատարումն է, որի կարևորության մասին փորձագիտական այցի ընթացքում նշեցին առավելապես ներքին շահակիցները:

ՌՀ առաքելության տարբեր ձևակերպումները և շահակիցների պատկերացումները չեն հակասում ՀՀ ՈԱՇ-ի տրամաբանությանը:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ՌՀ նպատակներն ու խնդիրները ձևակերպվում են ՀՀ ԶՈՒ և ՀՀ ՊՆ նպատակներին և խնդիրներին համահունչ, ինչպես նաև հաստատվում են ՊՆ կողմից:

ՌՀ-ում առկա են ներքին շահակիցների կարիքների վերհանման տարբեր մեխանիզմներ, սակայն դրանք ուղղակիորեն չեն կապվում ռազմավարական նպատակների հետ՝ իրենց արտացոլումն առավելապես ստանալով օպերատիվ մակարդակում: Այսպես օրինակ՝ քանի որ կուրսանտների կարիքները հիմնականում տեղում լուծում են ստանում, հետևապես՝ ռազմավարական նպատակ չեն դառնում: Այդուհանդերձ, ՌՀ զարգացման հեռանկարային պլանում նախատեսված են ներքին շահակիցներից դասախոսական կազմի վերապատրաստմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև նախատեսված է կուրսանտական կազմի՝ ՀՀ ուսանողական կյանքին և միջոցառումներին մասնակցության հնարավոր տարբերակների ընդլայնում:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Զարգացման հեռանկարային պլանում նախատեսված միջոցառումների համար սահմանված են ժամկետներ, սակայն նպատակների իրականացման արդյունքների գնահատման ցուցիչներ նախատեսված չեն: Գործունեության արդյունքների գնահատման և

բարելավման հիմնական մեխանիզմը ՌՀ-ում գործող հաշվետվությունների համալիրն է (տարեկան, կիսամյակային, ամսական): Վերջիններս, սակայն, ուղղակիորեն չեն թիրախավորված զարգացման հեռանկարային պլանին. հաշվետվությունները չեն կազմվում՝ ըստ զարգացման հեռանկարային պլանով նախատեսված միջոցառումների:

ՌՀ առաքելության և նպատակների վերանայման հստակ ժամկետներ և ընթացակարգ նախատեսված չեն: «Որակի ապահովման ներքին համակարգ ձեռնարկում» ամրագրված են ՌՀ ՈԱ հայեցակարգը և քաղաքականությունը, որոնք պարունակում են գործունեության արդյունքների գնահատման և բարելավման հիմքեր, սակայն դրանք առավելապես սկզբունքների մակարդակով են և նպատակների վերանայման հստակ գործողություններ չեն նախատեսում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ շահակիցներն ունեն գրեթե միասնական պատկերացում ՌՀ առաքելության մասին: Դա թույլ է տալիս եզրակացնել, որ ՌՀ-ի դերը շահակիցների շրջանում փաստացի հստակ է և ձևավորված, սակայն ՌՈՒՀ-ի առաքելությունը դեռևս չի ստացել իր վերջնական ձևակերպումը: Առաքելության միասնական հստակ ձևակերպման բացակայությունն, այդուհանդերձ, առաջացնում է ՌՀ վերաբերյալ տարբեր պատկերացումների ձևավորման վտանգ, օրինակ՝ հետազոտական ոլորտում ՌՀ դերակատարման վերաբերյալ:

Հստակ տեսլականի և դրանից բխող նպատակների բացակայությունը կարող է առաջացնել ռազմավարական կառավարման թերացումների և ռեսուրսների անարդյունավետ օգտագործման վտանգ:

Առաքելության՝ տարբեր փաստաթղթերում առկա տարբեր ձևակերպումները վկայում են այն մասին, որ ՌՀ-ում ձգտում եմ այն կատարելագործել, ինչը դրական է գնահատվում փորձագիտական խմբի կողմից: Սակայն ձևակերպման կատարելագործումը չի զուգորդվում շահակիցների ներգրավվածության ավելացմամբ: Արդյունքում ՌՀ կարող է ունենալ առաքելության լավ մշակված ձևակերպում, որը շահակիցները չեն կիսի:

ՌՀ նպատակների և խնդիրների փոխկապվածությունը ՀՀ ԶՈՒ և ՊՆ նպատակներին և խնդիրներին երաշխավորում է արտաքին շահակիցների կարիքների արտացոլումը ՌՀ գործունեությունում ուղղակիորեն (ԶՈՒ՝ որպես գործատու, ՊՆ՝ որպես հիմնադիրի ներկայացուցիչ) և անուղղակիորեն (ՊՆ՝ որպես հանրության կարիքները ներկայացնող պետական մարմին):

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ներքին շահակիցների կարիքները ներկայում որոշ չափով արտացոլված են ՌՀ նպատակներում և խնդիրներում, սակայն այդ արտացոլվածությունն երաշխավորող մեխանիզմներ ՌՀ-ում չկան, ինչի արդյունքում ներքին շահակիցների կարիքները կարող են դուրս մնալ ՌՀ ռազմավարական կառավարման գործընթացներից:

ՌՀ զարգացման հեռանկարային պլանով նախատեսված միջոցառումների մի մասն իր բնույթով չի ենթադրում լիարժեք ցուցիչներ. դրանք միջոցառումներ են, որոնք կամ իրականացված են, կամ՝ ոչ: Սակայն ռազմավարական դրույթների հիմնական մասի համար ցուցիչների բացակայությունն անհնար է դարձնում թե արդյունքների հստակ պատկերացումը, թե իրականացված գործողությունների արդյունավետության գնահատումը: Անհնար է դառնում նաև շարունակական բարելավումն՝ ի օգուտ առավել արդյունավետ մոտեցումների: Արդյունքում երաշխավորված չէ ոչ ռազմավարական զարգացման ուղղությունների պատշաճ ընտրությունը, ոչ էլ դրանց ընդառաջ գործողությունների արդյունավետությունը: Միևնույն ժամանակ հաշվետվությունների մեխանիզմը թույլ է տալիս ստորին մակարդակներում մշտապես իրականացնել բարելավումներ, թեև որոշ դեպքերում առկա է խզում ռազմավարական մակարդակի հետ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ հաշվի առնելով ՌՀ հանրային դերի մասին տարբեր շահակիցների պատկերացումների միասնականությունը, առաքելության ձևակերպման բարելավման ՌՀ

ձգտումը, ներքին և հատկապես արտաքին շահակիցների կարիքների արտացոլվածությունը ՌՀ նպատակներում և այն, որ ՌՀ փաստացի ծավալած գործունեությունը և ձևավորված առաքելությունը համահունչ են և համապատասխանում են ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՌՀ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՌՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

ՓԱՍՏԵՐ

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՌՀ կառավարման կազմակերպական կառուցվածքը, հանդիսանալով զորամասային կառուցվածք, միաժամանակ ներառում է համալսարանական կառուցվածքի տարրեր, ինչպիսիք են՝ գիտական խորհուրդը, մեթոդական խորհուրդը, ֆակուլտետները և ֆակուլտետային խորհուրդները, ամբիոնները: Որպես կառավարման մարմինների գործունեության հիմք՝ առկա են համապատասխան կանոնակարգեր: Կառավարման մարմինների փոխհարաբերությունները կարգավորվում են նաև ՀՀ ԶՈՒ կանոնադրություններով, պաշտոնատար անձանց հրամաններով և այլ օրենսդրական ակտերով:

Համալսարանի նպատակների իրականացման համար առկա մարդկային ռեսուրսների վերաբերյալ վերլուծություններ ՌՈՒՀ-ում չկան: Կառավարման համակարգում ընդգրկված բոլոր աշխատակիցներն ապահովված են համապատասխան աշխատասենյակներով, կահավորանքով, տեխնիկական միջոցներով: Ֆինանսական միջոցները տրամադրվում են ՀՀ ՊՆ կողմից: Կառավարման համակարգում ընդգրկված ներքին շահակիցները ռեսուրսներով ապահովվածության վերաբերյալ դժգոհություններ չեն արտահայտել:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Որոշումների ընդունման գործընթացում դասախոսական կազմի և կուրսանտների մասնակցությունը սահմանափակ է՝ պայմանավորված կառավարման ուղղահայաց համակարգով: Դասախոսական կազմից հիմնականում պաշտոնով ավագներն են ընդգրկված ՌՀ գիտական խորհրդի կազմում: Կոլեգիալ մարմիններում կուրսանտների ներգրավվածությունը սահմանափակված է Սերժանտական խորհրդի նախագահի պասիվ մասնակցությամբ գիտական խորհրդի նիստերին: Նոր ձևավորված գիտական խորհրդի կազմում կուրսանտների ներկայացուցիչներ ընդհանրապես ընդգրկված չեն:

Կառավարման մարմինների որոշումները և պետերի հրամանները մշտապես ուղարկվում են ֆակուլտետներ և ամբիոններ: Որոշումների հետ առնչություն ունեցողները հիմնականում հաստատում են իրենց՝ որոշումներին ծանոթ լինելը ստորագրությամբ: Ըստ անհրաժեշտության՝ կազմակերպվում են նաև հանդիպումներ կուրսանտների հետ (այդ թվում՝ առկա է կուրսանտներին որոշումների մասին տեղեկացնելու ամենօրյա հնարավորություն առավոտյան հավաքների ժամանակ):

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Որպես երկարաժամկետ պլանավորում՝ ՌՀ-ում մշակվում է հնգամյա հեռանկարային զարգացման պլան, որը հաստատվում է ՀՀ ՊՆ կողմից: Կարճաժամկետ պլանավորումն իրականացվում է պատրաստության և ուսումնական գործընթացի հիմնական միջոցառումների պլանով՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար: Վերջինս տրոհվում է կիսամյակային, եռամսյակային և ամսական պլանների՝ համապատասխան հաշվետվություններով, որոնք կազմվում են յուրաքանչյուր ստորաբաժանման կողմից: ՌՀ-ում առկա է պլանների կատարման նկատմամբ խիստ վերահսկողություն՝ զինվորական միջավայրին բնորոշ: Բոլոր մակարդակների պլաններում սահմանվում են առանձին գործողությունների կատարման պատասխանատուները և ժամկետները:

Չնայած տարբեր ժամկետներով պլանների առկայությանը՝ դրանք միասնական աստիճանակարգ չեն կազմում, մասնավորապես՝ առկա է խզում հնգամյա և տարեկան պլանների միջև: Վերջինիս, սակայն, որոշակիորեն պայմանավորված է նրանով, որ տարեկան պլաններն առավել կապակցված են ԶՈՒ նպատակներին:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Որոշումների կայացման համար անհրաժեշտ տեղեկությունների հիմնական աղբյուրը ՀՀ ԶՈՒ և ՊՆ են: ՌՀ-ն ձգտում է հաշվի առնել ոլորտի դինամիկ փոփոխությունները՝ մշտական կապ ունենալով ԶՈՒ հետ:

Պարբերաբար անցկացվում են հարցումներ կուրսանտների, ունկնդիրների և շրջանավարտների մասնակցությամբ: Շրջանավարտների վերաբերյալ տեղեկություններ տրամադրվում են ՀՀ ԶՈՒ կողմից: Ստացված տեղեկությունները հաշվի են առնվում կրթական ծրագրերի բարելավման համար: Ընդունելության ցուցանիշների դինամիկան ևս հաշվի է առնվում ՌՀ կողմից, սակայն այդ դինամիկան պայմանավորող գործոնների վերլուծություն չի իրականացվում:

2.5 Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ՌՀ-ում գրեթե բոլոր գործընթացների համար սահմանված են ընթացակարգեր, որոնց վարչարարությունն իրականացվում է առավելապես օպերատիվ՝ իրականացման յուրաքանչյուր ցիկլի արդյունքների և հաշվետվությունների հիման վրա. գործողությունը պլանավորվում է, իրագործվում է, կազմվում է հաշվետվություն, հաջորդ ցիկլում պլանավորվում է՝ հաշվի առնելով հաշվետվության արդյունքները:

ՌՀ-ում առկա է ձևակերպված քաղաքականությունների պակաս. առավել հաճախ գերակշռում է ավանդույթի ուժը:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Որակի ապահովման ներքին համակարգ ձեռնարկում նախատեսված են տարբեր գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման գործիքներ: ՌՀ-ում անցկացվում են հարցումներ, կազմվում են հաշվետվություններ, իրականացվում են դասալսումներ, որոնք հիմք են կրթական ծրագրերի իրականացման և այլ գործընթացների արդյունավետության գնահատման համար: Ստացված տեղեկությունների հավաստիության և հուսալիության գնահատման մեխանիզմներ, սակայն, նախատեսված չեն և չեն կիրառվում:

Արտաքին միջավայրից (առաջին հերթին՝ ԶՈՒ-ից և ՊՆ-ից) ստացված տեղեկությունների առնչությամբ օբյեկտիվ պատճառներով հուսալիության գնահատման մեխանիզմներ նախատեսված չեն:

Ստացված տեղեկություններն ամփոփվում են, սակայն հիմնականում չեն վերլուծվում:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

ՌՈՒՀ-ում առկա է գաղտնի և ոչ գաղտնի գործավարության հստակ տարանջատում:

ՌՀ կրթական ծրագրերի, շնորհվող որակավորումների և այլ գործունեության մասին տեղեկություններ պարբերաբար հրապարակվում են զանգվածային լրատվամիջոցներով՝ հեռուստատեսությամբ, «Կուրսանտ» եռամսյա հանդեսում, ՊՆ «Հայ զինվոր» շաբաթաթերթում, նաև ՌՀ համացանցային էջում (որպես ՀՀ ՊՆ էլեկտրոնային կայքի մաս), սակայն այդ հրապարակումներն ուղղակիորեն չեն անդրադառնում կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակին: Տեղեկությունների հրապարակման վերաբերյալ որոշումները հիմնականում կայացվում են ՊՆ կողմից:

Տեղեկությունների հրապարակման արդյունքները ՌՀ կողմից չեն գնահատվում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՀ կառավարման համակարգում որոշումների կայացման գործընթացը խիստ կանոնակարգված է: Չնայած կոլեգիալ մարմինների առկայությանը՝ զինվորական միջավայրը կարող է հանգեցնել միանձնյա որոշումների կայացման կոչումով բարձր կառավարիչների կողմից: Այսինքն՝ որոշումների կայացման իրապես կոլեգիալ լինելու վտանգը ոչ թե կանոնակարգային, այլ միջավայրային մակարդակում է:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ կառավարման համակարգի՝ ռեսուրսներով ապահովվածությունն երաշխավորված է այնքանով, որքանով այդ ռեսուրսները տրամադրվում եմ ՀՀ պետական բյուջեից՝ ՊՆ կողմից:

Թեև դասախոսական և կուրսանտական կազմերը լիարժեքորեն տեղեկացվում են իրենց վերաբերող որոշումների մասին, նրանց մասնակցությունը որոշումների կայացման փուլին ձևական է. կուրսանտների ներկայացուցիչները գիտական խորհրդում հարցեր չեն բարձրացնում և չեն ազդում որոշումների կայացման վրա: Նման իրավիճակը հատուկ է կառավարման ուղղահայաց համակարգին, սակայն առկա է կայացվող որոշումների և իրական կարիքների միջև խզման վտանգ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում պլանավորման և հաշվետվողականության տարբեր մակարդակների առկայությունը: Վերջինս թույլ է տալիս եզրակացնել, որ ՌՀ-ում կարևորվում են պլանավորման գործընթացը և պլաններին հետևելը, ինչն ապահովում է կառավարման համակարգի կողմից ՌՀ ամբողջ գործունեության լիարժեք վերահսկելիության հնարավորություն: Սակայն երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների միջև խզումը հանգեցնում է մի իրավիճակի, երբ ՌՀ առանձին օղակների գործունեությունը չի փոխկապակցվում ՌՀ երկարաժամկետ զարգացմանը:

ՌՀ-ում պլանների իրականացումն ապահովող կարևոր գործոն է բոլոր մակարդակի պլաններում պատասխանատուների և ժամկետների հստակեցումն, ինչը նաև հեշտացնում է հաշվետվողականության մեխանիզմների գործադրումը:

ՀՀ ԶՈՒ, ՊՆ և ՌՀ միջև սերտ կապերը թույլ են տալիս եզրակացնել, որ ՌՀ-ն ապահովված է կրթական ծրագրերին առնչվող ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությամբ: ՌՀ ձգտում է այլ գործընթացների վերաբերյալ տեղեկություններ ստանալ հարցումների և այլ գործիքների միջոցով և հաշվի առնել այդ տեղեկությունները որոշումներ կայացնելիս, սակայն նկատելի է ստացված տեղեկությունների հիման վրա վերլուծությունների պակաս: Արդյունքում՝ ՌՀ արձագանքը ստացված տեղեկություններին կարող է անարդյունավետ լինել:

Ձևակերպված քաղաքականությունների պակասը թույլ չի տալիս իրականացնել դրանց վարչարարությունը որակի կառավարման սկզբունքով: Ավելին՝ ավանդական հիմքերի վրա

խարսխված քաղաքականություններն ենթակա չեն վերանայման: Թեև սա արդյունք է զինվորական և համալսարանական մոտեցումների համակցման, այդ նույն համակցման արդյունք է ընթացակարգերի հստակ վարչարարությունը յուրաքանչյուր ցիկլի հիման վրա, ինչը թույլ է տալիս մշտապես բարելավել գործընթացների արդյունավետությունը:

Թեև ԶՈՒ-ից և ՊՆ-ից ստացվող տեղեկությունների հավաստիությունը կասկած չեն հարուցում, տեղեկատվության ներքին աղբյուրներից ստացվող տվյալները (հարցումների միջոցով և այլ մեթոդներով) հուսալիության գնահատման կարիք ունեն: Վտանգը հատկապես բխում է ՌՀ՝ զորամասի կարգավիճակից, որի պարագայում հարցման կամ քննարկումների մասնակիցները կարող են կաշկանդված լինել: ՌՀ-ում նկատելի է նաև տեղեկությունների մշակման (հատկապես՝ որակական վերլուծությունների) պակաս: Ըստ էության՝ տեղեկությունների ներհոսքի հետ կապված գործընթացների արդյունավետության գնահատման բացակայությունը կարող է հանգեցնել կայացվող որոշումների որակի անկման:

Տեղեկությունների հրապարակման առումով օբյեկտիվ սահմանափակումները և ՌՀ՝ սեփական տեղեկատվական հարթակի պակասը վտանգում են արդյունավետ կապի հաստատումը ՌՀ և հանրության միջև: Վերջինս կարող էր նպաստավոր լինել ՌՀ կառավարման համակարգի համար՝ թե որպես իր գործունեությանն ադեկվատ արձագանքի աղբյուր, թե որպես առավել նպաստավոր արտաքին միջավայրի ձևավորման հիմք:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ հաշվի առնելով ՌՀ-ում որոշումների կայացման գործընթացի հստակ կանոնակարգվածությունը, կառավարման համակարգի ռեսուրսային ապահովվածությունը, պլանների մշակման և վերահսկողության կարևորումը, գործողությունների կատարման պատասխանատուների և ժամկետների հստակությունը, ԶՈՒ-ից և ՊՆ-ից ստացվող տեղեկություններով ապահովվածությունը՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՌՀ-ն բավարարում է չափանիշի 2-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՌՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՌՀ երեք ֆակուլտետներում պատրաստվում են զինվորական մասնագետներ 8 մասնագիտությունների գծով: Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված երեք՝ «Հրետանային ստորաբաժանումների կառավարում» բակալավրի (հրետանային ֆակուլտետ), «Մոտոհրաձգային ստորաբաժանումների կառավարում» բակալավրի (համազորային ֆակուլտետ) և «Միավորումների, զորամասերի կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրերը (հրամանատարաշտաբային ֆակուլտետ) համապատասխանում են առկա՝ 2012թ. հաստատված պետական կրթական չափորոշիչներին:

Յուրաքանչյուր ծրագիր ներառում է ՌՀ առաքելությանը և զարգացման պլանին համապատասխանությանը վերաբերող բաժին: Թեև այդ բաժիններում ներկայացված հիմնավորումները լիարժեք չեն, այնուամենայնիվ կարելի է փաստել, որ կրթական ծրագրերի նպատակները համահունչ են ՌՀ առաքելությանը:

Ծրագրերում ներկայացված են կոմպետենցիաների շրջանակը և ուսումնառության վերջնարդյունքները: Վերջիններս համահունչ են ՈԱՇ-ի համապատասխան մակարդակների ձևակերպումներին: Վերջնարդյունքներ սահմանված են նաև յուրաքանչյուր դասընթացի համար:

Կրթական ծրագրի և դասընթացների վերջնարդյունքների համապատասխանությունը հավաստող քարտեզներ ՌՀ-ում առկա են, թեև դրանք ներառված չեն կրթական ծրագրերում: Ուսումնասիրված բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի միջև բովանդակային կրկնություններ չկան, իսկ առարկաների բովանդակային հաջորդականությունը պահպանված է:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները թվարկված են կրթական ծրագրերում: Թեև առարկայական նկարագրերի մշակման միասնական ձևաչափ ներդրված չէ, ՈԱ ձեռնարկում սահմանված են դասընթացների կամ ուսումնական մոդուլների նկարագրիչների պահանջներ: Որոշ դասընթացների թեմատիկ պլաններում և/կամ մեթոդական ձեռնարկներում յուրաքանչյուր դասի համար առանձնացված են տվյալ դասի թեման, դասի անցկացման մեթոդն, անհրաժեշտ ռեսուրսները, գրականությունն, ինչպես նաև դասի ակնկալվող արդյունքները: Ամբիոններում առկա են առարկայամեթոդական հանձնաժողովներ, որոնց գործունեությունը միտված է դասավանդման բարելավմանը: Այդուհանդերձ, ՌՀ-ում ըստ կրթական վերջնարդյունքների դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ձևակերպված քաղաքականություն չկա:

Ուսանողակենտրոնությունն սահմանափակված է ոլորտային առանձնահատկություններով, որոնց դրսևորումներից է կամընտրական դասընթացների բացակայությունը: Սակայն դասախոսական կազմը հետևում է կուրսանտների առաջընթացին, միշտ հասանելի է վերջիններիս համար, և դասերից դուրս իրականացվում են լրացուցիչ պարապմունքներ այն կուրսանտների համար, ովքեր դրա կարիքն ունեն: Ներքին շահակիցները նշում են, որ զորամասային՝ պակաս ուսանողակենտրոն միջավայրն ի օգուտ կուրսանտի է, քանի որ այն առավելագույնս նման է հետագա ծառայության միջավայրին:

Փորձագիտական խմբի կողմից իրականացված դասալսումների ընթացքում պարզվեց, որ կուրսանտները ստանում են հետադարձ կապ և օժանդակություն դասախոսից անմիջապես հանձնարարությունների կատարման ընթացքում:

3.3 ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

2016թ.-ին մշակվել և հաստատվել է ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և սովորողների գիտելիքների գնահատման կարգը»: Ըստ այդ կարգի՝ ՌՀ-ում գործում է սովորողների գնահատման բազմագործոն համակարգ: Կարգում սահմանված է ուսումնառողների գնահատման մեթոդաբանությունը:

Գործնական դասընթացների համար սահմանված են գնահատման նորմացույցներ՝ քանակապես չափելի ցուցանիշներ: Առավել տեսական դասընթացների համար առկա են գնահատման մեթոդական ցուցումներ: Ավարտական քննությունների գնահատման ընթացակարգ և չափանիշներ առկա են թե բակալավրիատի, թե մագիստրատուրայի համար (այդ թվում՝ թեզերի գնահատման):

Ակադեմիական ազնվության ապահովման նպատակով կուրսանտների և ունկնդիրների բոլոր քննություններն ու ստուգարքներն անցկացվում են հանձնաժողովներով. քննությունների ընթացքում տրվելիք հանձնարարությունները անհատականացված են: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովները համալրվում են ՊՆ և ԶՈՒ

ներկայացուցիչներով, սակայն մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովներում արտաքին անդամներ չեն ներգրավվում:

Գնահատականների բողոքարկման կարգ առկա է՝ ՀՀ ԶՈՒ կանոնակարգերի հիման վրա, սակայն բողոքարկման դեպքեր չեն եղել, ինչի պատճառները ՌՀ-ն դեռևս չի վերլուծել: Ակադեմիական ազնվության ապահովման՝ գործող մեխանիզմների արդյունավետության գնահատում ՌՀ-ում ևս չի իրականացվել:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

ՌՀ-ի կրթական ծրագրերի՝ այլ առաջավոր ծրագրերին բովանդակային համապատասխանությունն երաշխավորող մեխանիզմներ (օրինակ՝ բենչմարքինգի իրականացման ընթացակարգ) առկա չեն: Յուրաքանչյուր ծրագրի համար իրականացվել են օտարերկրյա որոշ ծրագրերի ուսումնասիրություններ և փորձի փոխառում, սակայն այդ գործընթացը կանոնակարգված բնույթ չի կրել:

Կուրսանտների շարժունությանը նպաստող գործոններից է կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և սովորողների գիտելիքների գնահատման կարգի առկայությունը, որով նախատեսվում է կրեդիտների փոխանցելիություն: Կրեդիտների հատկացումը ևս իրականացվում է՝ ըստ նշված կարգում ամրագրված գործոնների (առարկայի առաջնահերթություն, կուրսանտից պահանջվող աշխատաժամանակ), սակայն առանձին դեպքերում կրեդիտների փաստացի հատկացման համապատասխանությունը նշված կարգում սահմանված դրույթներին հիմնավորված չէ:

Փոխանակման ծրագրեր առկա չեն ոչ կուրսանտների, ոչ դասավանդողների համար: Իրականացվում են օտար լեզուների ուսուցման լրացուցիչ դասընթացներ, սակայն դրանք առավելապես նախատեսված են ադյունկտուրա դիմողների համար՝ ուղղակիորեն միտված չլինելով շարժունությանը:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՌՀ-ում մշակվել են կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներ, հաստատման կարգ, ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ, որոնք ներառված են «Որակի ապահովման ներքին համակարգ» ձեռնարկում:

Որպես կրթական ծրագրերի մշտադիտարկման և գնահատման գործիք՝ կիրառվում են կուրսանտների և ունկնդիրների հարցումները, դասալսումները, հետադարձ կապը ԶՈՒ-ից շրջանավարտների վերաբերյալ և ստաժավորման ընթացքում, ավարտական քննությունների հանձնաժողովների կարծիքները: Կրթական ծրագրերի վերանայումները պայմանավորող ամենանշանակալի հիմքերից են ոլորտի դինամիկ փոփոխությունները, որոնց մասին տեղեկությունները ստացվում են ԶՈՒ-ից և ՊՆ-ից:

Կրթական ծրագրերը վերանայվել են 2004, 2009, 2014, 2016 թթ.-ին համապատասխան ամբիոնների կողմից՝ ուսումնամեթոդական բաժնի աջակցությամբ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիտարկված ՄԿԾ-ներում կարևորագույն բաժինների վերլուծությունն, ինչպիսիք են՝ առաքելությանը և ռազմավարական պլանին համապատասխանությանը նվիրված բաժինը, կոմպետենցիաների շրջանակը, ուսումնառության վերջնարդյունքները և այլն, փորձագիտական խմբին թույլ է տալիս եզրակացնել, որ ծրագրերը համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին և ՈԱՇ-ին՝ միաժամանակ կազմելով ՌՀ գործունեության անբաժանելի մաս: Վերջնարդյունքների առկայությունը կրթական ծրագրի և դասընթացների մակարդակներում թույլ է տալիս հստակ պատկերացում կազմել շրջանավարտի ակնկալվող բնութագրի վերաբերյալ: Կրթական ծրագրի վերջնարդյունքների և

դասընթացների քարտեզագրման շնորհիվ ՌՈՒՀ-ը կարող է խուսափել ավելորդ դասընթացներից և բացահայտել նոր դասընթացների անհրաժեշտությունը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ձևակերպված միասնական քաղաքականություն ՌՀ-ում չկա: Յուրաքանչյուր դասընթացի մակարդակում ընտրված մեթոդների արդյունավետությունը ստուգվում է տարբեր մեխանիզմներով (դասալսումներ, հետադարձ կապ կուրսանտներից և շրջանավարտներից, քննարկումներ առարկայամեթոդական հանձնաժողովներում), սակայն միասնական քաղաքականության առկայությունը թույլ կտար միանգամից կիրառել վերջնարդյունքների ձեռքբերմանն առավել համապատասխանող մեթոդներ: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը դրական է գնահատում վերջնարդյունքների և մեթոդների սահմանված լինելը դասընթացների յուրաքանչյուր թեմայի մակարդակում, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ դիտարկված ծրագրերում մեթոդների ընտրությունը փաստացի իրականացվում է՝ ըստ վերջնարդյունքների. դա են վկայում նաև փորձագիտական խմբի կողմից իրականացված դասալսումների արդյունքները (դասախոսը, հստակ պատկերացնելով տվյալ դասաժամի ակնկալվող արդյունքները, հանձնարարությունների կատարման ընթացքում հետադարձ կապ է տրամադրում՝ միտված կուրսանտի առաջընթացին): Փորձագիտական խումբը կարծում է, որ դրական կլիներ նաև, եթե յուրաքանչյուր դասընթացի շրջանակում դասավանդման և ուսումնառության մեթոդներն ունենային առավել հետազոտական ուղղվածություն, ինչը քննադատական մտածողություն կձևավորեր ուսուցանվողների մոտ:

Ուսանողակենտրոնությունը ՌՀ-ում որոշ առումով զոհաբերված է՝ ի օգուտ մասնագիտական միջավայրին ընտելացմանը: Սակայն փորձագիտական խումբը դրական է գնահատում բոլոր կուրսանտների մոտ անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորումը կարևորելը, լրացուցիչ պարապմունքների հնարավորությունը և դասախոսների հասանելիությունը, ինչը փոխհատուցում է այդ բացը:

Սովորողների գնահատման համար սահմանված չափորոշիչների առկայությունը՝ պայմանավորված գնահատականների միարժեքության ապահովման ձգտմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՌՀ-ում առկա են գնահատման մեթոդների ընտրության քաղաքականություն (թեև ոչ լիարժեք ձևակերպված) և ընթացակարգեր, և մեթոդների ընտրությունը պայմանավորված է համապատասխան կրթական վերջնարդյունքներով: Գնահատման նման մոտեցումների ընտրությունն ինքնին նպաստում է գնահատման համակարգի օբյեկտիվությանը:

ՌՀ-ում դեռևս խնդրահարույց է բողոքարկման մեխանիզմը. բողոքարկումը կարող է ընկալվել՝ որպես անհամաձայնություն կոչումով բարձր սպայի որոշման հետ, ինչը զորամասում ողջունելի չէ, և հետևաբար՝ բողոքարկումները կաշկանդված են միջավայրով:

Այն, որ ՌՀ-ում կրթական ծրագրերի բենչմարքինգի ընթացակարգեր նախատեսված չեն, վտանգում է ծրագրերի արդիականությունը, առաջանցիկությունը և դրանցում բովանդակության և մեթոդների լավագույն փորձի ներառումը: Շարժունությանը նպաստող տարրերի բացակայությունը խոչընդոտում է կուրսանտների և դասավանդողների կողմից փորձի հնարավոր ձեռքբերումն այլ ռազմական ուսումնական հաստատություններում:

ՌՀ-ն մշտապես հետևում է կրթական ծրագրերում փոփոխությունների անհրաժեշտություն առաջացնող գործոններին՝ տարբեր մեխանիզմների զուգահեռ գործադրմամբ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ ՌՀ-ն ունի կրթական ծրագրերի շարունակական բարելավման հակվածություն և դրանով բնորոշվող քաղաքականություն:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ հաշվի առնելով ՌՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին, ՈԱՇ-ին և ՌՀ-ի գործունեությանը, ձևակերպված վերջնարդյունքների առկայությունը ծրագրի և դասընթացների մակարդակում, մեթոդական ուղեցույցներով ամրագրված՝ դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների հստակությունն ու կապը վերջնարդյունքների հետ, ծրագրերի մշտադիտարկման և բարելավման գործուն մեխանիզմների առկայությունը՝

փորձագիտական խումբն եզրակացնում է, որ ՌՀ-ն բավարարում է չափանիշի 3-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՌՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ՓԱՍՏԵՐ

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՌՀ-ում առկա է կուրսանտների ընտրության և ընդունելության հստակ ընթացակարգ, որն ամրագրված է «ՀՀ Պաշտպանության նախարարության Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգ» փաստաթղթի՝ «Համալսարանի բակալավրիատի դիմորդների ընտրությունը և ընդունելության հիմունքները» բաժնում, ըստ որի նախատեսվում է ընդունող հանձնաժողովի կազմավորում, սահմանվում է ընդունելության համար դիմելու ընթացակարգն, ընդունելությանը մասնակցելու համար դիմորդի կողմից ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ՌՀ առանձնահատկություններից ելնելով դիմորդներին լրացուցիչ զննումների ենթարկելու ընթացակարգը, քննությունների անցկացման և դրանց արդյունքների բողոքարկման կարգը:

«ՀՀ հիմնական, ավագ, միջնակարգ, հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության կանոնադրության» համաձայն՝ դիմորդների ներգրավվման գործընթացը ՌՀ-ում իրականացվում է հատուկ քարոզչական խմբերի կազմավորմամբ, որոնք, այցելելով ՀՀ ՊՆ զորամասերին ամրագրված տարբեր կրթօջախներ, իրականացնում են բացատրական, քարոզչական աշխատանքներ, հանդիպումներ են ունենում դպրոցների աշակերտների հետ: Այս նպատակով պատրաստվում են բուկլետներ, գովազդային վահանակներ: Տարբեր միջոցառումների շրջանակներում (օրինակ՝ ռազմագիտության օլիմպիադա, բաց դռների օր) կազմակերպվում են աշակերտների էքսկուրսիաներ ՌՀ տարածքում՝ ծանոթացնելով զինվորական ծառայությանը, սպառազինությանը ռազմական տեխնիկային: ՌՈՒՀ-ը մասնակցում է նաև կրթության էքսպոներին: Օգտագործվում են նաև հեռուստատեսության, ռադիոյի և համացանցի տրամադրած հնարավորությունները, մասնավորապես՝ ՊՆ կայքէջի ՌՀ-ին վերաբերող բաժնում տեղադրվում է ընդունելության ընթացակարգը:

[redacted]

Բացի բակալավրիատի կրթական ծրագրերից՝ ՌՀ-ն իրականացնում է նաև 1-ամյա պատրաստության ծրագիր ՀՀ բուհերի շրջանավարտների համար և 2.5-ամյա լրացուցիչ կրթական ծրագիր ՀՀ այլ բուհերի ուսանողների համար:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Կուրսանտների կրթական կարիքների վերհանմանն ուղղված պարբերաբար իրականացվող միջոցառում է կուրսանտների շրջանում հարցումների անցկացումը և

վերլուծությունը: Հարցումների անցկացման պարբերականությունը, դրանց արդյունքների կիրառման կարգը, հարցաթերթիկների նմուշները սահմանված են ՌՀ «Որակի ապահովման ներքին համակարգ» ձեռնարկում:

Կուրսանտների կարիքների վերհանման գործընթացում ներգրավված են նաև ՌՀ-ում գործող Կուրսանտական և Սերժանտական խորհուրդները: Սերժանտական խորհրդի նիստերի արձանագրությունները, սակայն, ցույց տվեցին, որ նիստերում հիմնականում քննարկվում են կազմակերպչական և կարգապահական բնույթի խնդիրներ:

Յուրաքանչյուր կուրսանտին կցված է իր խորհրդատուն, ում միջոցով ևս վեր են հանվում կուրսանտների կրթական կարիքները: Կուրսանտներն իրենց հուզող խնդիրները նաև բարձրաձայնում են դասակների հրամանատարների միջոցով:

Ընդհանուր առմամբ, ՌՀ-ում առկա են ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ, սակայն այդ մեխանիզմների արդյունավետության ուսումնասիրություն համալսարանի կողմից չի իրականացվել:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Ըստ «Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգ»-ի՝ կուրսանտների համար նախատեսված են ինքնապատրաստման ժամեր, որի ընթացքում վերջիններս պատրաստում են իրենց հանձնարարականները: Ինքնապատրաստման ժամերն ընթանում են դասախոսի ուղեկցությամբ, ինչը հնարավորություն է ընձեռում կուրսանտներին լրացուցիչ խորհրդակցել վերջինիս հետ: Ինքնապատրաստման ժամերը մտնում են կուրսանտների օրակարգի մեջ: Ինքնապատրաստման ժամերին տեղի են ունենում նաև օտար լեզուների ֆակուլտատիվ պարապմունքներ: Վերոնշյալ գործընթացը ՌՀ-ում վերահսկվում է հաշվետվողականության սկզբունքով: Այդուհանդերձ, փորձագիտական այցի ընթացքում բացահայտվեց, որ ինքնապատրաստման ժամերը, ըստ կուրսանտների կարծիքի, ոչ միշտ են նպաստում արդյունավետ ուսումնառությանը:

Առավել ցածր առաջադիմություն ունեցող կուրսանտների հետ ամբիոնների կողմից տարվում է լրացուցիչ աշխատանք: Բակալավրի 3-րդ և 4-րդ կուրսերի կուրսանտների դասացուցակի մեջ մտնում են «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» այցելություններ, որտեղ նրանք կարող են զարգացնել լրացուցիչ հմտություններ:

Կուրսանտների հետ խորհրդատվական աշխատանք տանելու նպատակով յուրաքանչյուր ուսումնական խմբի կցվում է դասղեկ-դասախոս: Դասղեկ-դասախոսի պարտականությունների մեջ մտնում է ապահովել կուրսանտների կրթական գործընթացի արդյունավետությունը, ինչպես նաև միջանձնային առողջ հարաբերությունները: ՌՀ-ում կա նաև հոգեբան:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

ՌՀ-ում կուրսանտի՝ վարչական աշխատակազմին դիմելու կանոնակարգ առկա է. այն հիմնված է զինվորական հիերարխիկության սկզբունքի վրա, այսինքն՝ կուրսանտն առաջին հերթին զեկուցագրով դիմում է դասակի հրամանատարին, վերջինս միջնորդում է ավելի բարձր ղեկավար օղակներին՝ ըստ վերադասության: ՌՀ-ում սահմանված է նաև ժամանակացույց, ըստ որի կուրսանտները հնարավորություն ունեն անմիջապես դիմելու ՌՀ պետին և նրա տեղակալներին, սակայն փորձագիտական խումբը հանդիպումների ընթացքում պարզեց, որ կուրսանտները խուսափում են օգտվել այդ հնարավորությունից՝ դա համարելով իրենց անմիջական ղեկավարի շրջանցում:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Կուրսանտների կարիերային նպաստող հատուկ ծառայություն ՌՈՒՀ-ում, որպես այդպիսին, առկա չէ: ՌՀ-ն, իր առանձնահատկությունից ելնելով, շրջանավարտների՝ աշխատաշուկայում պահանջված լինելու խնդիր չունի. նրանք բոլորը, ՌՀ-ն հաջողությամբ ավարտելու դեպքում, ծառայության են անցնում ՀՀ զինված ուժերում:

Կուրսանտների կարիերային ՌՈՒՀ-ում նպաստում են մի շարք մեխանիզմներ. կուրսանտներն անցնում են զորային ստաժավորում, ինչի ընթացքում տարբեր զորամասերում նրանք կատարում են այն գործառույթները, որոնք սպասվում են նրանց ծառայության անցնելիս: Կուրսանտի՝ զորային ստաժավորում անցնելու ընթացքում ՌՀ-ն հավաքագրում է տեղեկություն վերջինիս գրանցած արդյունքների մասին՝ կուրսանտի մոտ հետագայում առկա թերությունները շտկելու նպատակով: ՌՀ-ում գերազանցիկ կուրսանտները հնարավորություն են ստանում ընտրել իրենց ծառայության վայրն ուսումն ավարտելուց հետո: Հետագայում առավել բարձր պաշտոն զբաղեցնելու համար կուրսանտները վերադառնում են ՌՀ՝ վերապատրաստման, ինչը կարելի է համարել կարիերային նպաստող անուղղակի մեխանիզմ:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՌՀ բակալավրիատում սովորող կուրսանտները ներգրավվում են գիտահետազոտական աշխատանքներում՝ ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ գրելու, ինչպես նաև դասախոսական և կուրսանտական կազմի գիտական կոնֆերանսներում աշխատանքներ ներկայացնելու միջոցով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կուրսանտները ստանում են բավարար աջակցություն իրենց գիտական աշխատանքները կատարելու ընթացքում: ՌՀ-ում կազմակերպվում են տարբեր կոնֆերանսներ, որոնց կուրսանտները հնարավորություն են ունենում մասնակցել: Կուրսանտների՝ գիտահետազոտական աշխատանք կատարելու մեկ այլ ճանապարհ են բացում գյուտարարական-նորարարական հանձնաժողովները: Այդուհանդերձ կուրսանտների շրջանում գիտահետազոտական գործունեության մասնակցելու նախաձեռնողականությունը ցածր է:

Ունկնդիրների մագիստրոսական թեզերի թեմաներն առաջարկվում են ՊՆ կողմից կամ ունկնդիրը հանդես է գալիս սեփական թեմայի առաջարկով: Ունկնդիրների համար իրենց թեզերի շրջանակներից բխող փորձարարական աշխատանքներ իրականացնելիս հասանելի են ՌՀ և ՊՆ ռեսուրսները: Ունկնդիրների և կուրսանտների արժեքավոր նորարարություններն իրենց կիրառությունն են գտնում ՀՀ զինված ուժերում:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Իրենց իրավունքների խախտման մասին ՌՀ կուրսանտները հնարավորություն ունեն զեկուցել ըստ վերադասության. դասակների, վաշտերի հրամանատարներն ի պաշտոնե զբաղվում են խնդիրների վերհանմամբ:

Սերժանտական խորհուրդը հնարավորություն է ընձեռում կուրսանտներին առկա խնդիրների մասին բարձրաձայնել ուղղակիորեն: Այնուամենայիվ, Սերժանտական խորհուրդը ՌՀ-ում ունի ինքնուրույնության խնդիր. այն լիարժեք ինքնակառավարվող մարմին չէ: Սերժանտական խորհրդի կազմն ընտրվում է սերժանտների ընդհանուր ժողովի կողմից և հաստատվում ՌՀ-ի պետի կողմից: Ուսումնասիրված արձանագրություններից պարզ դարձավ, որ Սերժանտական խորհրդի ներկայիս ղեկավար կազմի ընտրություններին նվիրված նիստին արտահայտվել է միայն ԱՀՏԱ բաժնի պետը, ով մասնակցում է սերժանտների ընդհանուր ժողովի նիստերին: Սերժանտական խորհրդի նախագահը գիտական խորհրդի անդամ է, բայց նրա մասնակցությունը նիստերին պասիվ է: Գիտական խորհրդի նոր կազմում սերժանտական խորհրդի անդամ ընդգրկված չէ: Սերժանտական խորհրդում աղջիկ կուրսանտներ ներգրավված չեն:

ՌՀ-ում առկա է «Արագ արձագանքման արկղ» և «Պաշտպանության նախարարի փոստարկղ» որոնց միջոցով կուրսանտները կարող են նամակներ ուղարկել անմիջապես

Պաշտպանության նախարարություն: ՌՀ-ում կա նաև սպա-իրավաբան, ով ևս զբաղվում է կուրսանտների իրավունքների պաշտպանությամբ:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ՌՀ-ում կուրսանտին մատուցվող յուրաքանչյուր ծառայություն փաստաթղթավորվում է: Գ և ԿՈԱ բաժինն իրականացնում է շաբաթական, ամսական և տարեկան ամփոփում, նախաձեռնում է կուրսանտների հետ հանդիպումներ, ինչի արդյունքում կուտակվում է մատուցվող ծառայությունների մասին մեծ ծավալի տեղեկատվություն: Սակայն տրամադրված խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների որակի համակարգային գնահատում և վերլուծություն չի կատարվում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման և ընտրության հստակ մեխանիզմներ: [redacted] ՌՀ-ն իրականացնում է նաև 1-ամյա պատրաստության և 2.5-ամյա կրթական ծրագրեր, [redacted]

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՌՀ-ում իրականացվում է կուրսանտների կարիքների պարբերական ուսումնասիրություն՝ հարցումներ անցկացնելու միջոցով, առկա են և գործում են նաև կուրսանտին լրացուցիչ կրթական խորհրդատվություն տրամադրող մեխանիզմներ, վարչական աշխատակազմին դիմելու կանոնակարգը հստակ է: Այս ամենը վկայում է այն մասին, որ ՌՀ-ն ձգտում է հաշվի նստել կուրսանտների կարիքների և կարծիքների հետ և, ըստ այդմ, բաց և հասանելի է կուրսանտների համար:

ՌՀ-ն կուրսանտների կարիերայի հիմնական թիրախը համարում է զինված ուժերում նրանց ծառայության անցնելն ուսումն ավարտելուց անմիջապես հետո, ինչն, ըստ էության երաշխավորված է: Սակայն կուրսանտների կարիերայի նկատմամբ այդ մոտեցումն ունիվերսալ չէ, քանի որ կարիերայի զարգացման հնարավորությունները սահմանափակվում են:

Ողջունելի է, որ ՌՀ-ում այն կուրսանտները, ովքեր ունեն մղում դեպի հետազոտական աշխատանքը, ստանում են բավականաչափ աջակցություն, և ստեղծված են համապատասխան պայմաններ: Սակայն կա հետազոտական աշխատանքով զբաղվելու շահագրգռվածության ցածր լինելու խնդիր, ինչպես նաև կուրսանտների շրջանում գիտահետազոտական մթնոլորտ ստեղծելու ուղղությամբ տարվող քայլերը պարբերաբար և թիրախավորված չեն: Այս ամենի հիման վրա փորձագիտական խումբն եզրակացնում է, որ չնայած կուրսանտների հետազոտական հետաքրքրություններին ընդառաջ գնալու պատրաստակամությանը՝ ՌՀ-ն չունի այդ հետաքրքրությունների խթանման քաղաքականություն:

Փորձագիտական խումբը գնահատում է Սերժանտական խորհրդի դերը կուրսանտների կարիքների վերհանման և իրավունքների պաշտպանության հարցում, սակայն ներկայում Սերժանտական խորհրդի գործունեության մեջ նկատվում է ինքնուրույնության և ՌՀ կառավարման մարմիններում ներկայացվածության պակաս: Արդյունքում՝ Սերժանտական խորհրդի միջոցով կուրսանտների կարիքների վերհանումը և իրավունքների պաշտպանությունը երաշխավորված չէ: Անհրաժեշտ է նաև փաստել, որ Սերժանտական խորհրդում աղջիկ կուրսանտների բացկայությունը չի նպաստում վերջիններիս կարիքների անկաշկանդ վերհանմանը:

Դրական է այն, որ ՌՀ-ն ձգտում է ապահովել կուրսանտների համար արդյունավետ կրթական միջավայր՝ փորձելով կիրառել մատուցված ծառայությունների որակի գնահատման

մեխանիզմներ: Սակայն համակարգված վերլուծությունների բացակայությունը խոչընդոտում է կրթական միջավայրում և մատուցվող ծառայություններում առկա խնդիրների ամբողջական բացահայտմանը, վերջիններիս արդյունավետ հաղթահարմանը և շարունակական բարելավմանը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ հաշվի առնելով, որ ՌՀ-ում առկա է ուսանողների ընտրության և հավաքագրման հստակ ընթացակարգ, գործում են ուսանողների կարիքների վերհանման, աջակցման, խորհրդատվության տրամադրման, ուսումնական, մասնագիտական առաջընթացը խթանող մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՌՀ-ն բավարարում է չափանիշի 4-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՌՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ՓԱՍՏԵՐ

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար ՌՀ-ն իր առջև դրել է բարձր որակավորմամբ պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավման խնդիր: ՄՈՒՀ-ում պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության ընթացակարգերը հիմնված են ՀՀ ՊՆ 14.02.2013թ.-ի N 164 հրամանի և դրա հավելվածում ներկայացված կարգի վրա: Հաշվի առնելով համալսարանի առանձնահատկությունը՝ պրոֆեսորադասախոսական կազմը համալրվում է ՀՀ ԶՈՒ-ում երկարամյա ծառայության փորձ ունեցող համապատասխան մասնագիտությամբ պաշտոններ զբաղեցրած սպա մասնագետներով, ինչպես նաև երկարամյա ծառայության կապակցությամբ կենսաթոշակի անցած նախկին սպաներով:

Մագիստրոսական ծրագրերով կրթությունն իրականացնելու համար համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով հրավիրվում են այլ ՄՈՒՀ-երի առաջատար դասախոսներ, ինչպես նաև ՀՀ ՊՆ և ՀՀ ԶՈՒ բարձրաստիճան պաշտոնյաներ՝ անվճար հիմունքներով: Հրավիրված մասնագետների ձևակերպման համար հիմք են հանդիսանում ՀՀ ԶՈՒ-ում և ՀՀ ՊՆ-ում կիրառվող կանոնադրությունները՝ զինծառայողների դեպքում և ՀՀ աշխատանքային օրենսդրությունը՝ քաղաքացիական դասախոսների դեպքում:

ՄՈՒՀ-ը նաև զինվորական կառույց է, որն իր գործունեությունը վարում է ՀՀ ԶՈՒ խիստ և հստակ կանոնակարգված պահանջներին համապատասխան: Հետևաբար՝ զինծառայող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրությունը և համալրումը կատարվում են զինվորական ծառայության առանձնահատկություններից ելնելով՝ պաշտոնների անձնագրերին բավարարման պայմաններին համապատասխան՝ ՊՆ կողմից հայտարարված մրցույթների արդյունքների հիմքերով:

ՌՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականությունը, լինելով սահմանված ՀՀ ՊՆ կողմից և բխելով զինվորական կառույցին բնորոշ առանձնահատկություններից, համապատասխանում է համալսարանի ՄԿԾ-ների իրականացման պահանջներին, և այս առումով կիրառվող ընթացակարգերը կանոնակարգված են համապատասխան փաստաթղթերով:

Ռազմական համալսարանում դեռ չեն գործում պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության քաղաքականության արդյունավետության գնահատման ընթացակարգեր: Այս առումով փորձագիտական այցի ընթացում պարզ դարձավ, որ ՌՈՒՀ-ում առկա են

պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոններ, որոնց համալրումը չի իրականացվել շուրջ մեկ տարի, և այդ հաստիքների համալրման համար ՌՀ-ն առաջարկությամբ դիմել է ՀՀ ՊՆ՝ հաստիքին ներկայացվող պահանջների մեղմացման համար:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Փորձագիտական խմբի կողմից դիտարկված ՄԿԾ-ներում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ընդհանուր են ձևակերպված: ՄԿԾ-ներում նշվում է, որ պրոֆեսորադասախոսական կազմի 50%-ից ոչ պակասը պետք է ունենա գիտական աստիճան կամ կոչում և/կամ երկարամյա զինվորական ծառայության ստաժ:

Այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ում առկա են բոլոր հաստիքների զբաղեցման համար հստակ պահանջներ այդ հաստիքների անձնագրերում, որոնք արտացոլվում են պրոֆեսորադասախոսական կազմի համալրման համար անցկացվող մրցույթների հայտարարություններում: ՊՆ մրցույթի անցկացման վերջին փուլում մասնակցում են նաև Ռազմական համալսարանի ամբիոնների պետերը կամ համապատասխան ստորաբաժանումներից անձիք, ինչը կարելի է համարել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների ստուգման մեխանիզմ:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ՌՀ-ում գործում են դասախոսական կազմի պարբերական գնահատման ընթացակարգեր, որոնք նախատեսում են՝ կուրսանտների և ունկնդիրների կողմից դասախոսի գնահատման անանուն հարցումներ, ամբիոնների պետերի և ուսումնամեթոդական բաժնի կողմից դասալսումներ: Դասախոսական կազմի գնահատումն իրականացվում է նաև ամբիոնների պետերի կողմից՝ նրանց տարեկան անհատական պլանների կատարման վերահսկողությամբ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ պլաններում ներկայացված աշխատանքները չիրականցվելու դեպքում սահմանված կարգով դրանք տեղափոխվում են հաջորդ տարի, իսկ արդիականությունը կորցրած միջոցառումները, համալսարանի պետի թույլատվությամբ, չեն իրականացվում:

Որպես դասախոսական կազմի գործունեության գնահատման քաղաքականության արտաքին տարր՝ կարելի է դիտարկել նաև պետական ավարտական քննությունների հանձնաժողովներում շահագրգիռ վարչությունների ներկայացուցիչների ներգրավումն, ինչպես նաև զորային ստաժավորումների ընթացքում կուրսանտների և հետագա զինվորական ծառայության ժամանակ շրջանավարտների վերաբերյալ բնութագրերի և կարծիքների ստացումը, որոնց միջոցով կարծիք է ներկայացվում դասախոսական կազմի գործունեության վերջնարդյունքի հետ կապված:

Ռազմական համալսարանում մշակված և կիրառվող դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցաթերթիկներն ուղղված են կուրսանտների և ունկնդիրների կողմից դասախոսի մեթոդական և մասնագիտական որակների գնահատմանն, ինչպես նաև դասապրոցեսի կազմակերպման արդյունավետությանը: Փորձագիտական այցի ընթացքում հայտնի դարձավ, որ ունկնդիր մագիստրոսների հետ անցկացված հարցումների վերլուծության արդյունքում ի հայտ եկած խնդիրների լուծումը բերել է դասավանդման արդյունավետության բարձրացմանը:

Ամբիոնների պետերի և ուսումնամեթոդական բաժնի կողմից անցկացվող դասալսումներն իրականացվում են ըստ նախապես սահմանված ժամանակացույցի: Առկա են դասալսումների գնահատման չափորոշիչներ: Դասալսումներն իրականացվում են ամբիոնների պետերի և ուսումնամեթոդական բաժնի կողմից, փոխադարձ դասալսումների պրակտիկա ՌՈՒՀ-ում դեռևս չի կիրառվում: Դասալսման արդյունքների վերաբերյալ կազմվում են համապատասխան արձանագրություններ, որոնց արդյունքները քննարկվում են

դասախոսի հետ: Դասախոսական կազմի հետ հանդիպումները փաստեցին, որ այս գործընթացը ոչ ֆորմալ կերպով նպաստում է դասախոսների կողմից սեփական թերացումների գիտակցմանը:

Ռազմական համալսարանում՝ ըստ ցուցաբերած արդյունքների գնահատման, պարգևատրվում են լավագույն դասախոսները, կան մրցանակներ համալսարանի լավագույն ամբիոնի և ֆակուլտետի համար: ՄՈՒՀ-ում իրականացվում են նաև կիսամյակային և տարեկան ամփոփումներ, ուսումնամեթոդական հավաքներ, որտեղ քննարկվում են կրթական գործընթացում ի հայտ եկած խնդիրները և տարվում են աշխատանքներ դասախոսների մեթոդական որակների բարձրացման ուղղությամբ:

Ռազմական համալսարանի առանձնահատուկություններից ելնելով՝ սպա դասախոսների գործունեությունը դիտարկվում է որպես զինվորական ծառայություն, իսկ դասավանդման գործընթացը՝ դրա մաս: Այս առումով համալսարանի ղեկավարության կողմից զինծառայող դասախոսները խրախուսվում կամ ենթարկվում են տույժի՝ ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագրքով (21.03.2012 ընդունված ՀՀ օրենք) սահմանված կարգով:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

ՌՀ-ում առկա են դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, ինչպիսիք են՝ դասալսումների արդյունքում տրվող խորհրդատվությունները, սկսնակ դասախոսներին ցուցաբերվող օժանդակությունը, առաջատար դասախոսների բաց դասերի այցելությունը, դասախոսների անհատական պլաններում առկա ինքնակատարելագործմանն ուղղված գործունեությունը, ինչպես նաև ուսումնամեթոդական հավաքների ընթացքում դասախոսների հետ տարվող աշխատանքները: Գիտաժողովների մասնակցությունը դասախոսական կազմի կողմից և ամբիոնների միջև փորձի փոխանակումը նույնպես կարելի է դիտարկել որպես նրանց կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, որոնք պարբերաբար իրականացվում են:

Դասավանդող կազմի վերապատրաստումներին դասախոսների մասնակցությունը կախված է ՀՀ ՊՆ կողմից հատկացվող տեղերից, որոնք սահմանափակ են և ուղղակիորեն չեն արտացոլում ներքին և արտաքին գնահատման արդյունքում բացահայտված կարիքները: Այս առումով պետք է փաստել, որ համալսարանում դեռևս բացակայում են դասախոսների մասնագիտական որակների կատարելագործմանն ուղղված մեխանիզմներն՝ ըստ դասախոսների մասնագիտական կարիքների:

Տարվում են նաև աշխատանքներ պրոֆեսորադասախոսական կազմի՝ օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Դասախոսների ներգրավվածությունն օտար լեզուների վերապատրաստման դասընթացներին հիմնավորվում է ասպիրանտուրայում նրանց ուսումնառությունը շարունակելու նպատակով: Փորձագիտական այցի ընթացքում, սակայն, ՄՈՒՀ-ի անձնակազմի կողմից ընդգծվեց օտար լեզուներով դասավանդման կարիքը՝ հետագայում արտերկրից կուրսանտների կրթությունն ապահովելու համար: Օտար լեզուների մասով նշվեց նաև, որ օտար լեզուներ դասավանդողները նույնպես անցնում են վերապատրաստման դասընթացներ՝ իրենց մասնագիտական որակները բարձրացնելու նպատակով:

Ռազմական համալսարանում առկա է միտում գիտական աստիճաններով և կոչումներով դասախոսական կազմի ավելացման ուղղությամբ, սակայն դրա համար հստակ քաղաքականություն մշակված չէ:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Դասախոսական կազմի համալրումը ՀՀ ԶՈՒ-ում երկարամյա զինվորական ծառայության փորձ ունեցող սպա-մասնագետներով նպաստում է կուրսանտների մոտ պրակտիկ հմտությունների զարգացմանը: Սակայն ՌՀ-ում առկա չեն իրականացվող ՄԿԾ-

ների համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունության վերլուծություններ:

Փորձագիտական այցի շրջանակներում անցկացվող հանդիպումներում նշվեցին մի շարք փաստեր, որոնք վերաբերում էին Ռազմական համալսարանի դասախոսի հաստիքում զինվորական ծառայության գրավչությանը: Այդպիսիների շարքում էին՝ ռազմական ուսումնական հաստատությունում զինվորական ծառայության առանձնահատկությունները, զինվորական ծառայության հարմարավետ պայմանները, ինչպես նաև դասախոսական կազմի համար նախատեսված բարձր զինվորական կոչումները: Սակայն նախկինում հայտարարված մրցույթների մասնակիցների ցուցակներից պարզ դարձավ, որ կան որոշ թափուր պաշտոններ, որոնք զբաղեցնելու համար դիմումներ չէին ներկայացվել: Այդ պաշտոնները չեն համալրվում՝ կամ հայտարարված մրցույթներին մասնակիցների բացակայության, կամ մասնակիցների անհրաժեշտ պահանջներին չբավարարելու պատճառով: Սա հաշվի առնելով՝ առկա թափուր պաշտոնների զբաղեցման համար մրցույթային պահանջները որոշ դեպքերում ՌՀ կողմից ներկայացվել են վերանայման, և քայլեր են ձեռնարկվել պաշտոնի անձագրերի փոփոխման ուղղությամբ: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ թափուր հաստիքների առկայությունը չի խանգարում ՌՀ-ի բնականոն գործընթացներին:

Դասախոսական անձնակազմի միջին տարիքը բարձր է, ինչը հիմնականում պայմանավորված է դրան ներկայացված ՀՀ ԶՈՒ-ում երկարամյա զինվորական ծառայության փորձի պահանջով:

ՌՀ-ն, կրելով գրավչության տարբեր դասախոսական զինվորական անձնակազմի ներգրավման առումով, համալսարանի հոսունության խնդրի լուծումներում անմիջապես մասնակցություն չունի և կախված է ՀՀ ՊՆ-ից՝ ազատված պաշտոնների համալրման մրցույթների հայտարարման միջոցով: Այնուամենայնիվ, հոսունության տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ հոսունությունը դրական է (ներհոսքն ավելի շատ է, քան արտահոսքը): Համալսարանում առկա է նաև կադրային ռեզերվ: Ռազմական համալսարանի շրջանավարտների կողմից ՀՀ ԶՈՒ-երի ստորաբաժանումներում որոշակի զինվորական ծառայությունից հետո ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը համալրելու հնարավորությունը կարելի է համալսարանի համար դիտարկել որպես իր համար կադրերի պատրաստման տարր:

Ռազմական համալսարանում գործում են նաև երիտասարդ դասախոսների աջակցման ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ում առկա չէ պրոֆեսորադասախոսական կազմի բեռնվածության վերլուծություն՝ ըստ դասավանդման, հետազոտության և վարչական ոլորտներում իրականացրած աշխատանքների, ինչի մասին վկայում են պրոֆեսորադասախոսնական և ուսումնաօժանդակ կազմի որոշ ներկայացուցիչների կողմից մի քանի առարկայի դասավանդումը կամ գործառույթների համատեղումը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կան դասախոսներ, ովքեր միաժամանակ դասավանդում են մի քանի առարկա, և կան առարկաներ, որոնց դասավանդման համար փոխարինող դասախոսներ չկան:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Ռազմական համալսարանում որպես պրոֆեսորադասախոսական անձնակազմի առօրյա գործունեության արդյունավետության խթանման միջոց կիրառվում են «ՀՀ ԶՈՒ-ի կարգապահական կանոնագրքով» սահմանված խրախուսման ձևերն, ինչպես նաև անց են կացվում մրցույթներ՝ լավագույն դասախոսներին պարգևատրելու նպատակով:

ՌՈՒՀ-ում սահմանափակ է պրոֆեսորադասախոսական կազմի ռոտացիան, ինչը պայմանավորված է պաշտոնատար անձանց կողմից մինչ զինվորական ծառայության թոշակի անցնելը պաշտոնների զբաղեցմամբ: Պաշտոնական առաջխաղացումն իրականացվում է ոչ թե ըստ ցուցաբերած արդյունքների ուղղակիորեն, այլ ՀՀ ՊՆ 14.02.2013թ.-ի N 164 հրամանով սահմանված մրցութային կարգով: Ցուցաբերած արդյունքները կարող են հաշվի առնվել և անուղղակի ազդեցություն ունենալ մրցույթի արդյունքների վրա, սակայն հստակ

քաղաքականություն և ընթացակարգեր այս առումով դեռևս չկան՝ պայմանավորված այս ուղղությամբ ՊՆ կողմից վերջնական որոշման կայացման հանգամանքով:

Ռազմական համալսարանում գործում են սկսնակ դասախոսների աջակցման մեխանիզմներ, որոնք ամրագրված են պատրաստության հաստատված պլաններում, այդ թվում՝ նախատեսվում է մասնակցություն առաջատար դասախոսների դասերին, գիտական կոնֆերանսներին և ուսումնամեթոդական հավաքներին:

Բացակայում են դասախոսական կազմի շարժունությանը նպաստող և շարժունությունը խրախուսող մեխանիզմներ: Այդուհանդերձ, ստեղծված են պայմաններ, որպեսզի դասախոսները կարողանան այլ բուհերում ձևակերպվել ասպիրանտներ՝ առանց աշխատանքից կտրվելու: [redacted]

Համաձայն ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի՝ գործում են դասախոսական կազմի տարակարգեր (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, ավագ դասախոս, դասախոս), սակայն նրանց տրվող աշխատավարձերը տարբերակված չեն և գիտական կոչումների համար հավելավճարներ նախատեսված չեն:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի գործառույթներն ամրագրված են գործառնական պարտականությունների վերաբերյալ ՊՆ հրամանով:

Փորձագիտական այցի շրջանակներում ստացված արձագանքների համաձայն՝ Ռազմական համալսարանի «ամբիոն» և «ֆակուլտետ» օղակներում նշում էին իրենց բավարարվածությունը եղած կադրերի թե համալրվածության, թե որակի առումներով: Որպես վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության արդյունավետության գնահատման տարր կարելի է դիտարկել համալսարանում իրականցվող գործունեության վերաբերյալ կիսամյակային և տարեկան ամփոփումները՝ պայմանավորված զինվորական ծառայության պահանջներով: Սակայն վարչական և ուսումնաօժանդակ կազմի անհրաժեշտության վերլուծություն չի իրականացվում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՈՒՀ-ն իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար օգտվում է ՊՆ կողմից խիստ կանոնակարգված պրոֆեսորդասախոսական կազմի համալրման ընթացակարգերից, ինչը նպաստում է բարձր որակավորմամբ պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավման հնարավորության ստեղծմանը:

Այն, որ ՄԿԾ-ներում պրոֆեսորադասախոսական կազմին առաջադրված ընդհանուր պահանջներից գոնե մեկի (գիտական աստիճանի կամ ծառայության երկարամյա փորձի) առկայությունը համարվում է դասախոսների համալրվածության բավարար պայման, կարող է հանգեցնել միայն մեկ պայմանի կատարմանն ուղղված քաղաքականությանը: Այս առումով ՄԿԾ-ների իրականացման համար երկարաժամկետ զինվորական ծառայության փորձը՝ որպես դասախոսական կազմին ներկայացված պահանջ, արդեն իսկ ապահովվում է ՀՀ ԶՈՒ կողմից. սա կարող է ռիսկ հանդիսանալ մյուս ներկայացված պահանջի՝ գիտական աստիճաններով և կոչումներով դասախոսական կազմով համալրվածության անտեսմանն այն պայմաններում, երբ գիտահետազոտական գործունեությամբ զբաղվելու համար խրախուսման համակարգային ընթացակարգեր չկան:

ՌՀ-ում գործող պաշտոնների անձնագրերը թույլ են տալիս սահմանել հստակ պահանջներ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության ժամանակ, սակայն որոշ հաստիքների թափուր լինելու հանգամանքը, համապատասխան թեկնածուների բացակայությունը և այդ պաշտոնների անձնագրերի վերանայման՝ ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված առաջարկները վկայում են պաշտոնների անձնագրերի պահանջների

անընդհատ վերլուծության և արդիականության տեսանկյունից դրանց դիտարկման կարիքների մասին:

Դրական է, որ համալսարանն ունի պրոֆեսորադասախոսական կազմի պարբերական գնահատման համար սահմանված մեխանիզմներ, սակայն ներդրված մեխանիզմների վերլուծության բացակայությունը հնարավորություն չի ընձեռում դատել դրանց արդյունավետության մասին: Դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումները հիմնականում կապված չեն դասախոսական կազմի գնահատման արդյունքում բացահայտված կարիքների հետ և պլանավորվում են ՀՀ ՊՆ կողմից, ինչի հետևանքով գնահատման արդյունքում բացահայտված խնդիրներն ստանում են իրավիճակային լուծումներ: Պատճառահետևանքային հստակ կապով չամրագրված կատարելագործման միջոցառումները չեն կարող հանգեցնել ՄՈՒՀ-ի համակարգային զարգացմանը և առաջընթացին: Որպես դասախոսական կազմի օտար լեզուների ուղղությամբ վերապատրաստման հիմնական անհրաժեշտություն բերվում է ասպիրանտուրա նրանց ընդունվելը, ինչն առավելապես իրավիճակային լուծում է և միտված չէ դասախոսական կազմի համակարգված կատարելագործմանը: Այս գործընթացների ոչ նպատակային լինելը խոչընդոտում է դասավանդողների շարունակական զարգացմանը, ՄԿԾ-ների միջազգայնացման և շարժունության գործընթացներին:

Դասախոսական կազմի կայունությունը պայմանավորված է ՀՀ ԶՈՒ-ում դասավանդողների համալրման սահմանված պահանջներին համապատասխանող սպա-մասնագետների առկայությամբ: Այսինքն՝ ՌՈՒՀ-ն իր համար կադրերի պատրաստման ուղղությամբ ունի անուղղակի մասնակցություն, այն է՝ երկարամյա զինվորական ծառայության փորձ ձեռք բերած իր շրջանավարտներով համալրման հնարավորություն: Այս հանգամանքը կարող է ունենալ դրական ազդեցություն համալսարանի բազայի հիման վրա պրակտիկ աշխատանքային փորձ ձեռքբերած դասախոսներով համալրվելու տեսանկյունից: Սակայն գիտական աստիճաններով դասախոսական կազմով ապահովվածությունը ՀՀ ԶՈՒ կազմից կարող է իրականացվել բացառիկ դեպքերում, և դրա գիտակցումը բերել է ՄՈՒՀ-ում հետբուհական կրթության իրականացման ներդրման անհրաժեշտության գիտակցմանն, ինչը հաշվի է առնված ՌՈՒՀ-ի զարգացման հեռանկարային պլանում: Հաշվի առնելով հիմնական դասավանդողների ծանրաբեռնվածության ծավալներն ու դրա պատճառով նրանց հետազոտությամբ զբաղվելու հնարավարության սահմանափակությունը՝ համատեղող դասախոսներ ներգրավումը համալսարանի կրթական գործընթացներում դրական է, քանի որ վերջիններս իրենց հետ բերում են հետազոտական նոր ներուժ:

ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ցուցաբերած արդյունքների ազդեցության անուղղակիությունը հետագա պաշտոնական առաջխաղացման մեջ կարող է հանգեցնել դասավանդողների մոտ մոտիվացիայի անկմանը և հետագա զարգացման փոխարեն բերել լճացման: Այս առումով գիտական գործունեության տեղային խրախուսման մեխանիզմները չեն կարող փոխարինել համակարգային մոտեցումը, և դրանով զբաղվելը դասավանդողների կողմից կարող է դիտարկվել՝ որպես հավելյալ ծանրաբեռնվածություն՝ հանգեցնելով այդ գործունեությամբ զբաղվելու նրանց հետաքրքրվածության նվազեցմանը: Սկսնակ դասախոսների կատարելագործման համար համալսարանում առկա են հստակ ընթացակարգեր, ինչը նպաստում է նրանց արագ և արդյունավետ ներգրավմանը կրթական միջավայր: Դրական է նաև այն, որ ՄՈՒՀ-ը աջակցում է իր դասախոսներին այլ բուհերում որպես ասպիրանտ ձևակերպվելուն՝ առանց աշխատանքից կտրվելու, ինչով օժանդակում է իր դասախոսական կազմի որակների զարգացմանը և այդ ուղղությամբ մոտիվացիայի ձևավորմանը: Այնուամենայնիվ, գիտական աստիճան ունեցող դասախոսների թիվը ՌՈՒՀ-ում քիչ է, ինչը ՌՀ-ի վարած կադրային քաղաքականության թերացումն է:

Դասախոսական կազմի ծանրաբեռնվածության վերլուծության բացակայությունը կարող է խոչընդոտել կրթության արդյունավետ կազմակերպմանը (զինվորական պրոֆեսորադասախոսական կազմի ծառայության վեցօրյա շաբաթվա ձևաչափը, հաշվի առնելով նաև նրանց ներգրավվածությունը օրվա վերակարգերում, կարող է ստեղծել ոչ բարենպաստ պայմաններ վերջիններիս գործունեության համար):

Փորձագիտական խումբը դրական է գնահատում վարչական և ուսումնաօժանդակ կազմով ՌՀ ներկայիս ապահովվածությունը և բոլոր պաշտոնների գործառույթների հստակ սահմանված լինելը, սակայն վարչական և ուսումնաօժանդակ կազմի անհրաժեշտության գնահատման բացակայության պայմաններում հնարավոր չէ երաշխավորել սահմանված գործառույթների օպտիմալությունը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ հաշվի առնելով, որ համալսարանում գործում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության, գնահատման ընթացակարգեր, ՄԿԾ-ների նպատակների իրականացման համար առկա է անհրաժեշտ մասնագիտական որակներով պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, քայլեր են ձեռնարկվում պրոֆեսորդասախոսական կազմի որակավորման բարձրացման ուղղությամբ՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՌՀ-ն բավարարում է է չափանիշ 5-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՌՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ՓԱՍՏԵՐ

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՌՈՒՀ-ը չունի հետազոտական ոլորտում իր հավակնություններն արտահայտող առանձին ռազմավարություն: Սակայն հետազոտական ոլորտի ընդլայնման և զարգացման հեռանկարի վերաբերյալ ՌՈՒՀ-ի պատկերացումներն արտացոլված են ՌՀ զարգացման հեռանկարային պլանում:

Լինելով առավել կիրառական ուղղվածության կրթական հաստատություն՝ հետազոտական ոլորտում նախկինում ՌՀ-ն մեծ հավակնություններ չի ունեցել: Միայն վերջերս, վերակազմավորվելով որպես համալսարան, սկսել է կարևորել հետազոտական ուղղվածությունը:

Հետազոտական գործունեության վերաբերյալ դրույթներ համալսարանի առաքելության գործող սահմանման մեջ բացակայում են: Սակայն այցի ընթացում փորձագիտական խումբը ծանոթացավ ՌՈՒՀ-ի մշակած նոր առաքելությանը, որում պատշաճ տեղ է հատկացված հետազոտության ոլորտին: Միևնույն ժամանակ, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այս նոր առաքելությունը դեռևս ամբողջովին կիսելի չէ ՌՈՒՀ-ի բոլոր շահակիցների կողմից:

Կարելի է փաստել, որ ՌՀ-ն նոր է սկսում զարգացնել հետազոտական բաղադրիչը: Եվ այս գործընթացին ուղղված նշանակալի քայլերից պետք է առանձնացնել ՌՈՒՀ-ում մագիստրոսական կրթություն իրականացնող՝ ՀՇՖ նորաբաց ֆակուլտետի կայացման իրողությունն, ինչպես նաև՝ «ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի 2015-2020 թթ. զարգացման հեռանկարային պլանում» ադյունկտուրայի և մասնագիտական խորհրդի ստեղծման ծրագրերի առկայությունը:

ՌՈՒՀ-ում իրականացվող հետազոտական աշխատանքների թեմաների հաստատման համար հիմք են ընդունվում ՀՀ ԶՈՒ միջոցառումների ծրագրերը և գերակա խնդիրներն, ինչպես նաև զարգացման ռազմավարական ուղղությունները:

ՊՆ-ի կողմից մշակված «Ռազմական գիտության զարգացման տեսլականը» փաստաթղթով սահմանվում են հետազոտությունների առաջնահերթ ուղղությունները, որոնց շրջանակում ՌՈՒՀ-ի կողմից մշակվում և ՊՆ-ի հաստատմանն են ներկայացվում

մագիստրոսական թեզերի թեմաները: Թեզերի պաշտպանության հանձնաժողովներում, սակայն, ՀՀ ՊՆ կամ ԶՈՒ ներկայացուցիչներ ներգրավված չեն:

Թեև հետազոտական առաջնահերթությունները հիմնականում սահմանվում են ՊՆ-ի կողմից, ՌՈՒՀ-ը նույնպես կարող է հանդես գալ իր նախաձեռնություններով և առաջարկություններով: Այնուամենայնիվ, հետազոտական ոլորտում իր հավակնություններն արտահայտող փաստաթղթերի մշակման գործընթացում ՌՀ-ն հանդես է գալիս ավելի շատ որպես մասնակից, քան նախաձեռնող: Միևնույն ժամանակ՝ ՌՈՒՀ-ում բացակայում է գիտահետազոտական աշխատանքների որակի, արդյունավետության և այդ աշխատանքներին հատկացվող ռեսուրսների բաշխվածության վերլուծություն:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հետազոտական աշխատանքը ՌՈՒՀ-ում նոր գործընթաց է, և հետազոտական ծրագրերի իրականացման երկարաժամկետ ու միջնաժամկետ ծրագրերն արտացոլված են ՌՀ զարգացման պլանում՝ կրթությունն եռաստիճան դարձնելու և մասնագիտական խորհուրդներ ստեղծելու հավակնություններով:

Միևնույն ժամանակ, փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ ՌՀ-ն ոչ միշտ է կարողանում հետևողական լինել իր երկարաժամկետ ռազմավարությանն ու միջնաժամկետ ծրագրերին, քանի որ անմիջականորեն կապված լինելով ՊՆ-ին՝ հետազոտությունների իր շրջանակը հարմարեցնում է վերջինիս և ԶՈՒ արագ փոփոխվող ծրագրերին և պահանջներին: Մասնավորապես՝ ՌՀ-ի հետազոտական առաջնահերթությունները սահմանում է ՊՆ-ն՝ համապատասխանեցնելով իր ռազմավարությանն, ընտրած քաղաքականությանն ու տվյալ պահին երկրի ԶՈՒ-ի նոր մարտահարավերներին:

Հետազոտական աշխատանքների իրականացման կարճաժամկետ ծրագրերը և ընթացակարգերը հստակ մշակված են և արտացոլվում են ամբիոնների տարեկան պլաններում և ՊԴԿ անհատական պլաններում: Այնուամենայնիվ, ՌՈՒՀ-ում յուրաքանչյուր ամբիոնի կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները միայն վիճակագրական բնույթ ունեն. արդյունքները վերլուծված չեն արդյունավետության և ազդեցության տեսանկյունից, և այդ հետազոտությունների ընթացքի և արդյունքների մշտադիտարկում չի իրականացվում:

Ինչպես նշվում է ինքնավերլուծությունում՝ ՌՈՒՀ-ը չունի ֆինանսական ազատություն և անհրաժեշտ հետազոտական լաբորատորիաներ, հետազոտությունների համար ֆինանսական միջոցները հատկացվում են ՊՆ-ի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ, ըստ անհրաժեշտության, դասախոսների հետազոտությունների համար ՌՈՒՀ-ը պատրաստակամորեն ապահովում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ռեսուրսներ՝ լաբորատորիաներ, զորամասեր և այլն:

ՌՈՒՀ-ում ուսանողների միջև կազմակերպվում են «Նորարարական և փորձարարական աշխատանքների» և դասախոսների միջև՝ «ՀՀ ԶՈՒ փորձի ուսումնասիրման և փոխանակման» հետազոտական աշխատանքների մրցույթները: Լավագույն աշխատանքների համար թե ուսանողները, և թե դասախոսները խրախուսվում են ՊՆ-ի կողմից:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ՌՈՒՀ-ում, ընդհանուր առմամբ, հետազոտությունների իրականացման և զարգացման փաստաթղթավորված հստակ քաղաքականություն և ընթացակարգեր առայժմ առկա չեն: Թերևս, հետազոտությունների իրականացման ընթացակարգեր մշակված են միայն մագիստրոսական կրթության մակարդակում՝ հրամանաշտաբային ֆակուլտետում:

ՌՈՒՀ-ում հետազոտական աշխատանքների համակարգումն իրականացվում է ՌՀ-ի Գ և ԿՈԱ բաժնի կողմից: 2014թ.-ին հաստատված «Որակի ապահովման հայեցակարգում» սահմանված է, որ «ՌՀ-ի որակի ապահովման համակարգում ներառված գործընթացները, մեխանիզմները, չափորոշիչներն ու ընթացակարգերը պետք է հնարավորություն ընձեռեն գնահատելու գիտահետազոտական գործունեության որակը», սակայն, հետազոտական գործունեության որակի գնահատում և դրանց հիման վրա վերլուծություններ ՌՀ-ն դեռևս չի իրականացրել:

Պետք է նաև նշել, որ հետազոտական աշխատանքներում ակադեմիական ազնվությունն երաշխավորելու և գրագողությունը կանխարգելելու համար միջոցառումներ ՌՈՒՀ-ում նույնպես չեն իրականացվում:

Ընդհանուր առմամբ, ՌՈՒՀ-ը չի կիրառում հետազոտական աշխատանքներով զբաղվելու խրախուսմանը միտված քաղաքականություն՝ գիտական աստիճանների և կոչումների համար սահմանված չեն հավելավճարներ, հետազոտական աշխատանքով զբաղվելու դասախոսների հիմական մոտիվացիան կարիերայի առաջընթացի հնարավորությունն է:

ՌՀ-ն յուրաքանչյուր տարի կազմակերպում է դասախոսական և կուրսանտական գիտական կոնֆերանսներ, մեթոդական գիտաժողովներ, որտեղ իրենց զեկույցներով և հետազոտական աշխատանքներով հանդես են գալիս նաև մասնակիցներ այլ հաստատություններից: Տպագրվում են կոնֆերանսների զեկույցների համառոտագրերը: Հակառակ գործընթացը նույնպես առկա է՝ ՌՀ-ի ուսանողներն ու դասախոսները մասնակցում են այլ ՄՈՒՀ-երում անցկացվող կոնֆերանսների և գիտաժողովների: Այնուամենայնիվ, ներկայացված հետազոտական աշխատանքները հաճախ չեն համապատասխանում ՌՈՒՀ-ի կողմից մշակված հետազոտությունների իրականացման չափանիշներին: Մասնավորապես՝ ուսումնառողների միջև կազմակերպվող գյուտարարական և նորարարական աշխատանքների մրցույթներում ներկայացված հետազոտական աշխատանքների վերլուծությունը ցույց տվեց, որ լուրջ հետազոտությունների կողքին մեծաթիվ են բովանդակային առումով բավականին թույլ աշխատանքները, ինչը թերևս ոչ մի կերպ չի տեղավորվում «նորարարության», առավել ևս՝ «գյուտի» համատեքստում:

ՊԴ կազմի միայն փոքր մասն է ակտիվորեն ներգրավված հետազոտական գործընթացներում, ընդ որում՝ դասախոսների կողմից իրականացվող հետազոտությունները հիմնականում անհատների նախաձեռնողական ջանքերի արդյունք են: Թեև ադյունկտուրայում/ասպիրանտուրայում սովորելու համար ՊՆ-ն ամեն տարի հատկացնում է որոշակի տեղեր և ֆինանսավորում, այնուամենայնիվ գիտական աստիճան ունեցող դասախոսների թիվը ՌՈՒՀ-ում սակավ է, ավելին՝ դասավանդում են նաև բակալավրի կրթական աստիճանով դասախոսներ:

ՌՈՒՀ-ում իրականացվող հետազոտության արդյունքները հիմնականում չեն առևտրայնացվում:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՌՀ-ում դասավանդողներն ունեն խիստ սահմանափակ թվով հրապարակումներ օտարերկրյա մասնագիտական ամսագրերում, հիմնականում՝ ԱՊՀ երկրների գիտական պարբերականներում, սակայն տպագրված հետազոտական աշխատանքները մեծամասամբ նախաձեռնվում են դասախոսների կողմից: Միջազգային կոնֆերանսների մասնակցությունը նույնպես եզակի դեպքեր են: Դա պայմանավորված է նաև ՌՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի օտար լեզվի, մասնավորապես՝ միջազգային գիտական լեզվի՝ անգլերենի, տիրապետման ոչ բավարար մակարդակով: Որոշ համատեղ ծրագրեր իրականացվում են ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի մասնագետների հետ: [redacted]

Ելնելով ՌՈՒՀ-ի նեղ մասնագիտացվածությունից և միջազգային հետազոտական պարբերականներում ՌՀ-ում կատարված հետազոտությունների արդյունքների

հրապարակայնության սահմանափակումներից՝ բնական խոչընդոտ է ստեղծվում ոլորտի հետազոտությունների միջազգայնացման գործընթացի համար: Սակայն գաղտնիությամբ չսահմանփակված հետազոտությունների միջազգայնացման ուղղված մեխազնիմներ ՌՈՒՀ-ի կողմից նույնպես չեն կիրառվում:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ՌՈՒՀ-ում թեև հետազոտության ադյունքների և ուսումնառության գործընթացի փոխկապակցման հաստատված և կայուն մեխանիզմներ չկան, սակայն որոշակի տարրեր առկա են: Համալսարանում իրականցվող լավագույն հետազոտական աշխատանքները ներկայացվում են ՊՆ համապատասխան վարչություն, և հավանության արժանանալով, մշակվում և գործնական կիրառության են դրվում ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումներում կամ ՌՈՒՀ-ում՝ որպես դասավանդման մեթոդական գործիք:

ՌՀ-ում չի իրականացվում հետազոտական գործունեության արդյունավետության գնահատում՝ ուսումնական գործընթացի վրա ազդեցության տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, պետք է նկատել, որ ամբիոնների կողմից մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտահետազոտական աշխատանքների արդյունքում հիմնականում մշակվում և հրատարակվում են ռազմամասնագիտական և մեթոդական գրականություն, մեթոդական ձեռնարկներ:

Ընդհանուր առմամբ՝ ՌՈՒՀ-ում գործող հետազոտության և կրթական գործընթացի փոխկապակցման վերոնշյալ գործընթացները հնարավոր չէ որակել իբրև կայուն մեխանիզմներ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՈՒՀ-ն հետազոտությունների ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն չունի, ինչը, թերևս, բացատրվում է այն փաստով, որ հետազոտական ուղղվածությունը համեմատաբար նոր է համալսարանի համար: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՌՀ-ի կողմից մշակված նոր առաքելությում շեշտադրված են հետազոտական բաղադրիչի վերաբերյալ դրույթներն, ինչը հեռանկարում կարող է հանգեցնել ՌՈՒՀ-ում հետազոտական ոլորտի զարգացմանը և կայացմանը:

Միևնույն ժամանակ, մի կողմից, կարելի է դրական գնահատել այն փաստը, որ ՊՆ-ն է սահմանում հետազոտական առաջնահերթությունները ՌՀ-ի համար՝ համապատասխանեցնելով դրանք ԶՈՒ մարտահրավերներին, ինչն ապահովում է թեմաների արդիականությունը, մյուս կողմից՝ դա որոշակիորեն սահմանափակում է հետազոտական ոլորտի զարգացմանն ուղղված ՌՈՒՀ-ի նախաձեռնողականությունը և առաջանցիկությունը:

Թեև ՌՀ-ում յուրաքանչյուր տարի ուսանողների շրջանում կազմակերպվում են գյուտարարական և նորարարական աշխատանքների մրցույթներ, սակայն դրանցում թույլ, ոչ հետազոտական աշխատանքների ներառվածությունը ենթադրում է ՌՀ-ի կողմից դրանց քանակի, և ոչ թե որակի կարևորումը, և հանձնաժողովի կողմից այդպիսի աշխատանքների ընդունումը կարող է արժեզրկել նաև մրցույթին ներկայացված՝ իրականում բարձրարժեք հետազոտությունները:

Ինչ վերաբերում է ՊԴ կազմի կողմից իրականացվող հետազոտություններին, ապա դրանք իրագործվում են հիմնականում դասախոսների սեփական նախաձեռնությունների շնորհիվ՝սեփական հետաքրքրությունների շրջանակում: Սա հետևանքն է ՌՀ-ի կողմից հետազոտական տիրույթի զարգացմանն ուղղված մոտիվացիոն մեխանիզմերի մշակման և ներդրման գործում լուրջ բացթողումների. արդյունքում՝ գիտական ատիճան և կոչումներ ունեցող դասախոսների քանակը քիչ է, ինչն, ակնհայտորեն, իր բացասական ազդեցությունն է ունենում նաև կրթական գործընթացի որակի վրա:

Թեև ՌՈՒՀ-ում առկա է հետազոտական գործընթացը կանոնակարգող ստորաբաժանում՝ Գ և ԿՈԱ բաժինը, փորձագիտական խմբի համոզմամբ, բաժնի աշխատաքները խիստ

ծանրաբեռնված են, և միաժամանակ երկու հիմնարար տիրույթներով զբաղվածությունը կարող է հանգեցնել թե՛ կրթության որակի, և թե՛ հետազոտության ոլորտներում իրականացվող աշխատանքների արդյունավետության անկմանը:

ՌՈՒՀ-ում գիտական հետազոտության զարգացմանը միտված հստակ քաղաքանության, ինչպես նաև հետազոտական արդյունքների՝ արդյունավետության և ազդեցության տեսանկյունից վերլուծությունների բացակայությունը կարող է հանգեցնել հետազոտական ոլորտում իրականացվող աշխատանքների ինքնանպատակ լինելուն և խոչընդոտել հետազոտական գործունեության հետագա զարգացմանն, ինչպես նաև բարելավմանը միտված գործողությունների իրականացմանը:

ՌՈՒՀ-ը չի կարևորում հետազոտությունների միջազգայնացումը: Դրա պատճառներից մի մասն օբյեկտիվ են՝ պայմանավորված միջազգային պարբերականներում դրանց հրապարակայնության սահմանափակումներով: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարծում է, որ շատ հետազոտություններ ենթակա են միջազգային հարապարակման և հնարավոր, օրինակ՝ ՀԱՊԿ-ի կամ ՆԱՏՕ-ի շրջանակում, ինչը կնպաստի ՌՀ-ի ճանաչելիությանը, միջազգային վարկանիշի բարձրացմանը:

ՌՀ-ն չունի հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների ու դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող քաղաքականություն, ինչը նվազեցնում է հետազոտական գործունեություն ծավալելու ՊԴ կազմի և ուսումնառողների շահագրգռվածությունը, վտանգում է ուսումնառողների շրջանում հետազոտական հմտությունների և վերլուծական կարողությունների ձևավորումը:

Թեև ինքնավերլուծությունում նշված է, որ որպես ռազմաուսումնական հաստատություն՝ ՌՀ-ն կարևորում է ուսումնական գործընթացների փոխկապակցումը հետազոտական գործունեության հետ, այնուամենայնիվ ուսումնական գործընթացում ներառվում են միայն հետազոտությունների արդյունքների որոշ տարրեր, այդ դեպքերը կրում են իրավիճակային բնույթ և չեն իրականացվում հստակ գործող մեխանիզմների միջոցով: Վերոնշյալը միանաշանակ չի նպաստում ուսումնական գործընթացում գիտական և հետազոտական արդյունքների ներդրման միջոցով դասընթացների պարբերական թարմացմանն ու արդիականացմանը:

ՌՈՒՀ-ում իրականացվող հետազոտական աշխատանքները հիմնականում սահմանափակվում են ԶՈՒ ներմուծված նոր զենքի, զինատեսակի շահագործման և ներդման վերաբերյալ անհրաժեշտ դասընթացի մշակմամբ, մինչդեռ պետք է նորագույն տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի կիրառման հիման վրա ապահովել երկրի պաշտպանության ոլորտի մրցունակությունն, այսինքն՝ սահմանել հետազոտական ձգտումների առավել բարձր շեմ և ապահովել գիտահետազոտական գործունեության առաջանցիկությունը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ հաշվի առնելով, որ ՌՈՒՀ-ն առայժմ չունի հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն, հստակ մշակված քաղաքականություն և ընթացակարգեր, դեռևս չի կարևորում հետազոտական գործունեության միջազգայնացումը, չի կիրառում հետազոտական աշխատանքի զարգացմանը միտված մոտիվացիոն մեխանիզմներ, գիտական հետազոտությունները հիմնականում իրականացվում են միայն անհատական նախաձեռնությունների ձևով, ազդեցության գործակցով ամսագրերում հրապարակումները խիստ սակավաթիվ են, ինչպես նաև թույլ է հետազոտական և ուսումնական գործընթացների կապը՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՌՀ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՌՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

ՓԱՍՏԵՐ

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Ռազմական համալսարանի գործունեության նպատակներից է ՀՀ ԶՈՒ համար սպա-մասնագետների և հրամանատարների պատրաստումը: Այս առումով համալսարանի տարածքում մեծամասամբ առկա են ռազմական ուսուցմանն ուղղված հիմնական ենթակառուցվածքները և ռեսուրսները: Բացի այդ՝ ուսումնանյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների արդիականացումը ՌՀ 2015-2020 թթ. զարգացման հեռանկարային պլանի հիմնական ուղղություններից է:

Ռազմական համալսարանը մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար մշտադիտարկում է անհրաժեշտ ռեսուրսների և ենթակառուցվածքների առկայությունը ՌՈՒՀ-ում: Փորձագիտական այցի ընթացքում հայտնի դարձավ, որ ՌՀ-ն ՄԿԾ-երի իրականացման կարիքներից ելնելով, հայտեր է ներկայացնում ՀՀ ՊՆ՝ տեխնիկական միջոցներով հագեցվածության մակարդակը բարձրացնելու, դրանց թարմացման և արդիականացման ուղղությամբ, և այդ հայտերը հիմնականում բավարարվում են ՀՀ ՊՆ կողմից:

ՄՈՒՀ-ը օգտվում է նաև ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումներում առկա տեխնիկական և դաշտային միջոցներից՝ արտագնա պարապմունքների, պրակտիկաների և զորային ստաժավորման համար: Մագիստրատուրայի ունկնդիրներն ունեն նաև հնարավորություն դիտորդի կարգավիճակով մասնակցել ՀՀ ԶՈՒ-ում իրականացվող զորավարժություններին և կատարել դրանց ընթացքի և արդյունքների վերլուծություն:

Ժամանակակից պահանջներին համապատասխան տեխնիկական միջոցներով առավելապես հագեցված է Ռազմական համալսարանի հրամանատարաշտաբային ֆակուլտետը, որտեղ իրականացվում են մագիստրոսական կրթական ծրագրերը: Տեխնիկական միջոցներն օգտագործվում են մագիստրոսական ծրագրերով նախատեսված տարատեսակ պարապմունքների, այդ թվում՝ հրամանատարաշտաբային վարժությունների և մարտական իրադրության մոդելավորման համար: Ֆակուլտետի ունկնդիրներին ուսումնառության ընթացքում տրամադրվում են անհատական օգտագործման համակարգիչներ:

Բակալավրի կրթական ծրագրերով, ինչպես նաև համալսարանի ունկնդիրների համար առկա են սպառազինության և ռազմական տեխնիկայի վարժասարքեր, ուսումնական հրաձգարան: ՄՈՒՀ-ում առկա ուսումնական միջավայրին նպաստող տարրերից է նաև ուսումնառության հետ համատեղ զինվորական ծառայությունը և զորամասին հատուկ պայմանները, որոնք կուրսանտների, դասախոսական կազմի և ՀՀ ԶՈՒ և ՀՀ ՊՆ վարչությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներում որակվեցին որպես ապագա սպա-մասնագետների պատրաստության նպաստող մեխանիզմներ: Այս առումով Ռամական համալսարանը համալրված է նաև զորամասերին բնորոշ ենթակառուցվածքներով և ռեսուրսներով, ինչպիսիք են՝ ճաշարանը, զորանոցները, որոնց կից առկա են լսարաններ, մարզական գույք և այլ միջոցներ կուրսանտների ուսումնամարտական պատրաստությունն ապահովելու համար, առկա է նաև բուժկետ՝ համալրված անհրաժեշտ բժշկական սարքավորումներով և դեղորայքով, կահավորված մարզական, սպառազինություն և ռազմական տեխնիկա, մարտական հատուկ հանդերձանք, կապի միջոցներ, զորավարժադաշտեր, ավտոդրոմ: Կուրսանտներին տրվում են նաև պլանշետ-համակարգիչներ իրենց մասնագիտությանն առնչվող էլեկտրոնային գրականությամբ, սակայն նրանց կողմից համացանցի օգտագործումը ՌՀ տարածքում արգելված է, ինչը պատճառաբանվում է տեղեկատվության հնարավոր արտահոսքի և գաղտնիության ռեժիմի խախտման ռիսկերի ստեղծմամբ:

ՌՈՒՀ-ն ունի նաև նիստերի դահլիճ նախատեսված հանդիպումների և քննարկումների կազմակերպման համար, ինչպես նաև կոնֆերանս դահլիճ՝ գիտաժողովների և սեմինարների անցկացման համար:

Որպես կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի ձևավորման տարր՝ կարելի դիտարկել նաև այն, որ քննական շրջանում ուսուցանվողներին թույլ են տալիս ազատվել վերակարգերից, իսկ մոտիվացման տեսանկյունից՝ լավագույն կուրսանտներին տրամադրվում է անվանական կրթաթոշակ:

Այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դեռևս առկա է ուսումնական միջավայրի բարելավման անհրաժեշտություն՝նյութատեխնիկական բազայի համալրման տեսանկյունից: Այդ նպատակով ՌՀ-ում նախատեսվում են իրականացնել վերանորոգման աշխատանքներ:

7.2 ՄՈՒՀ-ն իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Ռազմական համալսարանը չունի ինքնուրույնություն ֆինանսական ռեսուրսների կառավարման համար, և այս գործառույթներն իրականացվում են ՀՀ ՊՆ կողմից: Սակայն ՌՀ-ն է իրականացնում իր ծախսերի նախնական պլանավորում՝ միջնաժամկետ ծախսային ծրագրերի և տարեկան բյուջետային նախահաշիվների ձևաչափով: ՄՈՒՀ-ը համապատասխան հայտեր է ներկայացնում ՀՀ ՊՆ, որոնք հիմնականում բավարարվում են:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՀՀ ՊՆ կողմից համալսարանը կայուն կերպով ապահովված է ֆինանսական, տեխնիկական և ուսումնամարտական պատրաստությունն ապահովող այլ ռեսուրսներով, ինչպես նաև ենթակառուցվածքների բարելավմանն ուղղվող ուժերով և միջոցներով:

Հավելյալ ռեսուրսների անհրաժեշտության դեպքում առկա է որոշ հասարակական կազմակերպություններին և ֆոնդերին դիմելու պրակտիկա, որոնք արդեն իսկ ՄՈՒՀ-ում իրականացրել են ՌՀ-ի զարգացմանն ուղղված միջոցառումներ:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն ՌՀ-ում ձևավորված չէ: Բաշխումն իրականացվում է ՀՀ ՊՆ կողմից՝ ՌՀ-ին տրամադրելով անհրաժեշտ տեխնիկական, գույքային, պարենային, ֆինանսական և այլ միջոցներ՝ արդեն իսկ հստակեցված կարգով: ՊՆ ներկայացվում են նախահաշիվներ, որոնք ձևավորվում են ստորաբաժանումների կողմից ներկայացված պահանջների հիման վրա: Նախահաշիվները թարմացվում են նախորդի փաստացի կատարման հիման վրա:

ՌՀ-ում իրականացվող ՄԿԾ-ների ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեից: Ըստ այդմ՝ ծրագրերի շարունակականության ապահովմանն ողղված գործողությունների անհրաժեշտություն ֆինանսական կառավարման դաշտում չկա. շարունակականությունն ապահովված է, քանի որ միջոցները հատկացվում են ՊՆ կողմից՝ հաշվի առնելով ԶՈՒ-ում հրամանատարական կադրերի նկատմամբ կայուն պահանջարկը:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

ՄԿԾ-ների իրականացման համար հիմնականում առկա են անհրաժեշտ ռեսուրսները՝ դիդակտիկ նյութերի, վարժասարքերի, լսարանների և լսարանային գույքի, այդ թվում՝ դասապրոցեսի ապահովման ժամանակակից տեխնիկական միջոցների, լաբորատորիաների, հանդիպումների և քննարկումների կազմակերպման համար նախատեսված դահլիճի, մարզական ավանի, սպառազինության և ռազմական տեխնիկայի, մարտավարական

ուսումնական դաշտերի և այլ հատուկ միջոցների տեսքով, որոնք ձևավորում են սպա-մասնագետների պատրաստման անհրաժեշտ ուսումնական միջավայրը: Գրադարանում առկա է ավելի քան 40000 միավոր գիրք, որից շուրջ 15000-ն ուսումնամասնագիտական գրականությունն է: Բացի գրքերից՝ առկա է նաև ավելի քան 30000 քարտեզ: Գրադարանային ֆոնդը համալրման աղբյուրներից են նվիրատվությունները: ՌՀ-ի գրադարանը անդամագրված չէ որևէ գիտական հանդեսի կամ ամսագրի, որոնցով համալրումը հիմնականում իրականցվում է ՊՆ համակարգում գործող ներքին կապերի միջոցով: ՌՀ-ի գրադարանը անդամագրված չէ նաև միջազգային կամ հայաստանյան գիտահետազոտական ցանցերին: Ինտերնետային ռեսուրսների հասանելիությունը ՌՀ-ում սահմանափակված է՝ տվյալների անվտանգության նկատառմամբ:

Կրթական գործընթացներում օգտագործվող ռեսուրսային բազան ներառում է ոչ միայն ՌՀ, այլև ՊՆ այլ օղակների ռեսուրսներ:

ՌՀ-ի ռեսուրսային բազայի՝ ՄԿԾ-ի վերջնարդյունքներին համապատասխանության գնահատումն իրականացվում է ուսումնական կիսամյակի և տարվա արդյունքների ամփոփ-ման ժամանակ:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ՌՀ-ում տեղեկատվության կառավարումն ու փաստաթղթավորումն իրականացվում են ՊՆ «ՀՀ ՊՆ գործավարության կարգը հաստատելու մասին» հրամանի և ՀՀ ՊՆ հրամանով հաստատված «ՀՀ ԶՈՒ գաղտնիության ռեժիմի ապահովման վերաբերյալ» հրահանգի հիման վրա:

Ոլորտային առանձնահատկություններով պայմանավորված՝ ՌՀ-ում առկա է բոլոր գործընթացների հնարավորինս փաստաթղթավորման ձգտում:

Համաձայն զարգացման հեռանկարային պլանի՝ նախատեսված է ՌՀ-ում ստեղծել փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային ներքին ցանց, ինչի ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ՌՀ-ում առկա է բուժկետ, որը ծառայում է շուրջօրյա, նաև տոնական և ոչ աշխատանքային օրերին: ՌՀ-ն ապահովված է հիվանդասենյակներով, ատամնաբուժարանով և այլն: Կուրսանտները պարբերաբար ենթարկվում են բուժ. զննության: ՌՀ-ն ապահովված է նաև հատուկ մեքենաներով, որոնք, ըստ անհրաժեշտության, կարող են տեղափոխել կուրսանտներին զինվորական հոսպիտալներ՝ հետագա բուժման կամ անհապաղ բժշկական օգնություն ցուցաբերելու համար: ՌՀ-ում աշխատում է նաև հոգեբան:

Համալսարանում անվտանգության ապահովումն իրականացվում է ԶՈՒ կառուցակարգերով՝ զինվորական ծառայության անվտանգության ապահովման իրավական հիմքերով:

Որպես հատուկ կարիքավոր ուսուցանվողներ ՌՀ-ում դիտարկվում են ծնողազուրկ, ընտանեկան, սոցիալական կամ այլ խնդիրներ ունեցող զինծառայողները, որոնց նկատմամբ ՌՈՒՀ-ի ղեկավարության, անմիջական պետերի և կցագրված խորհրդատու-սպաների կողմից իրականացվում է հատուկ հսկողություն: Ֆիզիկական խնդիրներ ունեցող կուրսանտներ ՌՀ-ում չեն կարող լինել՝ զինվորական ծառայության պահանջներին համապատասխան ընդունելության առանձնահատկություններով պայմանավորված: Հատուկ ֆիզիկական կարիքներ ունեցողների համար հարմարություններ ՌՀ-ում չկան:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ՌՀ-ում ներքին շահակիցներին տրամադրվող ռեսուրսների օգտակարության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներն են շրջանավարտների, դասավանդողների, կուրսանտների և ունկնդիրների շրջանում անցկացվող հարցումները:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ շենքային, գրադարանային և այլ պայմաններից բավարարվածության աստիճանը միջին մակարդակի է: Վերջինիս պատճառները, սակայն, չեն վերլուծվել: Կուրսանտները և շրջանավարտները նշեցին, որ այժմյան պայմաններն ավելի լավն են, քան նախկինում, մասնավորապես՝ բարելավվել են տեխնիկական միջոցները:

ՌՀ կողմից իրականացվում է ռեսուրսների մաշվածությունը գնահատում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՌՀ-ն կարևորում է ուսումնանյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների արդիականացումը՝ որպես զարգացման հեռանկարային պլանի հիմնական ուղղություններից մեկը: Ուսումնական միջավայրի նմանությունը ծառայության միջավայրին իրապես կարող է դրական ազդեցություն ունենալ ուսումնառության արդյունավետության վրա:

Ֆինանսական կառավարման հարցերում ՊՆ-ից կախվածությունը սահմանափակում է ռեսուրսների հատկացման վերաբերյալ որոշումների ինքնուրույն կայացումն, ինչը կարող է հանգեցնել ռեսուրսների բաշխման ոչ թե ըստ ՌՀ կարիքների և առաջնահերթությունների, այլ ըստ ՊՆ առաջնահերթությունների: Միևնույն ժամանակ, չնայած ֆինանսական ինքնուրույնության բացակայությանը, ՌՀ-ն ներկայում չունի ֆինանսական միջոցներից զրկվելու կամ ֆինանսական ճգնաժամի հանգելու վտանգ: Այդ մասին է վկայում նաև ՌՈՒՀ-ի կողմից նախահաշիվների, որպես կանոն, բավարարման փաստը:

Առկա ռեսուրսային բազան հարուստ է և բազմատեսակ, ինչը պայմանավորված է՝ յուրաքանչյուր դասընթաց անհրաժեշտ ռեսուրսներով ապահովելու մոտեցմամբ: Հաշվի առնելով նաև ԶՈՒ ռեսուրսների հասանելիությունը՝ կարելի է եզրակացնել, որ ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվածությունը կայուն է:

Համացանցին հասանելիության կամ գիտահետազոտական ցանցերին անդամակցության բացակայությունը սահմանափակում է կուրսանտների և ունկնդիրների կողմից ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումն ուսումնական և գիտահետազոտական գործունեության մեջ, տեղեկատվության մատչելիությունը, բազմազանությունը, նոր ուսուցման մեթոդների և եղանակների կիրառումը, ինչը խոչընդոտում է տեղեկատվության հետ տեխնոլոգիաներով ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացմանը: Համացանցին հասանելիությամբ կամ գիտահետազոտական ցանցերին անդամակցությամբ պայմանավորված տեղեկատվության արտահոսքի ռիսկերը ժամանակակից տեխնիկական միջոցներով հնարավոր է չեզոքացնել, իսկ դրանց ներդրումն ուսումնական և հետազոտական գործունեության մեջ կնպաստի ժամանակակից կրթական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը, գիտական հոդվածների շտեմարաններին անվճար հասանելիությանը, սեփական էլեկտրոնային ռեսուրսների քանակի ավելացմանը, առցանց կրթության հարթակների և հեռավար կրթության տրամադրման հնարավորության ստեղծմանը:

Ողջունելի է, որ փաստաթղթավորման մոտեցումները ՌՀ-ում հստակ են, իսկ տեղեկությունները՝ մնայուն: Սակայն բոլոր գործընթացների հնարավորինս փաստաթղթավորման ձգտումը հանգեցնում է մեծ թվով փաստաթղթերի առկայության, ինչը վտանգում է տեղեկությունների համակարգվածությունն ու մատչելությունը:

Առողջապահական ծառայությունների առկայությունը և անվտանգության կարևորումը դրական են գնահատվում փորձագիտական խմբի կողմից: Սակայն հատուկ կարիքներ ունեցողների համար պայմանների բացակայությունն անհնար է դարձնում համապատասխան դասավանդողների կամ վարչական և ուսումնաօժանդակ կազմի անդամների լիարժեք գործունեությունը համալսարանում, մինչդեռ հատուկ կարիքների առաջացման ռիսկերը ռազմական ոլորտում բարձր են:

Փորձագետները կարևորում են ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատմանն ուղղված հարցումների անցկացումը, սակայն ոչ լիարժեք բավարարվածության պատճառների պատշաճ վերլուծության բացակայությունը վտանգում է ռեսուրսային բազայի զարգացումն առավել նպատակային ուղղություններով:

ՌՈՒՀ-ի հետագա զարգացման համար նյութատեխնիկական առկա բազան հնարավոր է բավարար չլինի, ինչը կդժվարեցնի հնարավոր փոփոխությունների կառավարումը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ հաշվի առնելով ուսումնանյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների արդիականացման ՌՀ ձգտումները, ֆինանսապես ապահովվածությունը, կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով կայուն ապահովվածությունը, ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ ուսումնասիրությունների կարևորումը՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՌՀ-ն բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՌՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ՓԱՍՏԵՐ

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՌՀ-ն, ելնելով իր առանձնահատկություններից, ունի ներքին հաշվետվողականության համակարգ՝ հստակ սահմանված ընթացակարգերով և ժամկետներով: Հաշվետվողականությունը կանոնանկարգված է ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի 12.10.2017թ. «Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ստորաբաժանումներում արդյունքների ամփոփման պարբերականությունը և ներկայացվող հաշվետվությունների կարգը կանոնակարգելու մասին» հրամանով: Բացի այդ, ՌՀ պետը յուրաքանչյուր տարի համալսարանի գործունեության վերաբերյալ հաշվետվություն է ներկա-յացնում ՀՀ պաշտպանության նախարարին, որը ՌՀ-ի խորհրդի նախագահն է:

Կարելի է փաստել, որ գործող հաշվետվողականության համակարգը խիստ հիերարխիկ է և առավելապես ուղղահայաց: Հաշվետվությունների հետ կապված հարաբերությունները հիմնականում կարգավորվում են ՊՆ կողմից: Միևնույն ժամանակ, ՌՈՒՀ-ում հասարակությանը ներկայացվող հաշվետվությունների հստակ կանոնակարգված մեխանիզմներ առկա չեն: Հանրությանը ներկայացվող հաշվետվողականության օրինակներ կարելի է դիտարկել տարբեր գիտաժողովները, ծնողական ժողովները, ՀՀ ՊՆ «Զինուժ» հեռուստածրագրում, «Հայ զինվոր» ՀՀ ՊՆ շաբաթաթերթում, «Կուրսանտ» ՌՀ-ի եռամսյա հանդեսում ՌՈՒՀ-ի գործունեության լուսաբանումը:

Պետք է նշել, որ որոշ դեպքերում ՌՈՒՀ-ի կողմից հանրությանը ներկայացվող հաշվետվությունները սահմանափակված են օբյեկտիվորեն՝ պայմանավորված ՌՀ առանձնահատկություններով և տեղեկատվության գաղտնիությամբ:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

ՌՀ գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, նորություններն ու հայտարարությունները հասարակությանը հասանելի են դառնում հիմնականում ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության միջոցով:

ՌՈՒՀ-ի վերաբերյալ նյութերի հրապարակումն իրականացվում է Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվող ՀՀ ՊՆ «Զինուժ» հեռուստածրագրի, «Հայ զինվոր» ՀՀ ՊՆ շաբաթաթերթի, «Կուրսանտ» ՌՀ-ի եռամսյա հանդեսի, բուկլետների և տարբեր կրթօջախներում կազմակերպվող հանդիպումների և դասախոսությունների միջոցով: Համացանցի միջոցով կապը հասարակության հետ ՌՀ-ն ապահովում է ՀՀ ՊՆ պաշտոնական կայքի միջոցով:

Փորձագիտական խմբի կողմից ՊՆ-ի կայքի ուսումնասիրությունից պարզվեց, որ կայքում առկա է համալսարանի վերաբերյալ առանձնացված էջ, որտեղ ներկայացված է տեղեկատվություն ՌՀ-ի կառուցվածքի, ֆակուլտետների, մասնագիտությունների վերաբերյալ՝ ընդհանուր դրույթներով: Միևնույն ժամանակ ներկայացված տեղեկատվությունը համապարփակ չէ՝ համալսարանի գործունեության վերաբերյալ նորությունները ներկայացվում են ընդհանուր լրահոսի միջոցով:

ՌՈՒՀ-ի կողմից չի հրապարակվում որևէ ֆինանսական փաստաթուղթ, ինչպես նաև հասարակությանը հասանելի չեն ՌՀ-ի կողմից ներկայացվող կրթական գործընթացի վերաբերյալ հաշվետվությունները: Ընդհանուր առմամբ, հասարակության համար ամբողջովին թափանցիկ կարելի է համարել միայն ՌՀ ընդունելության ընթացակարգը:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող որոշակի մեխանիզմներ ՌՈՒՀ-ում, անկասկած, գործում են: Այդպիսիք են՝ բաց դռների օրերը ՌՀ պետի և տեղակալների մոտ (ՌՀ պետի հետ հանդիպումից պարզ դարձավ, որ քաղաքացիները ցանկացած պահի կարող են անարգել ընդունելություն գտնել իր մոտ), ծնողական ժողովների արդյունքում ստացված տեղեկատվությունը, դպրոցներ իրականացվող այցելությունների ընթացքում հանրության կողմից իրականացվող հարցադրումների հիման վրա ՊՆ առաջարկությունների ներկայացումը, ՀՀ ՊՆ թեժ գիծը: Միևնույն ժամանակ, ՌՈՒՀ-ում գործում են հստակ և կայուն հետադարձ կապի մեխանիզմներ աշխատաշուկայի հետ (ԶՈՒ): ՌՀ-ի շրջանավարտները 100 տոկոսով ապահովված են աշխատատեղերով, և նրանց մեծ մասը, ծառայության անցնելուց հետո էլ չեն դադարում կապված լինել ՌՈՒՀ-ին՝ պարբերաբար այստեղ անցնելով վերապատրաստումներ: Բացի այդ, հետադարձ կապի ապահովման միջոց է նաև շրջանավարտների վերաբերյալ զորամասերից պարբերաբար ստացվող արձագանքը:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Ինչպես նշվում է ինքնավերլուծությունում՝ ՌՀ-ն միտված է ապահովելու հասարակության հետ կապերի զարգացումը և երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության ծրագրերում իր առավելագույն ներգրավումը: Այդ նպատակով իրականացվում են որոշակի միջոցառումներ՝ կազմակերպվում են ռազմահայրենասիրական օլիմպիադաներ և խաղեր, ՊԴ կազմն ակնարկային դասախոսություններ է ունենում տարբեր հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում: ՌՀ-ն կցված է տարբեր մարզերի թվով 32 դպրոցների, որտեղ անց է կացնում արիության դասեր, ևս 80 կրթօջախում՝ կազմակերպում է տարբեր հանդիպումներ, ռազմագիտական միջոցառումներ:

ՌՀ-ն այլ ՄՈՒՀ-երի ուսանողներից լրացուցիչ կրթական ծրագրով 2,5-ամյա (շաբաթօրյա պարապմունքներով), շրջանավարտներից՝ մեկամյա կրթությամբ, իսկ քաղաքացիական բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող ՀՀ ԶՈՒ կրտսեր և ավագ ենթասպայական կազմից 5-ամսյա պատրաստության ծրագրով պատրաստում է ՀՀ ԶՈՒ դասակի հրամանատարներ և իրականացնում վերապատրաստման դասընթացներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՌՈՒՀ-ի շրջանավարտներն իրենց զորամասերում տարածում են համալսարանում ստացված գիտելիքները: ՌՀ-ը նաև տրամադրում է օժանդակություն ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղվածության ՀԿ-ներին՝ այդ կազմակերպությունների շահակիցների համար ռազմական

որոշ դասընթացներ իրականացնելով: ՌՀ-ում իրականացվում են նաև ՊՆ կողմից կազմակերպված ռազմական լրագրողների վերապատրաստման ծրագրեր:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՌՈՒՀ-ն ունի հաշվետվողականության հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր համալսարանի ներսում և ՊՆ-ին: Միևնույն ժամանակ, հասարակությունը կարծես մնում է համալսարանի դարպասներից այն կողմ, և ստեղծվում է տպավորություն, որ ՌՈՒՀ-ն իր առջև հանրությանը հաշվետու լինելու նպատակ չի դրել: Ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասանելության սահմանափակումները հաճախ օբյեկտիվորեն պայմանավորված են տեղեկատվության գաղտնիությամբ: Սակայն թափանցիկ չեն նաև այն ընթացակարգերն ու գործընթացները, որոնք, թերևս, չեն պարունակում ռազմական գաղտնիք կամ երկրի անվտանգությանը սպառնացող դրույթներ և կարող են հրապարակվել: Վերը նշվածը խոչընդոտում է ՌՈՒՀ-ի մատուցած կրթական ծառայությունների վերաբերյալ հասարակության տեղեկացվածության ընդլայնմանն, ինչն արդյունքում կարող է հանգեցնել համալսարանի վերաբերյալ հասարակության առավել լայն շերտերի հետաքրքրության անկմանը: Քանի որ ՌՀ-ի ֆինանսավորումը և ռեսուրսներով ապահովումն իրականացվում է ՀՀ ՊՆ-ի կողմից, ֆինանսական բոլոր հաշվետվությունները ներկայացվում են միայն պետությանը՝ շրջանցելով հասարակությանը: Փորձագիտական խումբը կարծում է, որ ցանկալի կլիներ, որ նմանօրինակ հաշվետվություններ ներկայացվեին նաև հանրությանը՝ ընդհանուր դրույթներով, առանց մանրամասնությունների՝ չխախտելով գաղտնիության ռեժիմի պահանջները, ինչը կնպաստեր հաշվետվողականության թափանցիկության բարելավմանը և ՌՈՒՀ-հասարակություն կապի ամրապնդմանը:

ՌՈՒՀ-ի կողմից հասարակությանը հաշվետվողականությունը հիմնականում միջնորդավորված է ՊՆ-ի միջոցով: ՊՆ-ի կայքում համալսարանի գործունեության վերաբերյալ նորություններն ընդհանուր լրահոսի միջոցով ներկայացնելն, ինչպես նաև նորությունների ոչ պարբերական թարմացումը կարող է խոչընդոտել ՌՈՒՀ-ի վերաբերյալ տեղեկատվության համակարգվածությանը և հասանելիությանը:

Պետք է նկատել, որ հասարակությանն արժեքների և գիտելիքների փոխանցման հիմնական թիրախը դպրոցականներն են, և տպավորություն է ստեղծվում, որ իրականացվող միջոցառումների գլխավոր նպատակը կուրսանտների հավաքագրումն է: Այնուամենայնիվ, վերջին տարիներին արձանագրվել է դիմորդների թվի կայուն նվազում, ինչն, այս համատեքստում, կարող է բացատրվել ոչ միայն երկրի ընդհանուր ժողովրդագրական փոփոխություններով կամ մասնագիտության վտանգավորությամբ, այլև համալսարանի կողմից հասարկության հետ կապի ապահովման թույլ գործընթացներով: Փորձագիտական խմբի համոզմամբ, հասարկության հետ կապի բազմազան և արդյունավետ գործիքների կիրառման ուղղությամբ ՌՀ-ի կողմից ոչ բավարար ջանքերի գործադրումը կարող է խոչնդոտել ՌՈՒՀ-ի վերաբերյալ առավել ընգրկուն և ամբողջական պատկերացման ձևավորմանը և հանրության շրջանում նրա դրական կերպարի ամրապնդմանը:

Դրական է, որ ՌՀ-ն ունի կայուն հետադարձ կապի մեխանիզմներ ՊՆ-ի, ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումների, ինչպես նաև շրջանավարտների հետ՝ ստեղծելով ՌՈՒՀ-ի գործունեության բարելավման օբյեկտիվ հեռանկարներ: Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ հասարկության հետ կապի մեխանիզմները կայուն չեն, ինչը կարող է հանգեցնել ՌՈՒՀ-ի գործունեության կտրվածությանը հասարակական զարգացումներից:

ՌՀ կողմից սեփական կայքի ստեղծումը կարող է արդյունավետ լուծումներ առաջարկել ինչպես հետադարձ կապի, այնպես էլ հասարկությանը տեղեկատվության տրամադրման անմիջական մեխանիզմների ապահովման գործում՝ ՌՀ-ի վերաբերյալ ձևավորելով առավել բարձր վարկանիշ՝ արդյունքում հանգեցնելով դիմորդների քանակի աճին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ հաշվի առնելով այն փաստը, որ ՌՈՒՀ-ում առկա են հաշվետվողականության մեխանիզմներ և ընթացակարգեր պետությանը՝ ՊՆ-ին, գործում են հասարակության թիրախային խմբերին գիտելիքների, հայրենասիրական արժեքների փոխանցման մեխանիզմներ, կիրառվում են հասարակության հետ հետադարձ կապի որոշ գործիքներ, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՌՈՒՀ-ը բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՌՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի 2015-2020թթ. զարգացման հեռանկարային պլանում սահմանված են միջազգայնացմանը վերաբերող հետևյալ միջոցառումներ՝ 1. ՀՀ և միջազգային կրթական համակարգերին լիարժեք ինտեգրում (այլ երկրների ռազմական համալսարանների կառուցվածքի և գործունեության առաջավոր փորձի ուսումնասիրում, այդ թվում՝ նաև ՀԱՊԿ անդամ երկրների), 2. ՀՀ ՌՈՒՀ-երում այլ երկրների զինծառայողների ուսումնառության հնարավորության ստեղծում, 3. դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստում ՀՀ և արտերկրի համապատասխան ուսումնական հաստատություններում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնականում այս միջոցառումները մեծամասամբ դեռևս չեն իրագործվել:

ՊԴ կազմի և ուսանողների շարժունությունն (ներգնա և արտագնա) ապահովող փոխանակման ծրագրեր, ինչպես նաև այնպիսի ծրագրեր, որոնք կարող են հնարավորություն տալ ՌՀ-ի դասախոսների վերապատրաստումներն իրականացնել այլ երկրների համապատասխան համալսարաններում, բացակայում են: Ընդհանուր առմամբ՝ համալսարանը չունի հստակ մշակված քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք կկարգավորեն միջազգայնացման այնպիսի գործընթացների խթանումն, ինչպիսիք են՝ ուսանողների և աշխատակազմի շարժունությունն, ուսումնառողների ձեռքբերումների փոխճանաչելիությունը և այլն:

Արտաքին կապերի հաստատման ուղղությամբ տարվող աշխատանքները կարգավորվում են ՊՆ միջոցով: Թեև այս ոլորտի մեխանիզմները դուրս են համալսարանից, և ՌՀ-ն ունի սահմանափակ իրավունք ինքնուրույն նախաձեռնելու միջազգային համագործակցության միջոցառումներ, այնուամենայնիվ կարելի է փաստել, որ նշյալ տիրույթում համալսարանի կողմից նախաձեռնողականություն չի ցուցաբերվում: ՌՀ-ում չի գործում համակարգային մոտեցում և քաղաքականություն, որը նպատակաուղղված կլինի փորձի փոխանակման, զարգացման և միջազգայնացման համար նպաստավոր միջավայրի ստեղծմանը: Միջազգայնացումը սահմանափակվում է միայն ՊՆ-ի համապատասխան վարչությունների և բաժինների կողմից կազմակերպվող միջազգային համագործակցություններով:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ՌՀ-ն չունի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման առանձին ենթակառուցվածք: Տվյալ գործառույթն իրականացվում է ՀՀ ՊՆ համապատասխան վարչությունների

միջոցով: Համալսարանի մակարդակում այս գործառույթը համակարգվում է Գիտության և կրթության որակի ապահովման բաժնի և Անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնի կողմից: Վերջիններս, սակայն, ծանրաբեռնված են իրենց հիմնական պարտականություններով: Բաժինների գործունեությունն ամփոփվում է կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններում: Իրականացվող միջազգային համագործակցության արդյունավետության վերլուծություններ ՌՀ-ում չեն իրականացվում:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ՌՀ-ն համագործակցում է տեղական պետական (ամենասերտը՝ ՊՆ) և հասարակական (հիմնականում՝ մեկ հասարակական կազմակերպություն) կառույցների հետ: Առկա է նաև որոշ համագործակցություն ՀՀ-ում օտարերկրյա դեսպանատների հետ:

ՀՀ տարածքում միջբուհական համագործակցությունը հիմնականում կանոնակարգվում է «ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի և ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ու ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի համագործակցության տարեկան պլանով»: ՀՀ 13 բուհերի հետ համագործակցության շրջանակը ներառում է կրթական ծրագրերի որակի բարելավումը, դասախոսական կազմի վերապատրաստումը, փորձի փոխանակումը, սոցիալ-մշակութային համագործակցությունն ու ուսանողների միջև փոխհարաբերությունները: Սակայն վերոնշյալ պլանով նախատեսված ոչ բոլոր միջոցառումներն են իրականացվում:

Ի տարբերություն ազգային մակարդակում համագործակցության՝ միջազգային մակարդակում ՌՀ համագործակցություն ուսանողների և դասախոսական կազմի փոխանակման տեսանկյունից չի իրականացվում, հետևաբար՝ բացակայում է կանոնակարգված միջազգային շարժունությունը: Ընդհանուր պատկերը շատ չի փոխվում մի քանի կուրսանտի փորձի դրական օրինակներով, ովքեր բարձր առաջադիմության շնորհիվ հնարավորություն են ստացել ուսանելու արտերկրում (օրինակ՝ Գերմանիա, Մեծ Բրիտանիա). այս դեպքերում պարզապես տվյալ պահի հնարավորությունն է օգտագործվել, և սա կանոնակարգված գործընթացի պլանավորման արդյունք չէ:

Չնայած այլ երկրների սպաների ուսուցման կազմակերպումը ՌՀ-ն սահմանել է որպես ռազմավարական նպատակ, այնուամենայնիվ ՌՀ-ն չունի արտասահմանցի ուսումնառողներ: ՌՀ-ն չունի նաև որևէ համատեղ հետազոտական ծրագիր, և ուսումնառողները չեն մասնակցում միջազգային կառույցների կողմից իրականացվող հետազոտական աշխատանքներին ու միջոցառումներին:

Պետք է նկատել, որ ՌՀ-ում մագիստրատուրայի ձևավորման և «Միավորումների և զորամասերի կառավարում» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրերի մշակման ուղղությամբ օժանդակություն են ցուցաբերվել կանադացի ռազմական փորձագետները:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Չնայած այն փաստին, որ ՌՈՒՀ-ում առկա են լեզվի դասընթացներ (օրինակ՝ ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, պարսկերեն), որոնք միտված են ներքին շահակիցների (ուսումնառողներ, դասախոսներ) շրջանում օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, փորձագիտական այցի ընթացքում ակնհայտ դարձավ, որ օտար լեզվի իմացության մակարդակը բավականին ցածր է, ինչը հաստատվեց ուսումնառողների և շրջանավարտների կողմից:

Ինչևէ, դասախոսների շրջանում ռուսերեն լեզվի իմացությունը բարձր մակարդակի վրա է: Քանի որ համալսարանի հիմնական ուղղվածությունն ԱՊՀ երկրներն են, ապա ռուսերենով հաղորդակցությունը տարածված է դասախոսների շրջանում (պայմանավորված նաև այն փաստով, որ նախկինում ռազմական համալսարանում կրթությունն իրականացվել է ռուսերենով): Անգլերենի իմացության մակարդակը, սակայն, չի կարող ոչ ապահովել, ոչ էլ

խթանել միջազգային շարժունություն, միջազգային կրթական և գիտահետազոտական ծրագրերի իրականացում, ինչպես նաև միջազգային պարբերականներում հրապարակումներ: Դասախոսական կազմի համար լեզվի դասընթացներ կազմակերպվում են սովորաբար այն ժամանակ, երբ նրանք պատրաստվում են դիմել ասպիրանտուրա/ադյունկտուրա, և այս գործընթացներն անմիջականորեն չեն նպաստում ՌՀ միջազգայնացմանը:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարկ է նշել, որ ՌՀ-ն ունի միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակ: Թեև նշված նպատակի իրականացման համար Գիտության և կրթության որակի ապահովման բաժինն ունի միջազգայնացման քաղաքականություն իրականացնելու գործառույթ, բաժնի պատասխանատվությունների լայն շրջանակից միայն մի մասն է արտացոլում միջազգայնացմանն ուղղված նպատակի իրականացումը: Արդյունքում միջազգայնացման գործընթացների արդյունավետության պատշաճ վերլուծություն չի իրականացվում, և գործող (ՊՆ որոշիչ դեր ենթադրող) մոտեցման գործունությունը գնահատված չէ: Փորձագիտական խումբը կարծում է, որ միայն համապատասխան բաժնի առկայությունը չի երաշխավորում միջազգայնացման արդյունավետ և կանոնակարգված գործընթաց, քանի որ չկան դասախոսների և ուսանողների շարժունության ապահովմանը միտված կրթական ու հետազոտական ծրագրեր, չկա արտասահմանցի ուսանողների ներհոսք, և հստակ չէ, թե որքանով է համալսարանը խթանում միջազգայնացմանն ուղղված նպատակների իրականացումը: Ինքնակառավարման պակասը և ՊՆ-ի համապատասխան վարչություններից զգալի կախվածությունը չի ապահովում միջազգայնացման կանոնակարգված գործընթաց:

Փորձագիտական խումբը կարծում է, որ ՌՀ զարգացման հեռանկարային պլանում առկա ձևակերպումները չեն արտացոլում միջազգայնացման շրջանակն ու «հավակնությունների մակարդակը», այսինքն՝ արդյոք համալսարանը ցանկանում է միջազգայնորեն հայտնի դառնալ, թե դառնալ հաստատություն, որն ունի տարածաշրջանում կարևոր դեր ու նշանակություն:

Կուրսանտների շարժունության դեպքերի փոքրաթիվ և չպլանավորված լինելը թույլ է տալիս եզրակացնել, որ դեռևս վաղ է փաստել ՌՀ և միջազգային կառույցների ու հաստատությունների միջև արդյունավետ համագործակցության առկայության մասին:

Հաշվի առնելով, որ ՌՀ-ն համագործակցում է տեղական և միջազգային կազմակերպությունների սահմանափակ շրջանակի հետ, և որ համագործակցության պլանավորված միջոցառումները ոչ միշտ են իրականացվում, փորձագիտական խումբը համարում է, որ համալսարանն ամբողջությամբ չի օգտագործում ազգային և միջազգային հարաբերություններն՝ իր կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման և կրթական ծրագրերի բարելավման համար:

Դրական է այն, որ դասախոսներն ու ուսումնառողները մասնակցում են գիտական և կրթական միջոցառումներին արտասահմանում, որից հետո նրանք ներկայացնում են իրենց փորձն ու կարողությունները հաշվետվությունների միջոցով՝ նպաստելով այդ փորձի տեղայնացմանը ՌՀ-ում: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարծում է, որ համալսարանի միջազգայնացման լրջագույն խոչընդոտ է այն, որ ՌՀ-ն դեռևս չի ապահովում օտար լեզվի իմացության բավարար մակարդակ իր ներքին շահակիցների շրջանում:

ՌՀ-ն չունի հասանելիություն միջազգային ամսագրերի տվյալների բազաներին. դասախոսների համար՝ իրենց հետազոտական ոլորտին առնչվող գրականության, իսկ ուսանողների համար՝ ժամանակակից օտարալեզու արդիական շտեմարանների հասանելիությունը սահմանափակ է, ինչը վտանգում է իրականացվող հետազոտությունների և կիրառվող ուսումնական նյութերի արդիականությունը և համաշխարհային փորձի վրա հիմնված լինելը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ հաշվի առնելով, որ ՌՀ-ն դեռևս չի իրականացնում արտաքին կապերի հաստատումը խրախուսող կանոնակարգված գործընթացներ, չունի փոխանակման և

հետազոտական միջազգային ծրագրեր, զարգացման հեռանկարային պլանում սահմանված միջազգայնացման նպատակները չեն իրականացվում անկախ և համակարգված ձևով, անգլերեն լեզվի իմացությունը դեռևս լուրջ խնդիր է շարժունության ապահովման տեսանկյունից, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՌՀ-ն չի բավարարում չափանիշի 9-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՌՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՓԱՍՏԵՐ

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՌՈՒՀ-ում որակի ներքին ապահովման համակարգը ներդրվել է 2014թ.-ին Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: ՌՀ-ի որակի ապահովման ռազմավարությունը սահմանված է համալսարանի կանոնադրությունում և «ՌՀ որակի ապահովման ներքին համակարգ» ձեռնարկում: Այն հաստատվել և դրվել է գործածության մեջ համալսարանի գիտական խորհրդի կողմից: Ձեռնարկը հստակ սահմանում է որակի ապահովման շրջանակը, ընդհանուր պահանջներն ու սկզբունքները: Ձեռնարկը սահմանում է մի շարք ՈԱ գործընթացներ, որտեղ ներկայացված է նաև հարցումների իրականացումը կուրսանտների շրջանում, կուրսանտների կողմից ներկայացվող բողոքների ուսումնասիրությունը, կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկումները և պարբերաբար վերանայումները և այլ գործընթացներ: Սակայն այս բոլոր գործընթացները կառավարման համակարգի ներքևի մակարդակներում են. ՈԱ գործընթացները դեռևս ամբողջությամբ ներդրված չեն ռազմավարական կառավարման մակարդակում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ որակի ապահովման ձեռնարկի դրույթներին ներքին շահակիցները հիմնականում քաջատեղյակ են՝ բացառությամբ կուրսանտների:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՈԱ խնդիրների իրականացման համար 2013թ.-ի հոկտեմբերին ստեղծվել է Գիտության և կրթության որակի ապահովման բաժինը: Բաժինն ունի 7 աշխատող, որոնցից 3-ը քաղաքացիական աշխատողներ են: Աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանված են Գիտության և ԿՈԱ բաժնի կանոնակարգում և աշխատանքի նկարագրերում: Գիտության և ԿՈԱ բաժնում աշխատակիցների պաշտոնների նշանակումն իրականացվում է մրցույթի հիման վրա, որտեղ հաշվի են առնվում տվյալ աշխատանքի համար ներկայացվող պահանջները: ՈԱ բաժնի աշխատակիցների կատարողականի գնահատում և կարիքների վերհանում չի իրականացվում, հետևաբար նաև այդ գործընթացներից բխող կատարելագործման միջոցառումներ չեն իրականացվում:

Բաժինն ունի առանձին սենյակ, որը կահավորված է Համաշխարհային բանկի Կրթության որակ և համապատասխանություն դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ: Թեև սենյակը փոքր է՝ հաշվի առնելով աշխատողների քանակն, այնուամենայնիվ բաժնի աշխատակիցները գոհ են նման պայմաններից՝ համարելով, որ մեկ սենյակում աշխատելը թույլ է տալիս առաջացած խնդիրները քննարկել օպերատիվ կերպով: Բաժնի պետն ունի առանձին սենյակ:

Բացի որակի ապահովմանն ուղղված իր հիմնական գործառույթներից՝ Գիտության և ԿՈԱ բաժինն իրականացնում է նաև այլ գործառույթներ (օրինակ՝ միջազգային կապեր, դասախոսական գործունեություն): Ընդհանուր առմամբ՝ կարելի է փաստել, որ Գիտության և ԿՈԱ բաժնի աշխատողները գերծանրաբեռնված են գիտության, մանկավարժության և որակի ապահովմանն առնչվող պարտականություններով: Միևնույն ժամանակ բաժնում առկա է թափուր հաստիք: Անհրաժեշտ է նաև նշել, որ բաժինը կարևորված է ՌՀ-ի կողմից, վերջինիս տրամադրվում է իրենց գործունեության համար ցանկացած անհրաժեշտ տեղեկատվություն համալսարանի բոլոր ստորաբաժանումների և ղեկավար կազմի կողմից:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

ՈԱ գործընթացները հիմնականում իրականացվում են Գիտության և ԿՈԱ բաժնի կողմից, սակայն ՈԱ համակարգը բավականին ապակենտրոնացված է: Ներքին շահակիցները՝ սկսած ՌՀ պետից մինչև կուրսանտներ և վարչական կազմ, տեղյակ են և ներգրավված են ՈԱ գործընթացներում, հիմնականում՝ բազմաշերտ հաշվետվողականության համակարգի միջոցով: Հաշվետվությունների արդյունքները, սակայն, ոչ միշտ են վերլուծվում և հանգեցնում ՌՀ-ի գործունության բարելավմանը: Ներքին շահակիցները ներգրավված են ՈԱ գործընթացներում նաև հարցումներին մասնակցության միջոցով: Հարցումների նպատակն է գնահատել կրթական ծրագրերից և կրթական միջավայրից բավարարվածության աստիճանը:

ՈԱ գործընթացներում ՌՀ-ն ձգտում է ներգրավել արտաքին շահակիցներին՝ ՊՆ-ը, ՌՀ շրջանավարտներին, ՀՀ Զինված ուժերի շահագրգիռ ներկայացուցիչներին ու կուրսանտների ծնողներին: Բոլոր շահակիցները ներգրավված չեն ՈԱ բոլոր գործընթացներում, սակայն յուրաքանչյուրն իր գործունեությանն առնչվող մասով ունի ներգրավվածություն, օրինակ՝ կրթական ծրագրերի մակարդակում ՀՀ զինված ուժերի կողմից ստացված արձագանքի հիման վրա ՌՀ-ն փոփոխություններ է իրականացնում կրթական ծրագրերում, դասավանդման և ուսումնառության որակի պարբերաբար վերանայման ժամանակ հաշվի են առնվում կուրսանտների, ունկնդիրների և շրջանավարտների կարծիքները, դասալսումների արդյունքները և այլն:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Գիտության և ԿՈԱ բաժնի նպատակներն ու խնդիրները վերանայվել են ՌՀ-ի կողմից (Գիտության և ԿՈԱ բաժնի կանոնակարգը հաստատվել է 2014թ.-ին և վերանայվել է 2016թ.-ին՝ համալսարանի վերակազմակերպման ու Գիտության և ԿՈԱ բաժնի ստեղծման համատեքստում): Որակի բարելավման գործընթացների իրականացման ժամանակ հաշվի են առնվում ՀՀ Զինված ուժերում և ԵԲԿՏ-ում տեղի ունեցող ՈԱ գործընթացները: ՈԱ գործընթացներ իրականացնելիս ՌՀ-ն համագործակցում է ՀՀ բուհերի և ՈԱԱԿ-ի հետ:

ՈԱ ներքին համակարգի պարբերական վերանայման առանձին ընթացակարգ ՌՀ-ում սահմանված չէ: Թեև ՈԱ ներքին համակարգի ձևավորումը ՌՀ-ում սկսվել է դեռևս 2013թ.-ին, իսկ ՈԱ ձեռնարկը մշակվել է 2014թ.-ին, ՈԱ ներքին համակարգի վերանայման փուլ ՌՀ-ում դեռևս չի հասունացել:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ՌՈՒՀ-ը՝ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների հիման վրա իրականացված ինքնավերլուծական զեկույցի միջոցով փորձել է առավելագույնս ապահովել համապատասխան հիմքեր արտաքին գնահատման համար: Ինչևէ, փորձագիտական խումբը փաստում է, որ ինքնավերլուծական զեկույցն ավելի շատ տեղեկատվական բնույթ ուներ, քան վերլուծական:

Այդուհանդերձ, բավարար հիմքեր և բացատրություններ են ներկայացվել փորձագիտական խմբին փորձագիտական այցի ընթացքում: Ուսումնասիրման ենթակա բոլոր

փաստաթղթերը հիանալի կերպով դասավորված, նկարագրված և ներկայացված էին արտաքին գնահատման համար:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ՌՀ-ը մի շարք հաշվետվություններ է ներկայացնում ՊՆ, սակայն այս հաշվետվություններն ավելի շատ նկարագրական են, քան վերլուծական: Բացի այդ՝ հաշվետվությունները հասցեագրված են միայն ՊՆ-ին, և այլ շահակիցների համար դրանք տեղեկատվության աղբյուր չեն հանդիսանում: ՌՀ գործունեության վերաբերյալ սահմանափակ հրապարակումները չեն առնչվում գործընթացների որակին: Գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման նախաձեռնողականությունը ՌՈՒՀ-ի կողմից ցածր է:

Ինչ վերաբերում է ներքին շահակիցներին, թափանցիկությունն ամբողջությամբ չի ապահովվում, քանի որ կուրսանտները տեղեկացված չեն ավելի բարձր օղակներում իրականացվող վերլուծությունների մասին, նրանք տեղյակ են միայն կրթական նեղ ոլորտում իրենց առնչվող գործընթացներին:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՌՀ-ն ունի ՈԱ հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք ամրագրված են հիմնարար փաստաթղթերում, մասնավորապես՝ ՈԱ ձեռնարկում: Դրական է նաև այն, որ ՌՀ-ի բոլոր աշխատակիցները, բացառությամբ՝ կուրսանտների, տեղյակ են ՈԱ ձեռնարկում ներկայացված դրույթներին՝ գիտակցելով համալսարանի արժեքներն ու ՈԱ գործընթացների կարևորությունը:

Հարկ է նշել, որ ՈԱ ներքին գործընթացների կառավարման համար ՌՀ-ն հատկացնում է բավարար մարդկային ռեսուրսներ: Գիտության և ԿՈԱ բաժնի ողջ անձնակազմը զուգահեռ իրականացնում է նաև այլ գործառույթներ, օրինակ՝ դասավանդում, որը նպաստում է ՈԱ կատարողականի արդյունավետության բարձրացմանը, քանի որ բաժնի աշխատակիցներն անմիջականորեն առնչվում են ՌՀ-ում առկա խնդիրներին: Միևնույն ժամանակ՝ այս փորձը կարող է ռիսկային լինել և հանգեցնել բաժնի աշխատակիցների գերծանրաբեռնվածությանը: Մարդկային ռեսուրսների առումով ՌՀ-ն չի կարող երաշխավորել, որ եթե Գիտության և ԿՈԱ բաժնի ներկայիս անձնակազմը լքի համալսարանը, ապա նրանց կարելի է հեշտությամբ փոխարինող գտնել:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ կուրսանտները և ունկնդիրները որպես ներքին շահակիցներ ներգրավված են որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով բավարարվածության գնահատման հարցումներին և ներգրավված լինելով տարբեր խորհուրդներում (Կուրսանտական խորհուրդ, Սերժանտական խորհուրդ): Սակայն ներքին շահակիցների ներգրավումը ՈԱ գործընթացներում միայն իրենց առնչվող հարցերի շրջանակով սահմանափակելը խոչընդոտում է ներքին շահակիցների մասնակցությանը ռազմավարական մակարդակում ՈԱ գործընթացներին:

Որակի ապահովման համակարգի վստահելիությունն ու արդյունավետությունը վտանգված են նրանով, որ որակի ապահովման համակարգի գնահատման և բարելավման կանոնակարգված գործընթաց չի իրականացվում և նախատեսված էլ չէ: ՈԱ գործիքակազմի արդյունավետության վերլուծությունների բացակայությունը հնարավորություն չի տալիս օբյեկտիվորեն գնահատելու ՈԱ գործընթացների ազդեցությունը կրթական ծրագրերի և համալսարանի գործունեության բարելավման վրա:

Ընդհանուր առմամբ, որակի ներքին ապահովման համակարգն ամուր հիմք է ապահովում որակի արտաքին գնահատման համար՝ հաշվի առնելով ոչ միայն ինքնավերլուծությունն, այլև ոչ գաղտնի փաստաթղթերի ամբողջությունը:

Փորձագիտական խումբը կարծում է, որ ՌՀ-ում գործընթացների որակի մասին տեղեկությունները և դրանց հավաքագրումը չեն կարևորվի, քանի դեռ դրանք հասցեագրված կամ գոնե հասանելի չեն ներքին և արտաքին շահակիցներին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ հաշվի առնելով որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը նկարագրող փաստաթղթերի, ՈԱ համակարգի համար մշակված և կիրառվող մի շարք մեխանիզմների առկայությունը, արտաքին և ներքին շահակիցների մասնակցությունն որակի ապահովման գործընթացներին, հաշվետվողականության ապահովմանն ուղղված համալսարանի քայլերը՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՌՀ-ն բավարարում է չափանի 10-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՌՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
I. Առաքելություն և նպատակներ	Բավարար
II. Կառավարում և վարչարարություն	Բավարար
III. Կրթական ծրագրեր	Բավարար
IV. Ուսանողներ	Բավարար
V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարար
VI.Հետազոտություն և զարգացում	Անբավարար
VII. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարար
VIII. Հասարակական պատասխանատվություն	Բավարար
IX. Արտաքին կապեր և միջազգայնացում	Անբավարար
X. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարար

Տիգրան Մնացականյան
Փորձագիտական խմբի ղեկավար

31.08.2018թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Տիգրան Մնացականյան՝ 2008թ.-ին ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ)՝ «Կառավարում» մասնագիտությամբ: 2011թ.-ին շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան՝ «Հանրային կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությունները (ՀՀ օրինակով)» թեմայով: 2011թ.-ից ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ է: 2008-2011թթ.-ին հանդիսացել է ՀՊՏՀ ուսանողական գիտական ընկերության խորհրդի նախագահ: Հրատարակել է մի շարք գիտական հոդվածներ կառավարման տեսության, հանրային կառավարման պատմության, հանրային կառավարման ժամանակակից հիմնախնդիրների և արդյունավետության գնահատման մեթոդաբանության ու բարձրացման, տեղական ինքնակառավարման հիմնախնդիրների վերաբերյալ: Մասնակցել է բարձրագույն կրթության որակի բարձրացման հարցերին նվիրված միջազգային գիտաժողովների:

Բարտլոմեյ Պոռչեկ՝ 1994թ.-ից ծառայում է լեհական նավատորմում: 1999թ.-ին ավարտել է Լեհաստանի ռազմածովային ակադեմիան: 2006թ.-ին ավարտելով ասպիրանտուրան «Ծովային զորքերի հրամանատարություն» մասնագիտությամբ՝ստանձնել է ղեկավար պաշտոններ: 2007թ.-ից մինչ օրս աշխատում է Լեհաստանի ռազմածովային ակադեմիայում որպես դեսախոս, այնուհետ՝ պրոֆեսոր: 2011թ.-ից անվտանգության գիտությունների դոկտոր է: 2016թ.-ին ընտրվել է Լեհաստանի ռազմածովային ակադեմիայի Հրամանատարության և ծովային գործողությունների ֆակուլտետի փոխդեկան: Նույն տարում նշանակվել է Լեհաստանի ազգային որակի ապահովման հանձնաժողովի փորձագետ: 20-ից ավել գիտական հոդվածի, շուրջ 30 մենագրության հեղինակ է: Ղեկավարել է 24 գիտահետազոտական նախագիծ, կազմակերպել է 17 ազգային և միջազգային գիտաժողովներ: Հաջողությամբ համաղեկավարել է բազմաթիվ ասպիրանտական թեզեր: 2012-2017թթ.-ին իր ղեկավարած Ծովային անվտանգության ուսանողական գիտական ընկերությունը 3 անգամ առաջադրվել է լավագույն գիտական ընկերություն մրցանակին: Արժանացել է բազմաթիվ պարգևների, որոնց թվում՝Լեհաստանի Հանրապետության նախագահի, պաշտպանության նախարարի, ենթակառուցվածքների նախարարի, բնապահպանության նախարարի կողմից ստացած պարգևների:

Արամ Բաղիյան՝ 2008թ.-ին ոսկե մեդալով ավարտել է ՌԴ ՊՆ պրոֆեսոր Ն.Ե. Ժուկովսկու անվան Ռազմաօդային ինժեներական ակադեմիան՝ «Ավիացիոն սպառազինության ռոբոտատեխնիկական համակարգեր» մասնագիտությամբ՝ ճարտարագետի որակավորմամբ: 2014թ.-ին շնորհվել է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ «Թռչող ապարատներից վերգետնյա օբյեկտների հետևման ռոբաստ համակարգի մշակումը» թեմայով ատենախոսության պաշտպանությամբ: 2012-2017թթ. զբաղեցրել է ավագ դասախոսի պաշտոն ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտում (համալսարանում): 2017թ.-ից մինչ օրս զբաղեցնում է «Իմպրովիզ» ՍՊԸ գիտական խորհրդատուի պաշտոնը: 2016թ.-ից ԲՈՀ-ի 032 «Կառավարում և ավտոմատացում» մասնագիտական խորհրդի անդամ է: 40-ից ավելի գիտական և գիտատեխնիկական աշխատանքների, 2 ուսումնական և 2 մեթոդական ձեռնարկների հեղինակ է: Մասնակցել է Գործընկերություն հանուն խաղաղության կոնսորցիումի և Հյուսիսատլանտյան դաշինքի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, ինչպես նաև ՈԱԱԿ-ի կողմից անցկացվող ռազմական ոլորտի դասախոսների մի շարք վերապատրաստումներին:

Մարգարիտա Պողոսյան՝ 1995թ.-ին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի Ինֆորմատիկայի և ԿԱՀ ֆակուլտետը՝ ստանալով ինժեներ-տնտեսագետի որակավորում: 2008թ.-ից դարձել է Երևանի պետական համալսարանի «Տնտեսագիտության և կառավարման» ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսության» ամբիոնի հայցորդ: 2015 թ.-ին պաշտպանել է ատենախոսական թեզը «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները մարդկային կապիտալի տեսության համատեքստում» թեմայով: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու է: 2015-2016թթ.-ին ուսանել է «Եվրոպայի Խորհրդի Քաղաքական դասընթացների Երևանյան դպրոցում»: 2004-2015թթ.-ին աշխատել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի Հասարակագիտության ամբիոնում, մինչև 2008թ.-ը՝ որպես դասախոս, 2008թ.-ից՝ ավագ դասախոս: 2006թ.-ից մինչ այսօր զուգահեռաբար դասավանդում է Երևանի Հյուսիսային համալսարանում, որտեղ 2013-2014թթ.-ին աշխատել է որպես Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ: 2015թ.-ից մինչ օրս աշխատում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում: Մասնակցել է մի շարք ազգային և միջազգային սեմինարների, զեկուցումներով հանդես է եկել բազմաթիվ գիտաժողովներում, մասնակցել է մի քանի դրամաշնորհային ծրագրերի, 17 հոդվածի հեղինակ է:

Միքայել Խաչատուրյան՝ Հայ-ռուսական համալսարանի «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող է: 2017թ.-ի սեպտեմբերից հանդիսանում է նույն համալսարանի գիտական խորհրդի անդամ: 2017թ.-ի հոկտեմբերին ստացել է ՀՀ նախագահի մրցանակ՝ SS ոլորտում «Լավագույն բակալավր 1-ին կարգ» անվանակարգում: Մասնակցել է ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագծի կողմից կազմակերպված ուսանող փորձագետի դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

11.06.2018թ.-14.06.2018թ.

	11.06.2018թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ՌՀ պետի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում ՌՀ պետի առաջին տեղակալի, ՀՇՖ պետ-ՌՀ պետի տեղակալի, ՌՀ պետի տեղակալի, ՌՀ ՆՏԱԳ տեղակալի հետ	10:30	11:30	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ (8-12 մասնակից)	11:40	12:20	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Հանդիպում համալսարանի գործունեությունը համակարգող ՀՀ ՊՆ համապատասխան վարչությունների հետ	13:40	14:40	60 րոպե
6.	Հանդիպում ֆակուլտետների պետերի հետ	14:50	15:40	50 րոպե
7.	Հանդիպում շրջանավարտների ներկայացուցիչների հետ (8-12 շրջանավարտ)	15:50	16:30	40 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:40	18:00	80 րոպե

	12.06.2018թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ամբիոնների պետերի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ ինքնավերլուծության մեջ ներկայացված 3 ՄԿԾ-ները) (8-12 դասախոս)	10:40	11:40	60 րոպե
3.	Այցելություն ֆակուլտետներ և փաստաթղթերի ուսումնասիրություն	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Այցելություն ամբիոններ և փաստաթղթերի ուսումնասիրություն	14:10	15:10	60 րոպե
6.	Հանդիպում Գիտության և ԿՈԱ բաժնի հետ	15:20	16:20	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:00	90 րոպե

	13.06.2018թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում սերժանտական խորհրդի և կուրսանտական խորհրդի ներկայացուցիչների հետ (8-12 ներկայացուցիչ)	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում կուրսանտների ներկայացուցիչների հետ (8-12 ներկայացուցիչ)	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ունկնդիրների ներկայացուցիչների հետ	11:50	12:50	60 րոպե

	(8-12 ներկայացուցիչ)			
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Հանդիպումներ հաստատության ստորաբաժանումներում	14:10	16:10	120 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:20	18:00	100 րոպե

	14.06.2018թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Ռեսուրսների դիտարկում	10:40	12:10	90 րոպե
3.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	12:20	12:50	30 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:10	16:50	160 րոպե
6.	Ամփոփիչ հանդիպում ՌՀ պետի հետ	17:00	17:30	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՉԱՓԱՆԻՇ/ՉԱՓՈՐՈՇԻՉ
1.	2015-2020 թթ. զարգացման հեռանկարային պլանի մշակման աշխատանքների հանդիպումների արձանագրություններ	1.2
2.	2015-2020 թթ. զարգացման հեռանկարային պլանի՝ առաջընթացի գնահատման ցուցիչներ և ցուցանիշներ	1.3
3.	ՀՀ պաշտպանության նախարարի [redacted] «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում արդյունքների ամփոփման կանոնակարգը հաստատելու և ՀՀ պաշտպանության նախարարի [redacted] հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հրաման [redacted]	1.3
4.	Նախորդ զարգացման հեռանկարային պլան	1.3
5.	ՌՀ հաստիքացուցակ	2.1
6.	ՌՀ-ի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքային պլանի (պլան-ժամանակացույցի) նմուշ	2.1
7.	ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի՝ [redacted] «ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ստորաբաժանումների անմիջական ենթակայության մասին» [redacted] հրաման	2.1
8.	ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի պետի՝ [redacted] «ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի գիտական խորհրդի կազմը հաստատելու վերաբերյալ» [redacted] հրաման	2.2
9.	Մեթոդական խորհրդի հաշվետվություններ	2.2
10.	ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի [redacted] «ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի մեթոդական և ֆակուլտետների խորհուրդներ կազմավորելու վերաբերյալ» [redacted] հրաման	2.2
11.	ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի՝ [redacted] «Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ստորաբաժանումներում արդյունքների ամփոփման պարբերականությունը և ներկայացվող հաշվետվու-թյունների կարգը կանոնակարգելու մասին» հրաման [redacted]	2.3
12.	ՌՀ-ի պետի հրաման արդյունքների ամփոփման վերաբերյալ	2.3
13.	Զարգացման հեռանկարային պլանի մշտադիտարկման արդյունքներ, բարելավման պլաններ և հիմքեր	2.3
14.	Կրթական ծրագրի և դասընթացների վերջնարդյունքների համապատասխանությունը հավաստող քարտեզագրում/մատրից	3.1
15.	Դիպլոմի հավելվածի նմուշ	3.1
16.	ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի՝ [redacted] «ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ամբիոններում առարկայա-մեթոդական հանձնաժողովներ կազմավորելու վերաբերյալ» [redacted] հրաման	3.2
17.	Կուրսանտների ինքնուրույն աշխատանքներ՝ ռեֆերատներ, կուրսայիններ (յուրաքանչյուր մասնագիտությունից 2 գերազանց գնահատված, 2՝ բավարար, 2՝ անբավարար)	3.3
18.	Ուսուցանվողների ավարտական աշխատանքներ՝ թեզեր (յուրաքանչյուր մասնագիտությունից 2 գերազանց գնահատված, 2՝ բավարար, 2՝ անբավարար)	3.3
19.	Նախորդ կրթական ծրագրերի փաթեթներ	3.5
20.	ՀՀ պաշտպանության նախարարի [redacted] հրամանը «ՀՀ ՊՆ և օտարերկրյա պետությունների ռազմական ուսումնական հաստատությունների ընդունելության վերաբերյալ հրահանգը և ընդունելության ընթացակարգը գործողության դնելու մասին»	4.1

21.	Հիմքեր՝ ուսուցանվողների կրթական կարիքների վերհանման և դրանց տրված լուծումների վերաբերյալ վերջին 3 տարվա համար	4.2
22.	ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի՝ [redacted] «ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի «Սերժանտական խորհրդի» և կուրսանտական գումարտակների «Սերժանտական ենթախորհրդի» կազմերը հաստատելու վերաբերյալ» [redacted] հրաման	4.7
23.	Կուրսանտական և սերժանտական խորհուրդների նիստերի արձանագրություններ և դրանց վրա հիմնված որոշումներ	4.7
24.	ՀՀ պաշտպանության նախարարի՝ [redacted] «ՀՀ ՊՆ ՌՈՒՀ-երում դասախոսական կազմի տարակարգեր սահմանելու, դասախոսական կազմի ընտրության ու մրցութային կարգով պաշտոնների նշանակման ընթացակարգը գործողության դնելու մասին» [redacted] հրաման	5.1
25.	ՀՀ պաշտպանության նախարարի՝ [redacted] «Որպես խրախուսանք զինծառայող-ներին տրվող արժեքավոր նվերի արժեքի կամ միանվագ գումարի առավելագույն չափը և դրանց տրման կարգը հաստատելու, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարի [redacted] հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին » [redacted] հրաման	5.3
26.	Դասախոսների անհատական պլանի օրինակներ	5.3
27.	ՊԴԿ գնահատման լրացված հարցաթերթիկի օրինակներ, հարցումների վերլուծություններ	5.3
28.	Դասալսումների եզրակացությունների օրինակներ	5.3
29.	Ֆակուլտետներում, ամբիոններում իրականացվող՝ ՊԴԿ-ի վերապատրաստման 5-ամյա և տարեկան պլաններ	5.4
30.	ՌՀ-ում անցկացված կոնֆերանսների ծրագրեր և մասնակից հաստատությունների ցանկեր	5.4
31.	ՊԴԿ հոսունության տվյալներ	5.5
32.	Գիտահետազոտական գործունեության գնահատման արդյունքներ 2014-2017 թթ. համար	6.3
33.	ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան ուղարկված ՀՀ զինված ուժերի համար արդիական ատենախոսությունների թեմաներ	6.5
34.	ՊՆ ներկայացված բյուջեի նախահաշիվ (2017-2018 թթ.)	7.2
35.	ՀՀ պաշտպանության նախարարի [redacted] «ՀՀ ՊՆ զինվորական մասերի ֆինանսական տնտեսության մասին» կանոնակարգը գործողության դնելու մասին» [redacted] հրաման	7.2
36.	ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի՝ [redacted] «Ռազմական համալսարանի ուսումնամեթոդական բաժնում, ֆակուլտետներում ամբիոններում կուրսանտական և ՈՒԳԱ գումարտակներում, վաշտերում, մարտկոցներում և դասակներում մարտական պատրաստականության, ուսումնական և մեթոդական աշխատանքների, զորքերի ծառայության, անձ-նակազմի հաշվառման, դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ու հաշվառման փաստաթղթերի ցանկի հաստատման և Ռազմական ինստիտուտի պետի [redacted] հրամանը ուժը կորցրած համարելու վերաբերյալ» [redacted] հրաման	7.5
37.	ՀՀ պաշտպանության նախարարի՝ [redacted] «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գործավարության կարգը հաստատելու մասին» [redacted] հրաման	7.5
38.	ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի՝ [redacted] «2017-2018 ուսումնական տարվա ուսումնական գործընթացի, ներքին ու պահակային ծառայությունների կազմակերպման մասին» [redacted] հրաման	7.6
39.	ՀՀ ՊՆ [redacted] հրամանով հաստատված «ՀՀ զինված ուժերում զորքերի ծառա-	7.6

	յության կազմակերպումը և զինվորական ծառայության անվտանգության ապահովումը» ձեռնարկ	
40.	ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի [redacted] «Զինվորական ծառայության անվտանգության ապահովման հանձնաժողով ստեղծելու մասին» [redacted] հրաման	7.6
41.	ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի՝ [redacted] «Զինվորական ծառայության անվտանգության ապահովման կազմակերպման մասին» [redacted] հրաման	7.6
42.	ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի [redacted] «Զինվորական ծառայության անվտանգության հանձնաժողովի՝ 2017 թվականի առաջին եռամսյակի աշխատանքների արդյունքների վերաբերյալ» [redacted] հրաման	7.6
43.	Անվտանգության խախտման դեպքերի վիճակագրություն	7.6
44.	Ռեսուրսներով ապահովվածության վերլուծություններ, դրանց հիման վրա բարելավմանն ուղղված միջոցառումների հիմքեր	7.7

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Ֆակուլտետներ
3. Ամբիոններ
4. Ստորաբաժանումներ
5. Մարզական կենտրոններ
6. Լաբորատորիաներ
7. Արհեստանոցներ
8. Բուժկետ
9. Գրադարան, գրապահոց, ընթերցասրահ
10. Ճաշասրահներ և բուֆետ
11. Զորանոցներ
12. Մարտավարական ուսումնական դաշտեր
13. Մարզական ավան
14. Ռազմական տեխնիկայի վարժասարքեր
15. Ուսումնական հրաձգարան
16. Նիստերի դահլիճ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

[redacted]

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ԱՊՀ՝** անկախ պետությունների համագործակցություն
2. **Գ և ԿՈԱ բաժին՝** գիտության և կրթության որակի ապահովման բաժին
3. **ԳԽ՝** գիտական խորհուրդ
4. **ԵԲԿՏ** ՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածք
5. **ԶՀՊ՝** զարգացման հեռանկարային պլան
6. **ԶՈՒ՝** զինված ուժեր
7. **ԿԳՆ** ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն
8. **ՀԱՊԿ՝** Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
9. **ՀՀ** ՝ Հայաստանի հանրապետություն
10. **ՀՇՖ՝** հրամանատարաշտաբային ֆակուլտետ
11. **ՄԿԾ** ՝ մասնագիտության կրթական ծրագիր
12. **ՄՈՒՀ՝** մասնագիտական ուսումնական հաստատություն
13. **ՆԱՏՕ՝** Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն (North Atlantic Treaty Organization)
14. **ՈԱ** ՝ որակի ապահովում
15. **ՈԱԱԿ՝** «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
16. **ՈԱՇ** ՝ որակավորումների ազգային շրջանակ
17. **ՊԴ՝** պրոֆեսորադասախոսական
18. **ՊԴԿ՝** պրոֆեսորադասախոսական կազմ
19. **ՊԻԳԲ՝** պլանավորել-իրականացնել-գնահատել-բարելավել
20. **ՊՆ՝** պաշտպանության նախարարություն
21. **ՌՀ՝** ՀՀ ՊՆ «Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան» պետական հիմնարկ
22. **ՌՈՒՀ՝** ռազմական ուսումանական հաստատություն
23. **ՈՒՕ՝** ուսումնաօժանդակ